


[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ]

ՄԵՆՈՒԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ



ՄԻԶԱԳՎԱՅԻՆ
ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մենուա Սողոմոնյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

Դասախոսություններ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2014

ՀՏԴ 327(042.4)
ԳՄԴ 66.4 ց7
Ս 694

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Սողոմոնյան Մ. Ա.

Ս 694 Միջազգային հարաբերությունների տեսություններ և վերլուծության մակարդակներ: Դասախոսություններ: -Եր., ԵՊՀ հրատ., 2014, 100 էջ:

Ժողովածուում ներկայացված են միջազգային հարաբերությունների առավել ընդունված տեսությունների՝ լիբերալիզմի, ռեալիզմի, ռադիկալիզմի և կոնստրուկտիվիզմի հիմնական դրույթները, որոնք տեսական համադրություններ են միջազգային հարաբերությունների երևույթները մեկնաբանելու համար: Ժողովածուն կարող է օժանդակել ուսանողներին «Միջազգային հարաբերությունների տեսության հիմունքներ» առարկայի տեսական գիտելիքները պրակտիկայում և հետազոտական աշխատանքներում կիրառելու հարցում:

ՀՏԴ 327(042.4)
ԳՄԴ 66.4 ց7

ISBN 978-5-8084-1913-1

© ԵՊՀ հրատարակչություն, 2014

© Մ. Սողոմոնյան, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասախոսություն 1

Միջազգային հարաբերությունների տեսությունը: Միջազգային հարաբերությունների վերլուծության մակարդակները5

Դասախոսություն 2

Միջազգային հարաբերությունների տեսություններ: Լիբերալիզմ... 12

Դասախոսություն 3

Միջազգային հարաբերությունների տեսություններ: Ռեալիզմ.....20

Դասախոսություն 4

Միջազգային հարաբերությունների տեսություններ:
Նեոլիբերալիզմ և նեոռեալիզմ.....27

Դասախոսություն 5

Միջազգային հարաբերությունների տեսություններ:
Ռադիկալիզմ33

Դասախոսություն 6

Միջազգային հարաբերությունների տեսություններ:
Կոնստրուկտիվիզմ.....40

Դասախոսություն 7

Միջազգային հարաբերությունների տեսությունները
«գործողության մեջ»: Օոցի պատերազմը՝ որպես դեպքային ուսումնասիրություն45

Դասախոսություն 8

Միջազգային համակարգը (միջազգային հարաբերությունների համակարգը)50

Դասախոսություն 9

Միջազգային հարաբերությունների վերլուծության միավորային/պետական մակարդակը..... 64

Դասախոսություն 10

Միջազգային հարաբերությունների վերլուծության ինդիվիդուալ մակարդակը.....88

Դասախոսություն 1

Միջազգային հարաբերությունների տեսությունը: Միջազգային հարաբերությունների վերլուծության մակարդակները

Առհասարակ տեսությունը երևույթների, իրողությունների վերաբերյալ ընդհանրական, վերացարկված մտակառույցների ամբողջություն է: Ցանկացած տեսություն իրենից ներկայացնում է ուսումնասիրության առարկա հանդիսացող երևույթների, գործընթացների և հարաբերությունների վերաբերյալ ուսմունքների, գիտական թեզերի, մոտեցումների ամբողջություն: Քանի որ միջազգային հարաբերությունները բարդ համակարգ է՝ բազմաբնույթ գործընթացներով ու օրինաչափություններով, ուստի միջազգային հարաբերությունների տեսությունը նույնպես պարունակում է խնդրո առարկա հարցերի շուրջ թեզեր, մոտեցումներ, համոզմունքներ:

Միջազգային հարաբերությունների տեսության մեջ տարածված և ընդունված հարացույցերն են հանդիսանում լիբերալիզմը (ավանդական իդեալիզմ, նեոլիբերալ-ինստիտուցիոնալիզմ և այլն), քաղաքական ռեալիզմը (որն իր մեջ ներառում է հիմնականում դասական ռեալիզմը և նեոռեալիզմը կամ կառուցվածքային ռեալիզմը), մարքսիզմը կամ ռադիկալիզմը (դասական մարքսիզմ և նեոմարքսիզմ), միջազգային հարաբերությունների անգլիական դպրոցը, կոնստրուկտիվիզմը և այլն: Մրանցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում միջազգային հարաբերությունների բնույթը:

Միջազգային հարաբերությունների տեսության առաջացումը սերտորեն կապված է երկու կարևորագույն հիմնախնդրի հետ. պատերազմների կանխում և խաղաղության պահպանում: Մարդկության պատմությունը լի է եղել ավերիչ, կորստաբեր պատերազմներով, որոնց առաջացումը գիտնականները կապել են մի շարք հան-

գամանքների հետ՝ մարդու էություն¹, պետության շահ, պետության քաղաքական համակարգի կառուցվածք² և այլն: Ուստի պատերազմները բացառելուն ուղղված նորմատիվ քաղաքականության մշակումն ու իրագործումը անհնար կլինի իրականացնել, եթե այդ քաղաքականության հիմքում չդրվի պատերազմի առաջացումը պայմանավորող բազմապիսի հանգամանքների խորագնին ուսումնասիրությունը:

Միջազգային հարաբերությունների բազմաբնույթ հարցերի ուսումնասիրությունը ճիշտ և նպատակահարմար է իրականացնել վերլուծության մակարդակներով, այսինքն, որևէ իրողության կամ իրադարձության պատճառները, բացատրությունները փնտրել մակրո (միջազգային համակարգ), մեզո (պետություն) և միկրո (անհատ) մակարդակներում: ԱՄՆ Քենթուքիի համալսարանի դասախոս Քերեն Մինգսթը պատերազմի առաջացման «բանալին» գտնելու հարցում առաջարկում է դիտարկել 1991թ. Պարսից ծոցի պատերազմը: Հակիրճ նկարագրելով իրադարձությունների զարգացումը³, Մինգսթը հանդես է գալիս հարցադրումներով.

¹ Ասվածի իմաստը այն է, որ ցանկացած քաղաքական կազմավորման (հիմնականում՝ պետության) կողմից պատերազմել-չպատերազմելու վճռական որոշումը ընդունում են մարդիկ, որոնց ընկալումները, արժեքները, կրթվածության մակարդակը և այլ հատկանիշներ ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Այս իմաստով պատերազմի առաջացման-չառաջացման հարցը շաղկապվում է մարդկային էության հետ, ուստի և մեծ նշանակություն է ձեռք բերում մարդու էության ուսումնասիրությունը՝ պատերազմների առաջացման կամ խաղաղության պահպանման հարցերը քննարկելիս:

² Գիտնականներից շատերը կարծում են, որ պետության քաղաքական համակարգի կառուցվածքը էական նշանակություն ունի կոնֆլիկտային հարաբերություններում, այլ կերպ ասած, օրինակ, որքան դեմոկրատական է պետության ռեժիմը, այնքան տվյալ պետությունը պատերազմելու քիչ հակվածություն է դրսևորում:

³ 1990թ. օգոստոսի 2-ին Իրաքը բռնազավթեց Քուվեյթի տարածքը, որին անմիջապես հաջորդեց ՄԱԿ-ի կողմից առևտրային էմբարգոն Իրաքի նկատմամբ, ինչին էլ հետևեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և արաբական մի շարք երկրների համատեղ պատժիչ ուժերի հավաքագրման աշխատանքը: Նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ն ընդունեց բանաձև, որով բազմազգ ուժերին իրավունք էր տալիս ուժ կիրառել Իրաքի դեմ և Քուվեյթից Իրաքի զորքերի դուրս բերման վերջնաժամկետ հայտարարեց 1991թ.

- 1) ինչո՞վ էր պայմանավորված Իրաքի ներխուժումը Քուվեյթ,
- 2) ինչու՞ Իրաքը հաշվի չնստեց միջազգային հանրության կարծիքի, քննադատության ու սպառնալիքների հետ,
- 3) ինչո՞վ էր պայմանավորված ԱՄՆ-ի գլխավորած դաշինքի վճռականությունը Իրաքին պատժելու հարցում:

Միջազգային հարաբերությունների տեսությունը նման հարցերին առաջարկում է պատասխանել տեսության դիրքերից, դեղուկ-տիվ մեթոդով: Այլ կերպ ասած, այս մասնավոր բնույթի հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է գաղափար կազմել, թե 1) առհասարակ ինչու՞ է մի պետությունը մյուսի հանդեպ տարածքային ոտնձգություն կատարում:

2) ի՞նչն է ագրեսիվ պետությանը թույլ տալիս իրականացնել իր ագրեսիան:

3) ի՞նչը կարող է կասեցնել պետության ագրեսիվ մտադրությունը: Կոնկրետ այս դեպքի առումով կարելի է ընդհանրական բնույթի, վերացարկված բացատրություններ տալ. օրինակ՝ պետության լիդերի ագրեսիվ բնավորությունը մեծացնում է այդ պետության արտաքին քաղաքականության ագրեսիվ լինելու հավանականությունը, բնական ռեսուրսներով հարուստ, բայց փոքր ու թույլ պետությունները մշտապես կանգնած են ագրեսիայի հավանականության առաջ և այլն, և այլն: Այսպիսով, մենք Իրաքի կողմից Քուվեյթի զավթման շուրջ կարող ենք ընդհանրական, տեսական բնույթի դատողություններ անել և, ըստ այդմ, կարող ենք այդ ներխուժումը բացատրել հետևյալ դատողություններով.

1. Սադդամ Հուսեյնը (Իրաքի նախագահն այդ ժամանակ) ագրեսիվ անձնավորություն էր:
2. Իրաքի իշխանությունները չէին վայելում հասարակության վստահությունը (լեզիտիմ չէին), ուստի պատերազմը դրր-

հունվարի 15-ը: Վերջնաժամկետի հաջորդ օրն իսկ՝ հունվարի 16-ին, բազմազգ ուժերը սկսում են իրականացնել «Անապատահողմ» գործողությունը: Պարտված Իրաքը փետրվարի 28-ին ստորագրում է զինադադարը:

սում հնարավորություն կտար իշխանությունների շուրջ համախմբել այդ հասարակությանը:

3. Քուլվեյթի զավթմամբ Իրաքը ձգտում է նավթի, տարածքի ու այլ ձեռքբերումների հաշվին ավելացնել իր հզորությունը՝ այն իր մշտական թշնամու՝ Իրանի դեմ հաջողությամբ գործածելու համար:
4. Իրաքի նման ավտորիտար երկրները մշտապես աչքի են ընկնում ագրեսիվ արտաքին կեցվածքով:
5. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի սպառնալիքները ի գործու չեղան ահաբեկելու Սադդամ Հուսեյնի վարչակազմին,
6. Իրաքը մեծապես զգում էր Քուլվեյթի նավթի կարիքը՝ իր պետական պարտքերը վճարելու և տնտեսությունը զարգացնելու համար:
7. Արաբական երկրների լիզան միասնականություն չդրսևորեց անդամ արաբական երկրի կողմից մյուսի զավթման կապակցությամբ:
8. Միջազգային հանրությունը տարված էր այլ խնդիրներով, կապված Սառը պատերազմի ավարտին ուղեկցող աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ, ուստի չէր կարող անհրաժեշտ ուշադրություն դարձնել մերձավորարևելյան այդ զարգացումների վրա:
9. Սադդամ Հուսեյնի խորհրդականներն ու առհասարակ շրջապատը չէր հանդգնում անկեղծորեն հուշել նրա կողմից իրագործվելիք քայլերի վտանգավոր հեռանկարի մասին:
10. Սադդամ Հուսեյնը թերահաշվարկել էր այլ երկրների, մասնավորապես, Սաուդյան Արաբիայի և ԱՄՆ-ի հնարավոր հակազդեցության չափը:

Այսպիսով, Իրաքի ներխուժման վերաբերյալ վերը բերված այս տասը հավանական պատասխանները դատողություններ են, որոնք կարելի է դասակարգել ըստ մակարդակների: Եթե հարցին պատաս-

խանութ ենք անհատի դիտանկյունից, ապա գործ ունենք միջազգային հարաբերությունների վերլուծության անհատական մակարդակի հետ (միկրո), պետության դիտանկյունից՝ պետական մակարդակի հետ (մեզո), միջազգային համակարգի դիտանկյունից՝ համակարգային մակարդակի հետ (մակրո): Այլ կերպ ասած, Իրաքի՝ Քուվեյթ ներխուժելու հարցի բանալին կարելի է փնտրել կա՛մ մարդու էության, բնույթի, կա՛մ պետության քաղաքական համակարգի, տնտեսության, ձևակերպված շահի և այլնի մեջ, կա՛մ էլ միջազգային հարաբերությունների համակարգի կառուցվածքի մեջ: Վերոհիշյալ 10 պատասխանները ստորև խմբավորված են՝ ըստ մակարդակների.

<p>Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման պատճառների ու հանգամանքների բացատրությունը՝ ըստ միջազգային հարաբերությունների վերլուծության մակարդակների</p>
<p>Անհատական մակարդակ</p> <ol style="list-style-type: none"> 1. Սադդամ Նուսեյնը (Իրաքի նախագահն այդ ժամանակ) ազրեսիվ անձնավորություն էր, 9. Սադդամ Նուսեյնի խորհրդականներն ու առհասարակ շրջապատը չէր հանդգնում անկեղծորեն հուշել նրա կողմից իրագործվելիք քայլերի վտանգավոր հեռանկարի մասին, 10. Սադդամ Նուսեյնը թերահաշվարկել էր այլ երկրների, մասնավորապես, Սաուդյան Արաբիայի և ԱՄՆ-ի հնարավոր հակազդեցության չափը:
<p>Պետական (միավորային) մակարդակ</p> <ol style="list-style-type: none"> 2. Իրաքի իշխանությունները չէին վայելում հասարակության վստահությունը (լեգիտիմ չէին), ուստի պատերազմը դրսում հնարավորություն կտար իշխանությունների շուրջ համախմբել այդ հասարակությանը: 3. Քուվեյթի զավթմամբ Իրաքը ձգտում է նավթի, տարածքի ու այլ ձեռքբերումների հաշվին ավելացնել իր հզորությունը՝ այն իր մշտական թշնամու՝ Իրանի դեմ հաջողությամբ գործածելու համար:

4. Իրաքի նման ավտորիտար երկրները մշտապես աչքի են ընկնում ազդեցիվ արտաքին կեցվածքով:
6. Իրաքը մեծապես զգում էր Քուվեյթի նավթի կարիքը՝ իր պետական պարտքերը վճարելու և տնտեսությունը զարգացնելու համար,

Միջազգային (համակարգային) մակարդակ

5. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի սպառնալիքները ի գործու չեղան ահաբեկելու Սադդամ Հուսեյնի վարչակազմին:
7. Արաբական երկրների լիզան միասնականություն չդրսևորեց անդամ արաբական երկրի կողմից մյուսի զավթման կապակցությամբ:
8. Միջազգային հանրությունը տարված էր այլ խնդիրներով՝ կապված Սառը պատերազմի ավարտին ուղեկցող աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ, ուստի չէր կարող անհրաժեշտ ուշադրություն դարձնել մերձավորարևելյան այդ զարգացումների վրա,

Թեև միջազգային հարաբերությունների տեսաբանները ընդհանուր առմամբ համամիտ են վերլուծության մակարդակների գոյության հարցում, սակայն երբեմն տարակարծիք են դրանց քանակի հարցում: Մասնավորապես, Բարրի Բուզանը գտնում է, որ համակարգային և պետական մակարդակների միջև կա ևս մեկ մակարդակ՝ տարածաշրջանայինը, այսինքն, իրողությունները պետք է բացատրել ոչ միայն համաշխարհային, այլև տարածաշրջանային հատույթի հանգամանքներով: Նա գտնում է նաև, որ անհրաժեշտ է դիտարկել մեկ մակարդակ ևս՝ ենթամիավորայինը, որը գտնվում է պետական և անհատական մակարդակների միջև. խոսքն այստեղ գնում է իրողությունները բացատրելիս ներպետական տարբեր տիպի դերակատարների վրա ֆոկուսավորման անհրաժեշտության մասին (քաղաքական կուսակցություններ, շահերի խմբեր, տնտեսվարող սուբյեկտներ և այլն):

Հանձնարարվող գրականություն

1. Karen A. Mingst, “Essentials of International Relations”, Norton&Company, NY-London, 2003, pp. 57-62
2. Juanita Ellias and Peter Sutch, “International Relations: The Basics”, Routledge, London, New York 2007, pp. 1-20
3. Chris Brown and Kirsten Ainley, “Understanding International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp.1-18
4. Scott Burchill, Andrew Linklater, Richard Devetak, Jack Donnelly, Matthew Paterson, Christian Reus-Smith and Jacqui True, “Theories of International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp. 1-28
5. www.irtheory.com
6. www.geocities.com

Դասախոսություն 2

Միջազգային հարաբերությունների տեսություններ

Լիբերալիզմ

Ինչպես արդեն նշել ենք նախորդ դասախոսության մեջ, միջազգային հարաբերությունների մասին գիտաճյուղի ի հայտ գալը բխում էր ավերիչ պատերազմների առաջացումը կանխելուն, խաղաղությունը պահպանելուն միտված միջազգային քաղաքականության գիտական, տեսական բազա ստեղծելու պահանջից: Այլ կերպ ասած, միջազգային հարաբերությունների տեսությունը կոչված է գիտական հիմնավորմամբ պետություններին և միջազգային հարաբերությունների այլ մասնակիցներին առաջարկել այն «ղեղամիջոցները», որոնց օգտագործմամբ կարելի կլինի բացառել պատերազմները կամ պահպանել խաղաղությունը: Նման «ղեղամիջոցներ» առաջարկելու համար նախ անհրաժեշտ է խորությամբ ընկալել պատերազմի պատճառը, բացահայտել, թե որտեղ են գտնվում ռազմատենչ քաղաքականության արմատները, հասկանալ, թե միջազգային հարաբերություններում ո՞ր սուբյեկտներն են առավել որոշիչ դեր խաղում (հատկապես պատերազմ սկսելու որոշում կայացնելու հարցում), որպեսզի հենց նրանց վրա սևեռվի ուսումնասիրությունների ֆոկուսը: Պատերազմի պատճառների հետ կապված նման «ախտորոշում» իրականացնելուց հետո միայն կարելի է առաջարկել «ղեղամիջոցները»:

Պատերազմի և խաղաղության հիմնահարցերին առնչվող դիտարկումներով, գիտական թեզերով, տեսակետներով ու առաջարկություններով հանդես եկած առաջին գիտական դպրոցը ***լիբերալիզմն*** է: Միջազգային հարաբերությունների լիբերալ տեսության առաջացումը մեծապես կապված է 1913-21 թթ. պաշտոնավարած ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի հետ, ով պատերազմների կանխ-

ման և խաղաղության պահպանման համար առաջարկեց այնպիսի միջոցներ, ինչպիսիք են միջազգային իրավանորմերի կատարելագործումը, հարստացումն ու տարածումը, այդ նորմերի պահպանման ու կենսագործման համար պատասխանատու միջազգային ինստիտուտների ստեղծումը, ազատ, առանց սահմանափակումների միջազգային տնտեսական հարաբերությունները և այլն:

Մինչ Վիլսոնի գաղափարների իրականացման մասին խոսելը, համառոտ ակնարկով հասկանանք, թե ինչու է այս տեսությունը լիբերալիզմ կոչվում: Միջազգային հարաբերությունների լիբերալ տեսությունը կառուցված է հասարակական երևույթների, իրողությունների ընկալման լիբերալ փիլիսոփայական մտքի հիմնադրույթների վրա: Լիբերալ փիլիսոփայությունը կյանքի տարբեր կողմերն ընկալում է ազատականության դիրքերից: Այդ մտքի տեսանկյունից բարձրագույն արժեքը մարդն է ու նրա ազատությունը, մարդը կարող է իր կարիքները լավագույնս բավարարել, շահերն առաջ տանել լիարժեք ազատական կացութաձևի, ռեժիմի պայմաններում. նման դեպքում, երբ հասարակության բոլոր անդամներն են ազատ արտահայտում իրենց կամքը, ձեռնամուխ լինում իրենց կարիքների բավարարմանը և շահերի իրացմանը, հասարակությունը դառնում է ինքնին ազատ հասարակություն, ազատությունը դառնում է այդ հասարակության համար բարձր արժեք, այդ հասարակությունում սկսում է գործել ուրիշի ազատությունը չսահմանափակելու սկզբունքը և հետևապես, սկսում է չգործել գայլային օրենքը: Լիբերալ մտքի համաձայն՝ անհատի ազատությունն ու ինքնուրույնությունը լավագույնս իրացվում և ապահովվում են դեմոկրատական ռեժիմ ունեցող պետություններում, որոնց բնորոշ է անհատի անձնական, քաղաքացիական և քաղաքական ազատությունները և ազատ, շուկայական ներքին ու արտաքին տնտեսական հարաբերությունները: Եթե նման ազատ հասարակություններում գործում է համագործակցության, փոխադարձ հարգանքի ոգին, եթե չեն գործում գայլային օրենքները, ապա նույն պատկերը կլինի նաև միջազգային

հարաբերություններում, եթե գնալով շատանան լիբերալ հասարակություններ ունեցող պետությունները: Լիբերալիզմն ընդունում է, որ դեմոկրատական երկրները միմյանց դեմ չեն պատերազմում (այս մասին կանդրադառնանք քիչ ավելի ուշ): Այսպիսով, ըստ լիբերալ տեսության՝ մարդու, համայնքի, հասարակության և պետության կողմից ազատականության արժեքի յուրացվելու և նշված սուբյեկտների կողմից այդ արժեքներին համահունչ վարքագիծ դրսևորելու հետ է կապված պատերազմների բացառումը: Ազատականության (լիբերալիզմի) արժեքների ու գաղափարների կիրառման անհրաժեշտության կանխադրույթի վրա կառուցված այս տեսությունն էլ ստացել է լիբերալիզմ կամ լիբերալ տեսություն անվանումը:

Միջազգային հարաբերությունների լիբերալ տեսության արմատները գտնվում են դեռ 17-րդ դարի մի շարք մտածողների, 18-րդ դարի լուսավորիչների, 19-րդ դարի լիբերալ փիլիսոփաների գաղափարների մեջ: Այսպիսով, 20-րդ դարի սկզբի միջազգային հարաբերությունների լիբերալ տեսության առաջին ներկայացուցիչները միջազգային կարգի (աշխարհակարգ) վերաբերյալ իրենց մտեցումները կառուցում էին նախորդ դարերի լիբերալ փիլիսոփայական մտքի շատ դրույթների վրա: Միջազգային հարաբերությունների վերաբերյալ լիբերալ մտածողության զարգացմանը նպաստած մտածողների թվում հատկանշական են Հուգո Գրոցիուսը (1583-1645), Սամուել Պուֆենդորֆը (1632-1694), Շառլ Լուի Մոնտեսքյոն (1689-1755), Իմանուիլ Կանտը (1724-1804) և այլք: Հանդիսանալով «առաջին համաեվրոպական պատերազմի»՝ 30-ամյա պատերազմի ականատեսը՝ *Գրոցիուսը* գտնում էր, որ հնարավորություն կա ստեղծել և տարածել համընդհանուր բարոյական չափանիշներ, որոնց կիրառմամբ կվերանա պետությունների կողմից իրականացվող ինքնօգնության սկզբունքի անհրաժեշտությունը⁴: Գրոցիուսը միջազգային

⁴ Միջազգային հարաբերություններում՝ համընդհանուր կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում պետությունները, իրենց գոյատևումն ապահովելու համար առաջնորդվում են ինքնօգնության (self-help) սկզբունքով՝ հույսը

իրավունքի նորմերի նախասահմանողներից էր. նրա գաղափարները հետագայում մեծապես նպաստեցին միջազգային իրավունքի նորմերի ստեղծմանը: Ինչպես Գրոցիուսը, *Պուֆենդորֆը* ևս գտնում էր, որ միջազգային հարաբերությունները հնարավոր է սոցիալականացնել⁵, դարձնել այնպիսին, ինչպիսին զարգացած հասարակությունն է երկրի ներսում: Լուսավորության շրջանի ֆրանսիացի մտածող *Շառլ Մոնտեսքյոն* գտնում էր, որ մարդկային էության մեջ ընդհանրապես դրական հատկանիշներն են գերակշռում, սակայն մարդկային գործունեությունը սկսում է պորբլեմներ ծնել այն պահից սկսած, երբ մարդիկ միավորվում են տարբեր սոցիումների՝ հասարակությունների, ազգերի մեջ: Պատերազմը, ըստ նրա, հասարակական հարաբերությունների ծնունդ է, այլ ոչ անհատ մարդու էությունից բխող երևույթ: Հասարակությունում առկա այս գայլային պրոբլեմները հաղթահարելու լավագույն միջոցը մարդկանց կրթություն տալն է: Մոնտեսքյոն միջազգային հարաբերությունների մասին իր լավատեսությունն արտահայտում է հետևյալ մտքում. «Ազգերը խաղաղության ժամանակ պետք է հնարավորինս օգտակար լինեն միմյանց, իսկ պատերազմի ժամանակ պետք է հնարավորինս քիչ վնասեն միմյանց»: Լիբերալ փիլիսոփայության նշանավոր ներկայացուցիչ *Իմանուիլ Կանտն* էլ գտնում էր, որ միջազգային հարաբերություններում առկա անիշխանությունը⁶ հաղթահարելի է պետությունների դաշնություն ստեղծելու գնով. ընդ որում պետք է պահպանել յուրաքանչյուր պետության ինքնիշխանությունը:

միայն սեփական ուժերի վրա դնելով և հետևապես սեփական հզորությունն ավելացնելու միջոցով

⁵ Միջազգային հարաբերությունների սոցիալականացումը ենթադրում է նորմերի միջոցով պետություններից ձևավորել պետությունների միջազգային հասարակություն, երբ պետությունները կսկսեն գիտակցել փոխադարձ շահերը հարգելու անհրաժեշտությունը

⁶ Խոսքն այստեղ այն մասին է, որ եթե ներպետական հարաբերություններում կա բոլորի կողմից ընդունված բարձրագույն կենտրոնական իշխանություն (պետական իշխանությունը), ապա միջազգային հարաբերություններում չկա նման իշխանություն, այնտեղ անիշխանություն է, անարխիա:

Ստեղծվելիք դաշինքը կպարտավորեցնի պետություններին ձեռնպահ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են մեկմեկու վնասել. Այսպիսով, լուրջ նախադրյալներ կստեղծվեն հարատև խաղաղության համար: Կանտը նույնպես լավատեսություն է հայտնում, որ մարդկությունն ի վերջո կգտնի պատերազմներից խուսափելու լավագույն ուղիները, ինչը թեկուզև հեշտ գործ չէ: *Վուլդրո Վիլսոնը*, զարգացնելով Կանտի գաղափարները, գտնում էր, որ միայն դեմոկրատական պետությունները կարող են մասնակցել միջազգային նման հասարակության ձևավորմանը, որ դեմոկրատիաները խաղաղասեր են. ցանկացած պատերազմ չի բխում նրանց շահերից: Վիլսոնը գտնում էր, որ եթե 1914 թ. դրությամբ պատերազմի մեջ մտած բոլոր պետությունները լինեին դեմոկրատիաներ, ապա պատերազմն ինքնին չէր ծագի:

19-րդ դարի լիբերալիզմը, իր մեջ կրելով 18-րդ դարի լուսավորական ռացիոնալիզմի գաղափարները⁷, սահմանեց դրոյթներ այն մասին, որ հասարակական հարաբերություններում արիստոկրատիան պետք է փոխարինվի դեմոկրատիայով, իսկ առևտրային պետական հովանավորչական քաղաքականությունը՝ արտաքին ազատ առևտրային հարաբերություններով:

Աշխարհում հարատև խաղաղության հասնելու հարցում լիբերալների ունեցած լավատեսության հիմքում նրանց կանխադրույթն է առ այն, որ մարդկային էության մեջ գերակայում են դրական հատկանիշները. խաղաղասիրություն, հարգանք, բարիություն և այլն: Այս հանգամանքը, ըստ նրանց, հնարավորություն է ընձեռում մարդկանց զարգացնել, բարելավել իրենց կացութաձևը, ունենալ առավել խաղաղ ու բարեկեցիկ պետություն, հասարակական հարաբերություններ և արդյունքում ստեղծել խաղաղ ու բարեկեցիկ միջազգային հարաբերություններ: Եթե արդար, խաղաղ հասարակություն, հասարակական ու քաղաքական կարգեր կառուցելու հա-

⁷ Խոսքն այն դրոյթի մասին է, որ մարդը ռացիոնալ, բանական էակ է:

մար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ոք օժտված լինի ռացիոնալիզմով և իրեն հանձնառու, պատասխանատու զգա նշված նպատակին հասնելու համար, ապա այդ նպատակին հասնելն անխուսափելի կլինի, նույնկերպ և անխուսափելի կլինի խաղաղ, արդար միջազգային հարաբերությունների կարգերի կառուցումը: Վուդրո Վիլսոնը ԱՄՆ-ը ներքաշեց 1-ին համաշխարհային պատերազմի մեջ այն համոզմամբ, որ պատերազմի համար մեղավոր պետությունները կպատժվեն, ինչից հետո կարելի կլինի ստեղծել կայուն և ուժեղ միջազգային կազմակերպություն, որը կոչված կլինի պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: Այս խնդրի լուծումը նա տեսնում էր ազգային պետությունների ընկերակցության ստեղծման մեջ: Այդ ընկերակցության անդամ պետությունները պետք է փոխադարձ երաշխիքներ տային միմյանց տարածքային ամբողջականությունը հարգելու և քաղաքական ու տնտեսական անկախությանը վնասող ցանկացած քայլից ձեռնպահ մնալու հարցում: Վիլսոնյան այս նկատառումները շուտով մարմնավորվեցին նոր ստեղծված միջազգային կառույցի՝ Ազգերի լիգայի կանոնադրության մեջ:

Ինչ վերաբերում է Առաջին աշխարհամարտի ավարտն ազդարարած վերսայան պայմանագրի՝ խաղաղության հետագա պահպանման տեսակետից արդյունավետությանը, պետք է նկատել, որ պայմանագրի կնքմանը Ֆրանսիայի մարշալ Ֆոշն արձագանքել է հետևյալ կերպ. «Մա ոչ թե խաղաղություն է, այլ հրադադար քսան տարով»: Հատկանշական է, որ Ֆոշը ոչ միայն ճիշտ է գուշակել պայմանագրով ստեղծված խաղաղության անփառունակ վախճանը, այլև այդ վախճանի ժամկետը. բանն այն է, որ արդեն իսկ նշմարելի էր, որ խաղաղության պայմանագիրը ստորագրած, Ազգերի լիգայի մեջ մտած բոլոր պետությունները իրենց հանձնառու չէին զգում միջազգային խաղաղության պահպանման, փոխադարձ շահերը ընկալելու, տեսակետները հաշվի առնելու հարցում. յուրաքանչյուր պետություն իր շահը տեսնում էր խիստ կարճաժամկետ հեռանկա-

րում, խիստ առարկայորեն, այսպես ասած «գալլային օրենքը» շարունակում էր գործել: Այդ իսկ պատճառով, երբ 1939թ. բռնկվեց նոր՝ ավելի ահարկու 2-րդ աշխարհամարտը, երբ խաղաղապահական գործիք Ազգերի լիգան սնանկ դուրս եկավ իր առաքելությունը իրացնելու հարցում, միջազգային հարաբերությունների լիբերալ տեսությունը սկսեց լուրջ, կործանարար քննադատության արժանանալ. չէ՞ որ այս տեսության դրույթների կենսագործման արդյունքում էր ստեղծվել Ազգերի լիգան: Լիբերալիզմը որակվեց որպես *խղճալիզմ*:

Պետք է նշել, սակայն, որ չնայած քննադատությունների տարափին, 20-րդ դարասկզբի լիբերալ մտածողներն իրավամբ հանդիսանում են միջազգային հարաբերությունների տեսության՝ որպես առանձին գիտակարգի (դիսցիպլին) հիմնադիրները: Ինչպես կտեսնենք, հետագայում՝ հատկապես Սառը պատերազմի ավարտից հետո, լիբերալիզմը վերագտավ իր դիրքերը աշխարհակարգի մասին գիտականապես հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու առումով:

Հանձնարարվող գրականություն

1. Robert Garner, Peter Ferdinand & Stephanie Lawson, Introduction to politics, Oxford University Press, 2009, pp. 346-49
2. Juanita Ellias and Peter Sutch, “International Relations: The Basics”, Routledge, London, New York 2007, pp. 64-72
3. Chris Brown and Kirsten Ainley, “Understanding International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp.20-24
4. Scott Burchill, Andrew Linklater, Richard Devetak, Jack Donnelly, Matthew Paterson, Christian Reus-Smith and Jacqui True, “Theories of International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp. 55-83
5. Ole Holsti, Theories of International Relations, Essay, pp. 11-16
6. Cynthia Weber, International Relations Theory: A Critical Introduction, 2nd edition, Routledge, NY-London, 2005, pp. 37-58

7. А. П. Цыганков, “Теория международных отношений”, М., “Гардарики”, 2007, стр. 106-109
8. www.irtheory.com
9. www.geocities.com

Դասախոսություն 3

Միջազգային հարաբերությունների տեսություններ

Ռեալիզմ

Ինչպես տեսանք, լիբերալ մտածողության և տեսության հիման վրա մշակված և իրագործված միջազգային քաղաքականությունը ոչ միայն չսովեց սպասված արդյունքը խաղաղության հարատևման հարցում, այլև, հաշվի առնելով 2-րդ աշխարհամարտի՝ իր դաժան դրսևորումներով առաջինին քանիցս գերազանցելու հանգամանքը, պարզ դարձավ, որ պատերազմի կանխարգելման ու խաղաղության հարատևման վերաբերյալ լիբերալ դրույթներն ավելի քան ժամանակավրեպ էին:

Խաղաղության հարատևման օգտին հանդես եկող լիբերալ դրույթները՝ մարդու խաղաղասեր էության, դեմոկրատական երկրրների խաղաղասիրության, միջազգային իրավական ու սովորութային խաղաղաստեղծ նորմերի, միջազգային խաղաղասպահական կառույցների ստեղծման մասին, որքան էլ անթերի ու համոզիչ ձևակերպված էին և պայծառ ապագա էին խոստանում, այդուհանդերձ կտրված էին այն ժամանակի միջազգային հարաբերություններում առկա իրականությունից, չէին արտահայտում ժամանակի միջազգային հարաբերությունների ոգին: Իրականությունից կտրված լինելու պատճառով լիբերալիզմն իդեալիզմ հորջորջած ուղղության ներկայացուցիչներն իրենց համարում էին ռեալիստներ, քանզի, ըստ նրանց, խաղաղության պահպանման հարցում իրենց տեսակետները կառուցում են ոչ թե «ինչպիսին պիտի լինի աշխարհը», այլ «ինչպիսին է իրականում աշխարհը» կանխադրույթի վրա: Խաղաղության ապահովումը, ըստ ռեալիստների, պետք է իրականացնել միմիայն առկա, ձեռքի տակ եղած հնարավորություններն օգտագործելով. խաղաղության համար պետք է ապավինել ոչ թե բարոյական

արժեքներով հազեցած նորմերին, այլ պետության հզորությանը, հզորացմանը, ուժային հավասարակշռությանը և այլն:

Ռեալիստական մտածողության մեջ կենտրոնական դիրք է զբաղեցնում *պետական/ազգային շահի*⁸ գաղափարը, որը, ըստ նրանց, միջազգային հարաբերությունների գլխավոր շարժիչ ուժն է, պետության վարքագծի գլխավոր որոշիչ գործոնը (դետերմինանտ): Ավանդաբար տարածված կանխադրույթ է, որ քաղաքական ռեալիզմը օտարված է բարոյական նորմերից: Ըստ ռեալիզմի ուղղության հիմնադիրներից մեկի՝ *Հանս Մորգենթաուի* (1904-1980), բարոյականության մասին պետք է դատել ոչ թե հաշվի առնելով պետության վարքագիծը, դրա հիմքում եղած դրդապատճառները, մոտիվը, այլ հաշվի առնելով այդ վարքագծի արդյունքը, թե որքան է այդ արդյունքը իրացնում պետության շահը: Բարոյականության գլխավոր չափորոշիչն ազգային շահի իրացումն է, անկախ նրանից, թե այդ շահի իրացումն ինչպես և ինչքան կվնասի այլ պետությանը, ազգին:

Ռեալիստական մտածողությունում *ազգային շահն ընկալվում է իշխանության իմաստով*, որտեղ իշխանությունը (power) ընդունվում է որպես մի սուբյեկտի կողմից մյուսի վարքագիծը վերահսկելու, իրեն ցանկալի հունով ուղղորդելու կարողություն: Այս իմաստով իշխանությունը պետության անվտանգության ապահովման գլխավոր ռեսուրսն է. եթե մի սուբյեկտը կարողանում է վերահսկել իր իրական կամ հավանական հակառակորդի վարքագիծը, ուրեմն այդ ախտյանի կողմից կարող է իրեն հանգիստ, անվտանգ զգալ: Իսկ վարքագծի վերահսկում կարող է կատարվել միայն ուժի, հզորության, դրանց շարունակ ավելացման միջոցով:

Ըստ ռեալիստների՝ միջազգային հարաբերությունները բնութագրվում են *անիշխանությամբ*, անարխիայով, այսինքն՝ միջազգային ասպարեզում կենտրոնական իշխանության բացակայու-

⁸ Արևմտյան քաղաքագիտական միջոցը նույնացնում է ազգային շահն ու պետական շահը: Ազգն այստեղ բնութագրվում է ոչ այնքան որպես էթնիկական ընդհանրություն, այլ որպես պետության քաղաքացիների, հպատակների ամբողջություն:

թյամբ (այնպիսի իշխանության, ինչպիսին կա ներպետական ասպարեզում, պետական իշխանությունը, որը կարգավորում, կանոնակարգում է ներպետական բոլոր սուբյեկտների, դերակատարների միջև փոխհարաբերությունները և ունի նրանց նկատմամբ հարկադրանք կիրառելու օրինական իրավասություն): Այսպիսով, միջազգային հարաբերություններում գոյություն ունեցող հենց այդ անիշխանությունն է ստիպում, որ պետությունները սեփական գոյության, անվտանգության ապահովման համար ապավինեն ուժին, հզորությանը, առավել որոշակի՝ այդ հզորության ռազմաքաղաքական բաղադրիչին: Սեփական գոյությունը երաշխավորելու միակ միջոցը, ըստ ռեալիստների, ***ինքնօգնությունն է (self-help)***:

Եթե հաշվի ենք առնում, որ բոլոր պետություններն էլ ուզում են գոյատևել և դրա համար դիմում են ինքնօգնության սկզբունքին, հետևապես միջազգային հարաբերությունների ***գլխավոր գործընթացը պետք է համարել կոնֆլիկտը***: Ըստ Մորգենթաուի, եթե ներպետական քաղաքականությունը հանդիսանում է պայքար իշխանության համար քաղաքական ուժերի միջև, ապա միջազգային քաղաքականությունը պայքար է իշխանության համար պետությունների միջև: Հատկանշական է, որ եթե ներպետական քաղաքական հարաբերություններում իշխանության համար պայքարն առավել քիչ կարող է բռնության հակվածություն ցուցաբերել (քանզի առկա է այդ քաղաքական հարաբերությունները կանոնակարգող ինստիտուտը՝ պետությունը), ապա միջազգային հարաբերություններում իշխանության համար պայքարում կոնֆլիկտը գրեթե անխուսափելի է: Մեկ անգամ ևս նշենք, որ ըստ ռեալիստների՝ կոնֆլիկտը միջազգային հարաբերությունների կենտրոնական գործընթացն է, մինչդեռ համագործակցությունը, որպես գործընթաց, ռեալիստների կողմից իմաստավորվում է զուտ նրանով, որ մի պետության հետ համագործակցությունը ծառայեցվում է մեկ այլ պետության հետ կոնֆլիկտային հարաբերություններում վերջինիս հանդեպ իշխանության հասնելու նպատակին:

Հնարավոր կոնֆլիկտներում հաղթող դուրս գալու համար պետությունը մշտապես մեծացնում է իր հզորության ռեսուրսները, ավելացնում է իր հզորությունը, ինչը տրամաբանորեն նշանակում է մյուս պետության՝ դրանով իսկ անվտանգության մակարդակի իջեցում: Վերջինս, զգալով դա, նույնպես ձեռնամուխ է լինում իր հզորության ավելացմամբ հավանական հակառակորդի հանդեպ իշխանության հասնելուն. այսպիսով պետությունները կանգնում են **անվտանգության դիլեմայի** առջև, որի գլխավոր արտահայտությունը սպառազինությունների մրցավազքն է:

Միջազգային հարաբերություններում պատերազմների պատճառների բացահայտման խնդրի համատեքստում կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե որո՞նք են **միջազգային հարաբերությունների սկզբնական դերակատարները**, ու՞մ վարքագծի մեջ պետք է փնտրել կոնֆլիկտի արմատները: Այս առումով ռեալիզմը գտնում է, որ ուսումնասիրությունները պետք է ֆոկուսավորվեն պետությունների վրա. հենց նրանք են միջազգային հարաբերությունների սկզբնական և իրական դերակատարները: Մյուս դերակատարները (օրինակ՝ միջազգային կազմակերպությունները) սկզբնական ու իրական դերակատարներ չեն, նրանք ածանցվում են պետություններից, ու թեև միջազգային ասպարեզում հանդես են գալիս որոշակի վարքագծով, այդուհանդերձ, այդ վարքագծի հիմքում պետությունների շահերն են ընկած: Ընդամին, դասական ռեալիզմը ոչ բոլոր պետություններին է համարում սկզբնական դերակատար, այլ միայն հզորներին, ովքեր կարող են իշխանություն հաստատել այլոց հանդեպ, ներազդել միջազգային համակարգի վրա, անհրաժեշտության դեպքում փոփոխել այն: Ըստ ռեալիստների՝ մեծ կամ հզոր պետություններն անում են այն, ինչ ուզում և կարող են, թույլ կամ փոքր պետություններն անում են այն, ինչ նրանց թույլ են տալիս անել հզոր պետությունները:

Ռեալիզմը պետությանը համարում է **ունիտար դերակատար**: Խոսքն այն մասին է, որ պետական իշխանությունն ունակ է ընդու-

նել և ընդունում է քաղաքական որոշումներ ներպետական բոլոր սուբյեկտների համար և նրանց անունից, պատկերավոր ասած՝ «պետությունը խոսում և գործում է մեկ ձայնով, միաձայն»։ Պետական կոնկրետ քաղաքականությունն իրականացնող մարմինը կամ անհատը, անկախ իր համոզմունքներից տվյալ քաղաքականության հարցում, իրականացնում է պետության իշխանության ընդունած քաղաքական որոշման պահանջները։ Ի հակադրություն ռեալիզմի, լիբերալիզմը պետությանը չի համարում ունիտար դերակատար։ Պետության միջազգային քաղաքականությունը, ըստ նրանց, հանդիսանում է այդ պետության բյուրոկրատիայի, առանձին իշխանական կառույցների, քաղաքական կուսակցությունների, այլ խմբերի ու անհատների շահերի պայքարի ու համաձայնեցման խտացված արտահայտություն։

Ռեալիզմի մյուս կարևոր դրույթը վերաբերում է պետության՝ ***ռացիոնալ դերակատար լինելու համոզմունքին***։ Պետության անունից հանդես եկող, որոշում կայացնող անհատները գործում են ռացիոնալիզմի սկզբունքով, ինչը ենթադրում է որոշումների կայացման հարցում հնարավոր օգուտների և վնասների կշռադատում՝ վերջնական նպատակ ունենալով պետական շահի իրացումը։ Ըստ հին հույն պատմիչ Թուկիդիդեսի՝ հնարավոր է, որ ռացիոնալ որոշում կայացնելուն խոչընդոտող հանգամանք լինի դեպի ցանկալի արդյունքը միտված մտածողությունը (այլ ոչ դեպի իրականությունը միտված), երբ որոշ լիդերների որոշումների հիմքում կլինի ցանկալի արդյունքին հասնելու մտադրությունը, այլ ոչ պետության օբյեկտիվ շահի ընկալումը։ Սակայն այս հանգամանքը ևս չի կարող լիդերների վարքագիծը բնորոշել որպես ոչ ռացիոնալ. կարևորն այն է, որ որոշման կայացման հիմքում պետական շահն է. պարզապես այստեղ խնդիրը շահի արդյունավետ և ոչ արդյունավետ ձևակերպելու մեջ է։ Լիբերալիզմը գտնում է, որ պետությունը ռացիոնալ դերակատար չէ, որ պետության կողմից ընդունված որոշման հիմքում ներ-

պետական մեկ կամ ավելի ակտորների շահերն են, հենց այդ շահերն են ներկայացվում, հրամցվում որպես պետական շահ:

Ընդունված մոտեցում է, որ ռեալիզմի արմատները գտնվում են հին, միջին և նոր շրջանի մի շարք հայտնի մտածողների գաղափարական դրույթների մեջ: Այս տեսանկյունից ռեալիզմի նախահայր է համարվում հին հույն մտածող, պատմիչ *Թուկիդդեսը*, որն իր Պելոպոնեսյան պատերազմների պատմության մեջ արծարծում է պետության՝ ռացիոնալիզմով օժտված լինելու, շահն ամեն ինչից վեր դասելու վերաբերյալ տեսակետներ: Ռեալիստական տեսության հետագա ձևավորման առումով կարևոր հիմք է հանդիսացել նաև 4-5-րդ դարերի մտածող *Օգոստինոս Երանելու* գաղափարները, որոնցում նա մարդու էությունը համարում է ազահ, ժլատ, եսասեր և պատերազմների առաջացումը սերտորեն շաղկապում է մարդու այդ բացասական էությունների հատկանիշների հետ: 15-16-րդ դարերի գործիչ, մտածող *Նիկոլո Մաքիավելլիի* «Տիրակալը» աշխատանքը ևս գերազանցապես բովանդակում է պետության շահն ամենամեծ արժեքը համարելու և այն իրացնելու համար ոչ մի բարոյական նկատառման առջև կանգ չառնելու մոտեցումը: Իր հովանավոր, Ֆլորենցիայի տիրակալ Լորենցո Հրաշագեղին Մաքիավելլին խորհուրդ է տալիս «լինել առյուծ գայլին հաղթելու համար» և «օձ՝ խորամանկությամբ աղվեսին հաղթելու համար»: Ջորեդ հակառակորդին դիմակայելու համար Մաքիավելլին առաջարկում է դաշինքներ կազմել, մատնանշում պաշտպանական և հարձակողական որոշ ռազմավարություններ: Միջազգային հարաբերությունների անարխիկ բնույթի և որպես դրա հետևանք՝ ինքնօգնության սկզբունքով առաջնորդվելու ռեալիստական հանրահայտ դրույթի հիմքում էլ ընկած են 17-րդ դարի անգլիացի մտածող *Թոմաս Հոբսի* գաղափարները:

Ինչ վերաբերում է միջազգային հարաբերությունների բնույթի հետագա բարելավման, միջազգային հարաբերությունների ապագայի հարցին, ապա այստեղ ռեալիստները գտնում են, որ այնքան

Ժամանակ, որքան գոյություն կունենան պետությունները, միջազգային հարաբերությունների բնույթը կշարունակվի մնալ անարխիկ: Պետությունը մշտապես առաջնորդվելու է սեփական շահերով: Այլ կերպ ասած, քաղաքական ռեալիզմի տեսաբանների համոզմամբ, հնարավոր է փոփոխել ուժերի փոխդասավորությունը, մեղմել միջազգային անարխիայի հետևանքները, ձևավորել առավել կայուն և անվտանգ միջազգային հարաբերություններ, բայց միջազգային հարաբերությունների բնույթն անհնար է փոփոխել: Նման ենթադրությունը հիմնված է դասական ռեալիզմի տեսության կողմից առաջ քաշված այն համոզմունքի վրա, որ պետության վարքագիծը բխում է մարդու էգոիստական էությունից:

Հանձնարարվող գրականություն

1. Robert Garner, Peter Ferdinand & Stephanie Lawson, Introduction to politics, Oxford University Press, 2009, pp. 349-54
2. Juanita Ellias and Peter Sutch, “International Relations: The Basics”, Routledge, London, New York 2007, pp. 41-49, 54-62
3. Chris Brown and Kirsten Ainley, “Understanding International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp.24-28
4. Scott Burchill, Andrew Linklater, Richard Devetak, Jack Donnely, Matthew Paterson, Christian Reus-Smith and Jacqui True, “Theories of International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp. 29-54
5. Ole Holsti, Theories of International Relations, Essay, pp. 3-11
6. Cynthia Weber, International Relations Theory: A Critical Introduction, 2nd edition, Routledge, NY-London, 2005, pp. 13-36
7. А. П. Цыганков, “Теория международных отношений”, М., “Гардарики”, 2007, стр. 106-109
8. www.irththeory.com
9. www.geocities.com

Դասախոսություն 4

Միջազգային հարաբերությունների տեսություններ

Նեոլիբերալիզմ և նեոռեալիզմ

Նեոլիբերալիզմ

Ինչպես գիտենք, Երկրորդ աշխարհամարտի փաստը ծանր հարված հասցրեց միջազգային հարաբերությունների լիբերալ տեսությանը: Լիբերալիզմը նահանջեց իր դիրքերից:

1970-ականներից ի վեր լիբերալիզմի տեսության մեջ վերափոխումներ սկսեցին տեղի ունենալ, ինչի արդյունքում ի հայտ եկավ *Նեոլիբերալիզմի* ուղղությունը: Նեոլիբերալները, ինչպես օրինակ՝ *Ռոբերտ Աքսելրոդն ու Ռոբերտ Կոհենյնը* հարցադրում էին անում առ այն, թե ինչու են պետությունները նախընտրում համագործակցել միջազգային անարխիի համակարգի պայմաններում: Հարցադրման պատասխանը նրանք առաջարկում են գտնել *բանտարկյալների դիլեմայի* տեսության մեջ: Բանտարկյալների դիլեմայի բովանդակությունը հակիրճ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: Երկու բանտարկյալների առանձին-առանձին հարցաքննում են կատարված հանցանքի կապակցությամբ: Հարցաքննության պայմանն այն է, որ եթե բանտարկյալներից մեկը խոստովանի, լռողը կդատապարտվի երկարաժամկետ ազատազրկման: Եթե երկուսն էլ խոստովանեն, երկուսն էլ կդատապարտվեն միջնաժամկետ ազատազրկման: Եթե երկուսն էլ լռեն, կդատապարտվեն կարճաժամկետ ազատազրկման: Թե ինչ վարքագիծ կարող են դրսևորել բանտարկյալները, կարելի է դատել հետևյալ մտայնությունից ելնելով. **Ա** բանտարկյալը անպայման կմտածի, որ **Բ**-ն կտարվի ազատ արձակվելու գայթակղությամբ և կխոստովանի, ուստի **Ա**-ն նույնպես հակվածություն կդրսևորի խոստովանելու: Եթե **Ա**-ն չխոստովանի, ապա շատ թանկ կվճարի **Բ**-ի խոստովանելու դեպքում: Այսպիսով, ամենահավանականը և

ռացիոնալն այն է, որ 2-ն էլ կլիտստովանեն և դրանով իսկ կդատապարտվեն միջնաժամկետ ազատագրկման (մրցակցային, կոնֆլիկտային վարքագծի դրսևորում): Սակայն, եթե բանտարկյալները երկրորդ անգամ հայտնվեն նույն իրավիճակում, հավանականը և ռացիոնալն այն է, որ երկուսն էլ կլռեն (դրանով նրանք ցուցաբերում են համագործակցային վարքագիծ): Հատկանշական է, որ յուրաքանչյուր բանտարկյալ իր վարքագծի վերաբերյալ որոշում ընդունելիս անպայմանորեն հաշվի է առնում մյուս բանտարկյալի որոշման հավանականությունը: Փաստորեն, նեոլիբերալիզմը գտնում է, որ համագործակցությունը բխում է ոչ թե դերակատարների բնույթից (ինչպես պնդում էին դասական լիբերալները), այլ նրանց շահերից: Իհարկե, պետությունները մի անգամ չէ, որ հայտնվում են համագործակցություն-կոնֆլիկտ այլընտրանքի առաջ, քանի որ նրանց հարաբերությունները կրում են շարունակական բնույթ, ուստի և նման իրավիճակներում երկու պետությունները հայտնվում են շարունակաբար:

Թե՛ լիբերալները, թե՛ նեոլիբերալները համագործակցությունը համարում են միջազգային հարաբերությունների առաջնային գործընթաց: Սակայն հարցին, թե ինչու են դերակատարները համագործակցում, տարբեր պատասխաններ են առաջադրվում: Ըստ դասական լիբերալների՝ համագործակցությունը կայանում է այն պատճառով, որ համագործակցության մղումը բխում է մարդու էությունից (ինչն էլ իր տեղն է գտնում պետության վարքագծի մեջ) և որ համագործակցությունն արդյունքն է ինստիտուտների բարեփոխման: Նեոլիբերալների պնդմամբ, համագործակցությունը տեղի է ունենում, քանզի միմյանց հետ շարունակաբար փոխհարաբերվող, փոխազդող դերակատարների շահերից է բխում համագործակցելը:

Նեոլիբերալները կարևորագույն նշանակություն են տալիս անվտանգության խնդրին. Ինստիտուտները, ըստ նրանց, նպաստում են անվտանգության կայացմանը:

Սառը պատերազմից հետո լիբերալիզմի դիրքերն ամրապնդվեցին: Լիբերալ տեսաբանները հանդես էին գալիս փաստարկներով առ այն, որ Սառը պատերազմի ավարտը նպաստում է լիբերալ-դեմոկրատիայի հաղթարշավին: *Ֆրենսիս Ֆուկույաման* իր «Պատմության ավա՞րտ» հոդվածում գրում էր, որ քանզի լիբերալ-դեմոկրատիան կառավարման ամենակատարյալ ձևն է, որ լիբերալ-դեմոկրատիան հաղթանակում է, ուստի լիբերալիզմն այլընտրանք այլևս չունի: Առհասարակ, հիմնվելով այն կանխադրույթի վրա, որ ժողովրդավարությունները միմյանց դեմ չեն պատերազմում, լիբերալ տեսաբանները պնդում էին, որ Սառը պատերազմի ավարտից հետո գլոբալ խաղաղության համար անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել:

Նեոռեալիզմ

Միջազգային հարաբերությունների գիտաճյուղի մեջ նեոռեալիզմի ուղղության առաջացումը կապված է *Քեննեթ Ուոլցի (Kenneth Waltz)* «Միջազգային քաղաքականության տեսությունը» (“Theory of international politics”) աշխատության լույս տեսնելու հետ (1979 թ.): Ինքը՝ «Նեոռեալիզմ» տերմինն արտացոլում է ամերիկյան մի շարք գիտնականների ձգտումը՝ պահպանել դասական ռեալիզմի կարեվոր հիմնադրույթները և միաժամանակ թարմացնել ու հարստացնել ռեալիստական տեսությունը՝ հաշվի առնելով միջազգային հարաբերություններում առկա նոր իրողություններն ու այլ տեսությունների ձեռքբերումները:

Ուոլցը գտնում էր, որ տեսական ընդհանրացումներ անելիս անհրաժեշտ է հիմքում դնել ոչ թե առանձին պետությունների վարքագիծը, այլ միջազգային համակարգը: Համաշխարհային քաղաքականությունը ոչ թե պետությունների արտաքին քաղաքականությունների պարզ հանրագումարն է, այլ միջազգային համակարգի տրամաբանությունից բխող համալիր քաղաքականություն: Ուոլցը քննադատում էր Մորգենթաուին այն բանի համար, որ նա պետու-

թյան ներքին և արտաքին քաղաքականությունները որպես ամբողջություն չէր դիտարկում, օտարում էր միմյանցից: Իսկ Ռեյմոն Արոնին քննադատում էր միջազգային հարաբերությունների ավտոնոմ, ինքնուրույն տեսություն կառուցելու հնարավորության հանդեպ սկեպտիկ կեցվածք դրսևորելու համար:

Նեոռեալիզմը նախ և առաջ միջազգային քաղաքականությունը միջազգային հարաբերությունների համալիրից անջատ է դիտարկում. միջազգային քաղաքականությունը առանձին երևույթ է համարում. միջազգային հարաբերությունների քաղաքական ոլորտը առանձնացվում է մյուս ոլորտներից (տնտեսական, մշակութային և այլն), ուսումնասիրման առանձին ոլորտ է դառնում: Նեոռեալիզմը դասական ուղղությունից տարբերվում է նրանով, որ միջազգային քաղաքականությունը դիտարկում է որպես ամբողջական համակարգ, որը գործառնում է որոշակի օրենքների համաձայն: Դեռևս 1959 թ. լույս տեսած իր «Մարդը, պետությունը և պատերազմը» (“Man, The State and War”) աշխատության մեջ Ուոլցը գալիս է այն եզրահանգման, որ կախված այն բանից, թե հետազոտողները կոնֆլիկտների որ պատճառներն են համարում էական, միջազգային հարաբերությունների և մասնավորապես զինված կոնֆլիկտների վերաբերյալ ուսումնասիրությունները կարելի է բաժանել 3 խմբերի: Հետազոտությունների 1-ին խումբը կոնֆլիկտների պատճառները, էությունը ուսումնասիրելիս կենտրոնանում է մարդու բնության վրա, նրա ֆիզիոլոգիական և բարոյական որակների վրա (էգոիստական էություն, ագրեսիվ իմպուլսներ, ինտելեկտի ոչ բավարար վիճակ և այլն). այսինքն այդ կոնֆլիկտների պատճառները կապում է մարդածին (անթրոպոգեն) գործոնների հետ: 2-րդ խումբը կոնֆլիկտների պատճառները կապում է պետության ներքին բնույթի և ստրիկուտների հետ (տոտալիտար կամ դեմոկրատական ռեժիմ, տնտեսավարման շուկայական կամ վարչափրամայական կարգ և այլն): Իսկ 3-րդ խումբը կոնֆլիկտներին համակարգային բնույթ է վերագրում, այսինքն, կոնֆլիկտների պատճառները փնտրում է համակարգի կառուցվածքում:

Ըստ Ուոլցի՝ միջազգային հարաբերությունների վերլուծության առաջին երկու մոտեցումները թեև օգտակար են, բայց միայն այդ երկուսի կիրառմամբ անհնար է բացահայտել միջազգային կոնֆլիկտների խորքային պատճառները: Այս կապակցությամբ միայն երրորդ՝ համակարգային մոտեցումը կարող է արդյունավետ լինել: Միջազգային հարաբերությունների համակարգային բնույթը բխում է ոչ թե պետությունը բնութագրող յուրահատկություններից (տարածք, աշխարհագրական դիրք, ժողովրդական ներուժ, սոցիալ-մշակութային յուրատիպություն), թեև նման յուրահատկությունների նշանակությունը չի կարելի անտեսել, այլ միջազգային համակարգի կառուցվածքի բնութագրիչներից: Միջազգային համակարգի կառուցվածքը, հանդիսանալով միջազգային դերակատարների փոխազդեցությունների, փոխհարաբերությունների հետևանք, իրենից ներկայացնում է ուրույն ֆենոմեն (երևույթ): Կառուցվածքն ինքն է թելադրում պետություններին այս կամ այն վարքագիծը դրսևորել: Կառուցվածքն է սահմանագծում, սահմանափակում պետության վարքագիծը, կամ, ընդհակառակը, միջազգային ասպարեզում պետության գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծում: Միջազգային համակարգի հենց կառուցվածքային յուրահատկություններով է բացատրվում այն, որ պետությունների արտաքին քաղաքական գործունեության ոլորտում նպատակներն ու արդյունքները հաճախ չեն համապատասխանում:

Հարցին, թե ինչու տարբեր քաղաքական համակարգեր ունեցող և տարբեր քաղաքական գաղափարախոսություններ դավանող պետությունները համանման վարքագիծ են դրսևորում միջազգային նմանատիպ իրադրություններում, Ուոլցը պատասխանում է, որ պատճառը պետք է փնտրել համակարգի կառուցվածքի մեջ. սովյալ պարագայում այդ կառուցվածքը դիտվում է որպես պայմանների և սահմանափակումների ամբողջություն, որը հարկադրանքի էֆեկտով ստիպում է պետությանը դրսևորել այս կամ այն վարքագիծը: Այդ պատճառով պետության միջազգային քաղաքականության ճիշտ

հասկանալը, միջազգային քաղաքականության ճիշտ կանխատեսումը, պլանավորումը կախված են նշված պայմանների ճիշտ գիտակցումից: Համակարգի կառուցվածքը բնութագրվում է առաջին հերթին միջազգային հարաբերությունների անարխիկ բնույթով և երկրորդ հերթին՝ պետությունների միջև ուժային հարաբերակցություններով: Պետության հզորությունն է որոշում նրա տեղն ու դերը համակարգում:

Ուժային հավասարակշռության սկզբունքը ինչպես դասական ռեալիզմի, այնպես էլ նեոռեալիզմի առանցքային սկզբունքն է: Բայց ի տարբերություն դասական ռեալիստների, նեոռեալիստները պնդում են, որ միջազգային համակարգի կառուցվածքն է պայմանավորում ուժային հավասարակշռությունը պետությունների միջև:

Հանձնարարվող գրականություն

1. Robert Garner, Peter Ferdinand & Stephanie Lawson, Introduction to politics, Oxford University Press, 2009, pp. 359-64
2. Juanita Ellias and Peter Sutch, “International Relations: The Basics”, Routledge, London, New York 2007, pp. 49-53, 72-75
3. Chris Brown and Kirsten Ainley, “Understanding International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp.40-48
4. Scott Burchill, Andrew Linklater, Richard Devetak, Jack Donnely, Matthew Paterson, Christian Reus-Smith and Jacqui True, “Theories of International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp. 29-54, 64-83, 84-109,
5. John Mearsheimer, Structural Realism, in Dunne’s textbook chapter 4, Oxford, 2007, pp. 71-88
6. Ole Holsti, Theories of International Relations, Essay, pp. 3-16
7. Cynthia Weber, International Relations Theory: A Critical Introduction, 2nd edition, Routledge, NY-London, 2005, pp. 13-58
8. А. П. Цыганков, “Теория международных отношений”, М., “Гардарики”, 2007, стр. 126-140
9. www.irtheory.com
10. www.geocities.com

Դասախոսություն 5

Միջազգային հարաբերությունների տեսություններ

Ռադիկալիզմ

Ռադիկալիզմի տեսությունը մարքսիստական հարացույցի (պարադիգմա) և դրա վարիացիաների ամբողջությունն է: Ռադիկալիզմ անվանվում է այն պատճառով, որ այս տեսությունը հանդես է գալիս միջազգային հարաբերությունների մյուս երկու կանոնիկ տեսությունների՝ լիբերալիզմի և ռեալիզմի սուր քննադատության, այդ տեսությունների դրույթների ամբողջական բացառման և միջազգային հարաբերությունների հիմնախնդիրների լուծման ռադիկալ, արմատական դրույթների առաջաջաման դիրքերից: Եթե ռեալիզմի ու լիբերալիզմի համար միմյանց որոշ տեսակետներ փոխընդունելի են (օրինակ՝ միջազգային հարաբերությունների անարխիկ բնույթի, պետության՝ գլխավոր դերակատար լինելու և այլնի մասին), ապա ռադիկալիզմը լրիվ այլ կերպ է մեկնաբանում միջազգային հարաբերությունների բոլոր երևույթներն ու գործընթացները՝ շեշտը դնելով գերազանցապես տնտեսական գործոնների, տնտեսական նկատառումների վրա:

Ռադիկալիզմը որդեգրել է գիտական այն գործելակերպը, երբ միջազգային հարաբերությունների, համաշխարհային քաղաքականության տարբեր երևույթների, գործընթացների, հիմնախնդիրների դիտարկումը, մեկնաբանությունն ու հետազոտումը իրականացվում են մարդկության արտադրական հարաբերությունների էվոլյուցիայի պատմական վերլուծության հիման վրա: Այսինքն, արտադրական գործընթացի էվոլյուցիայի (արտադրության ստրկատիրական, ֆեոդալական եղանակներ, պրոտոինդուստրացում, արդյունաբերական հեղաշրջում, ինդուստրացում) վերլուծությունը միջազգային հարաբերությունների ուսումնասիրման բանալին է: Միջազգային հարա-

բերությունների ներկայիս բնույթը, ըստ ռադիկալների, հասարակության պատմական զարգացման արդյունքն է: Այդ պատմական զարգացման առանցքում մշտապես գտնվել և գտնվում են արտադրական հարաբերությունները (արտադրության գործընթացի վրա խարսխված հասարակական հարաբերությունները): Արտադրական գործընթացի զարգացումը շարունակ վերափոխում է հասարակական հարաբերությունների բնույթը: Միջազգային հարաբերությունները, հանդիսանալով հասարակական հարաբերությունների մի բաղադրիչը, նույնպես ենթարկվում են այս օրինաչափությանը: Պատմությունը, պատմության դերն առհասարակ, խիստ կարևորվում է ռադիկալ մտածողության մեջ հասարակական հարաբերությունները (այդ թվում միջազգային հարաբերությունների) դիտարկելիս, վերլուծելիս: Եթե ռեալիստների համար պատմությունը կրկնվող շրջափուլերի ամբողջություն է, և եթե այն օգտակար է զուտ անցյալի համանման իրավիճակներից դասեր քաղելու, ընդհանրացումներ անելու, տեսության դրույթները վերահաստատելու տեսանկյունից (օրինակ՝ ռեալիստները գտնում են, որ պատմության ցանկացած փուլում միջազգային հիմնախնդիրները նույնն են, միշտ էլ մարդու էությունը մնացել և մնում է գծուծ, եսասեր, իշխանատենչ, միշտ էլ պետության վարքագծի հիմքում շահն է եղել և կա և այլն), ապա ռադիկալների կարծիքով պատմությունն է հենց տալիս միջազգային հարաբերությունները հասկանալու, ընկալելու, ուսումնասիրելու բանալին:

Կարլ Մարքսի (1818-1883) աշխատությունները ֆունդամենտալ նշանակություն են ունեցել ռադիկալ մտածողության ձևավորման հարցում: Ռադիկալիզմի հարացույցն իր մեջ ընդգրկում է դասական մարքսիզմը և այդ դրույթների հետագա վերաձևակերպման հիման վրա առաջացած տեսությունները: Մարքսը գտնում էր, որ կապիտալիզմի էվոլյուցիան տեղի է ունեցել տնտեսական փոփոխությունների, զարգացումների և դրանցով պայմանավորված՝ դասակարգային, սոցիալական պայքարի հիման վրա: 19-րդ դարի եվրոպական

կապիտալիզմի հիմքում ավելի վաղ դարերի ֆեոդալական քաղաքական ու տնտեսական կացութաձևներն են եղել: Կապիտալիստական հասարակարգում գործընթացների շարժիչ ուժը մասնավոր շահն է (անհատի կամ խմբի), ինչը ուղղորդում է շուկայական հարաբերությունները և պայմանավորում աշխատաշուկայի վիճակը: Այս համատեքստում իշխող բուրժուական և հարստահարվող բանվորական դասակարգերի միջև բախումն անխուսափելի է, որը պետք է ի վերջո հանգեցնի հասարակության նոր՝ սոցիալիստական կարգի ձևավորմանը:

Ըստ մարքսիզմի՝ միջազգային հարաբերությունների գլխավոր գործող անձինք սոցիալական դասակարգերն են՝ համաշխարհային բուրժուազիան և միջազգային բանվոր դասակարգը (պրոլետարիատ): Պետությունները՝ որպես միջազգային հարաբերությունների մասնակիցներ, երկրորդական նշանակություն ունեն: Բուրժուազիայի՝ գերշահույթներ ձեռք բերելու ձգտումը նրան ամենուր և միշտ դրդում է. 1) ուժեղացնել բանվոր դասակարգի շահագործումը և 2) հումքի, էժան աշխատուժի նոր աղբյուրներ, ինչպես նաև իր պատրաստի ապրանքների իրացման շուկաներ ձեռք բերել: Սա առաջ է բերում այնպիսի իրողություն, երբ աշխարհը բաժանվում է երկու բևեռների՝ իմպերիալիզմի և աշխատավորության: Ընդ որում՝ իմպերիալիզմի բևեռում գնալով սաստկանում է իմպերիալիստական տերությունների, իշխանությունների միջև շահերի հակասությունը, պայքարը, մինչդեռ մյուս բևեռում նկատվում է աշխատավոր դասակարգերի համախմբում, կոնսոլիդացիա: «Բանվորները հայրենիք չունեն. նրանց միավորում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի ինքնագիտակցությունը», սա է մարքսիստական լոզունգներից մեկը: Մարքսիստների պնդմամբ՝ բուրժուազիան իր էությանը և բնույթով ևս ինտերնացիոնալ կատեգորիա է, բուրժուան նույնն է թե՛ Ֆրանսիայում, թե՛ Բրիտանիայում, թե՛ այլուր: Պարզապես պետությունը գործիք է բուրժուազիայի ձեռքին՝ աշխատավոր զանգվածների շահագործումը կայուն հիմքերի վրա դնելու, նրանց մշտապես

իրեն ենթարկելու համար (ինչպես հիշում ենք, ռեալիզմը հենց պետությանն էր վերապահում միջազգային հարաբերությունների սկզբունքային դերակատարությունը): Պետության արտաքին քաղաքականության ռեսուրսները (ռազմավարությունը և դիվանագիտությունը) ծառայեցնելով իր նեղ էգոիստական շահերին՝ բուրժուազիան մշտապես նպաստում է միջազգային հարաբերությունների անկայունացմանը (դեստաբիլիզացիային), կոնֆլիկտների և պատերազմների բռնկմանը:

Մարքսիստները գտնում են, որ միջազգային հարաբերությունների բնույթը նույնն է ինչ ներպետական հարաբերություններինը, իսկ ներպետական հարաբերությունները կառուցված են բուրժուազիայի կողմից աշխատավորության շահագործման հիման վրա: Հզոր կապիտալիստական տերությունները շահագործում են ոչ միայն իրենց քաղաքացի աշխատավորներին, այլև ավելի թույլ պետությունների, գաղութների պրոլետարիատին: Իմպերիալիստական տերությունների կողմից վարվող գաղութային էքսպանսիայի քաղաքականությունը ասվածի վառ դրսևորումն է: Այսպիսով, ըստ մարքսիզմի՝ միջազգային հարաբերությունների բնույթը կապիտալիստական է: Վերոնշյալից ելնելով՝ մարքսիստները համարում են, որ միջազգային գործընթացները դասակարգային կոնֆլիկտներ, ճգնաժամեր, պատերազմներ և սոցիալական հեղափոխություններ են: Ռուսաստանում, Կուբայում, Չինաստանում և այլուր տեղի ունեցած սոցիալիստական հեղափոխությունները միջազգային գործընթացներ են:

Միջազգային հարաբերությունների գլխավոր մասնակիցների նպատակները տրամագծորեն հակասում են միմյանց: Եթե համաշխարհային բուրժուազիայի նպատակը շահույթի ավելացումն ու կապիտալի կուտակումն է, ապա համաշխարհային աշխատավորական դասի նպատակը բուրժուազիայի տապալումը, պրոլետարիատի ազատագրումը, երկրի երեսին սոցիալիզմի և կոմունիզմի կառուցումն է: Բնականաբար, տարբերվում են նաև նշված նպա-

տակներին հասնելու միջոցները: Եթե բուրժուազիան իր նպատակին փորձում է հասնել շահագործումն ուժեղացնելու միջոցով, ապա պրոլետարիատը իր նպատակին փորձում է հասնել համաշխարհային սոցիալական հեղափոխությունների մեծ ալիք բարձրացնելու միջոցով:

Ըստ մարքսիստական տեսության՝ միջազգային հարաբերությունների ապագան կանխորոշված է հասարակական զարգացման օրենքներով: Ըստ այդ օրենքներից մեկի՝ հասարակական հարաբերությունների զարգացումը ի վերջո հանգեցնելու է նրան, որ պետությունները՝ որպես հասարակության քաղաքական կազմակերպման ձևեր, վերանալու են, ձևավորվելու է կապիտալիստական շահագործումից գերծ, բարոյական նորմերով ինքնակառավարվող համաշխարհային մի հասարակություն:

Ռադիկալ հարացույցի ժամանակակից ներկայացուցիչներից սոցիոլոգ Իմմանուել Վալլերշտայնը իր «Ժամանակակից աշխարհահամակարգը» աշխատության մեջ զարգացնելով համաշխարհային կապիտալիստական համակարգի մասին տեսությունը, կապիտալիզմի զարգացման պատմական յուրաքանչյուր փուլին համապատասխան առանձնացնում է այն աշխարհագրական տարածաշրջանները, որտեղ արտադրության պրոցեսն առավել զարգացած էր, իսկ գյուղատնտեսական սեկտորն ի վիճակի էր հոգալ արդյունաբերության մեջ ներգրավված աշխատուժի բազային սպառողական կարիքները (նման տարածաշրջանը կոչվում է «**կենտրոն**») կամ «**միջուկ**» (core): Նա առանձնացնում է նաև այնպիսի աշխարհագրական տարածաշրջաններ, որտեղ «կենտրոնը» թույլ չի տալիս, որ արդյունաբերական զարգացում տեղի ունենա. (նման տարածաշրջանն էլ կոչվում է «**պերիֆերիա**» (ծայրամաս)), պերիֆերիան կենտրոնի էժան հումքի մատակարարն է ու էժան աշխատուժի: Կենտրոնի և պերիֆերիայի միջև միջանկյալ դիրք էր գրավում «**սեմիպերիֆերիան**», որտեղ զարգացման ինչ-ինչ միտումներ են արձանագրվում: Նման դասակարգումը պատմական տեսանկյունից

նույնացվում է **Մետրոպոլիա-կիսազաղութ-գաղութ** դասակարգմանը: Իսկ ներկա իրողություններին համահունչ դիտարկման դեպքում կունենանք զարգացած երկրներ-զարգացող երկրներ-ագրարային (հետամնաց) երկրներ դասակարգումը: Վալլերշտայնը նշում է, որ այս տարածաշրջանների, երկրների շրջանում կարգավիճակային-դերային զարգացումներ են գրանցվում: Այսպես, նախկինում սեմիպերիֆերիայի կարգավիճակում գտնվող Հարավային Կորեան և Թայվանը 1980-90-ական թթ. ընթացքում դարձան կենտրոնի կարգավիճակ ունեցող երկրներ, իսկ Մալայզիան ու Թայլանդը դարձան սեմիպերիֆերիկ երկրներ: Այսպիսով, Վալլերշտայնի ու նրա համախոհների համար միջազգային հարաբերությունների վերլուծության գլխավոր ելակետ դիտարկվում է աշխարհի կապիտալիստական համակարգը: Միջազգային-քաղաքական բոլոր փոխակերպումները, փոխդասավորությունները, ըստ նրանց, անհրաժեշտ է մեկնաբանել միայն աշխարհակարգի կապիտալիստական կառուցվածքի տրամաբանությունից ելնելով. համաշխարհային համակարգը, ըստ նրանց, տնտեսական պրոցեսների և հարաբերությունների փոխկապակցված ամբողջություն է:

Ռադիկալ գաղափարների մյուս խումբը միջազգային քաղաքական գործընթացների մեկնաբանման հիմքում դնում է պետությունների տնտեսական շահերի գաղափարը: Սրանով ռադիկալները հստակ զանազանվում են լիբերալներից ու ռեալիստներից: Վերջիններս տնտեսական գործոնին այդքան մեծ դերակատարություն չեն վերապահում, ինչպես ռադիկալները: Լիբերալները գտնում են, որ տնտեսական փոխկապվածության երևույթը միայն մեկ ասպեկտ է հանդիսանում համագործակցությունը՝ որպես միջազգային գործընթաց մեկնաբանելու համար: Այսինքն՝ համագործակցության երևույթը բացատրելու, մեկնաբանելու համար մի շարք ասպեկտներ գոյություն ունեն, տնտեսական փոխկապվածությունը, այո, յուրովի իմաստավորում է համագործակցությունը, բայց համագործակցությունն իմաստավորող այլ ասպեկտներ էլ կան: Ռեալիստները

տնտեսական գործոնն արժևորում են այնքանով, որքանով այն նպաստում է պետության հզորության ավելացմանը կամ պահպանմանը: Ռադիկալները, ընդհակառակը, տնտեսական գործոնն ամենաառաջնահերթն են համարում: Մարքսիստական գաղափարախոսության հիմքի վրա ձևավորված «**Ֆեմինիզմի**» մարզինալ տեսությունը, օրինակ, գտնում է, որ կանանց հանդեպ առկա խտրականության արմատները պետք է փնտրել շահագործողական կապիտալիստական համակարգի մեջ:

Հանձնարարվող գրականություն

1. Robert Garner, Peter Ferdinand & Stephanie Lawson, Introduction to politics, Oxford University Press, 2009, pp. 367-72
2. Scott Burchill, Andrew Linklater, Richard Devetak, Jack Donnelly, Matthew Paterson, Christian Reus-Smith and Jacqui True, “Theories of International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp. 110-161,
3. Ole Holsti, Theories of International Relations, Essay, pp. 16-18
4. Cynthia Weber, International Relations Theory: A Critical Introduction, 2nd edition, Routledge, NY-London, 2005, pp. 123-150
5. А. П. Цыганков, “Теория международных отношений”, М., “Гардарики”, 2007, стр. 113-116, 149-154
6. www.marxists.org/archive/marx/
7. www.marxists.org/archive/gramsci/
8. www.marxists.org/subject/frankfurt-school/index.htm
9. <http://plato.stanford.edu/entries/critical-theory/>
10. www.geocities.com

Դասախոսություն 6

Միջազգային հարաբերությունների տեսություններ

Կոնստրուկտիվիզմ

Միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիզմի տեսությունն իր անվանումը վերցրել է սոցիալական կոնստրուկտիվիզմի տեսության այն կանխադրությից, որ սոցիալական իրականությունը և սոցիալական հարաբերությունները մտքերի, գաղափարների, արժեքների ամբողջության արտացոլում, արտապատկերում են: Սոցիալական իրականությունը, հարաբերությունները առարկայական, նյութական կատեգորիաներ չեն. ըստ սոցիալական կոնստրուկտիվիզմի՝ դրանց ինչպիսին լինելը պայմանավորված է մարդկանց կողմից դրանց ընկալելու ձևից:

Կոնստրուկտիվիզմը միջազգայնագիտության ասպարեզ մուտք գործեց՝ իր հիմնախնդրային օրակարգում ունենալով այնպիսի ավանդական հիմնահարցեր, ինչպիսիք են պետության բնույթը, սովորելության գաղափարաբանությունը, միջազգային անարխիան և այլն, միևնույն ժամանակ քննարկումների սեղանին դնելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են միջազգային հարաբերություններում սեռի/գենդերի, ինքնության, էթնիկության դերակատարության հարցերը, որոնք մինչ այդ բացակայել էին միջազգային հիմնախնդիրների օրակարգից: Ի տարբերություն լիբերալիզմի, ռեալիզմի և ռադիկալիզմի, կոնստրուկտիվիզմը չի հանդիսանում միջազգային հարաբերությունների բոլոր կողմերի, երևույթների, գործընթացների վերաբերյալ միանշանակ համոզմունքներ հանդես բերող տեսություն: Փոխարենը կոնստրուկտիվիզմը գտնում է, որ միջազգային հարաբերություններն այնքան բազմաբարդ են, որ դրանք անհնար է դիտարկել ընդունված համադրությի մեկ տեսության շրջանակներում, մեկնաբանել մեկ տեսության դիրքերից. չէ՞ որ բազմաթիվ իրավիճակ-

ներ, իրողություններ, երևույթներ կան, որոնց այս կամ այն տեսությունը դժվարանում է կամ չի կարողանում բացատրել:

Կոնստրուկտիվիստներն առաջնորդվում են այն կանխադրույթով, որ միջազգային դերակատարների վարքագծերը, գործողությունները պայմանավորված են էլիտաների համոզմունքով, բխում են նրանց ինքնության առանձնահատկություններից, նրանց միջավայրում առկա սոցիալական նորմերից: Անհատները, միավորվելով էլիտաների մեջ, ստեղծում են, կռում են քաղաքական նոր մշակույթ, հավատամք՝ համոզմունքների, գաղափարների, արժեքների, մտածելակերպերի մի ամբողջություն, կամ զարգացնում, վերափոխում են եղած մշակույթը, հավատամքը: Պետական/ազգային շահերը ձևակերպվում են հենց նշված դերակատարների ինքնության, մշակույթի, արժեքային համակարգի ու մտածելակերպի հիման վրա: Այսպիսով, կոնստրուկտիվիզմը գտնում է, որ միջազգային հարաբերությունների (ինչպես նաև ներպետական ոլորտի) բազմաբնույթ հիմնահարցերը, երևույթները, գործընթացները դիտարկելիս, վերլուծելիս, հետազոտական ֆոկուսը պետք է կենտրոնացնել անհատների, էլիտաների ինքնության, մշակույթի, նորմերի ու արժեքների, ավանդույթի ու սովորույթի վրա⁹:

Կոնստրուկտիվիզմը խուսափում է միջազգային հարաբերությունների կառուցվածքի հարցին անդրադառնալուց: Կոնստրուկտիվիզմի դպրոցի ամենակարկառուն ներկայացուցիչներից Ալեքսանդր Վենդտի պնդմամբ՝ քաղաքական / միջազգային կառուցվածքի վրա ֆոկուսավորումը խիստ մակերեսային բացատրություն կտա

⁹ Գիտահետազոտական այս գործելակերպի իմաստն ավելի ցայտուն ներկայացնելու համար Թեդ Նոփֆը առաջարկում է հետևյալ անալոգիան. Թատրոնում հանկարծակի հրդեհ է բռնկվում, և յուրաքանչյուր ոք վազում է դեպի միակ ելքը: Եթե պատկերացում չունենանք այդ թատրոն հաճախած հանրույթի սոցիալական նորմերի, արժեքների, ինքնության, մտածելակերպի և այլնի մասին, չենք կարող նույնիսկ այս պարզ իրավիճակում հաստատապես ասել, թե ովքե՞ր դուրս կգան առաջինը, ամենաուժեղնե՞րը, թե՞ հաշմանդամները, կանա՞յք, թե երեխաները, ծերե՞րը, թե երիտասարդները, թե՞ փախուստը կվերածվի բոլորի մեջ մոլեգին մի պայքարի:

պետության վարքագծի մասին: Նրա խոսքերով, միայն կառուցվածքը հաշվի առնելով, «հնարավոր չէ կանխատեսել՝ արդյո՞ք տվյալ երկու պետությունները կբարեկամանան իրար, թե՞ կջնամանան, կճանաչեն մեկմեկու սուվերենությունը, կվարեն ստատո՞ւս քվոյի քաղաքականություն¹⁰, թե՞՞ ունիզիտնիզմի քաղաքականություն¹¹: Վենդորը գտնում է, որ ուսումնասիրության կարևորագույն օբյեկտը պետք է հանդիսանա ինքնությունն ու դրա գիտակցման ձևը (գերազանցապես նկատի ունենալով էլիտաների կողմից ինքնության գիտակցման ձևը), ինչպես նաև ինքնագիտակցման փոփոխության երևույթը: Միջազգային համակարգի բնույթն անարխիկ է ոչ թե որովհետև իրականությունն է այդպիսին, այլ քանի որ պետությունների էլիտաներն են հակված այն անարխիկ դիտելու, հետևապես այդ նույն էլիտաները, ելնելով իրենց համոզմունքներում «կառուցված»¹² անարխիայից, ձգտում են ինքնօգնությամբ մեղմել անարխիայի հնարավոր հետևանքներն իրենց պետության վրա: Անարխիան, ըստ Վենդորի, կախված է էլիտաների ինքնագիտակցման ձևերի բաշխվածությունից, ոչ թե ռազմական հզորության, ուժի բաշխվածությունից, ինչպես պնդում են ռեալիստները: Եթե պետության ինքնությունը տեղորոշվում է զուտ տվյալ պետության մակարդակում¹³, և երբ շատ են այդպիսի պետությունները, ապա համա-

¹⁰ Իրավիճակի պահպանմանն ուղղված քաղաքականություն:

¹¹ Վերանայման, իրավիճակի փոփոխմանն ուղղված քաղաքականություն:

¹² Հենց այստեղ է գտնվում «կոնստրուկտիվիզմ» տերմինի հասկացության բանալին, որ աշխարհն այսպիսին է, ոչ թե քանի որ իրականում այդպիսին է, այլ որ այդպիսին են պատկերացնում, «մտակառուցում» մարդիկ

¹³ Խոսքն այստեղ հետևյալի մասին է. յուրաքանչյուր անձ ինքնության տեղորոշման տարբեր մակարդակներ ունի, մարդու ինքնությունը կարող է տեղորոշվել օրինակ՝ տոհմի մակարդակում (ես Սողոմոնյան եմ, դրանով ինձ առանձնացնում եմ ոչ Սողոմոնյաններից), ինքնության տեղորոշման ավելի բարձր մակարդակ է համայնքային ինքնությունը (ես վանաձորցի եմ), էլ ավելի բարձր կարող է լինել ազգայինը կամ պետականը (հայ եմ կամ հայաստանցի եմ, նայած որն է ինձ համար ավելի կարևոր), կրոնական ինքնությունը ևս կարևոր է (քրիստոնյա եմ), շատ ավելի ընդգրկուն մակարդակ է քաղաքակրթային ինքնությունը (արևմուտքցի եմ), կարող են նաև լինել բազմաթիվ սոցիալական, գաղափարական այլ ինքնություններ

կարգն անարխիկ լինելու ավելի մեծ հավանականություն ունի: Եթե պետության ինքնությունը տեղորոշվում է ավելի բարձր մակարդակում, ըղզրկելով այլ պետություններ, այլ հասարակություններ ևս, և երբ շատ են նման պետությունները, ապա մեծանում է անարխիայի բացակայության հավանականությունը:

Կոնստրուկտիվիզմը, ինչպես և մյուս տեսությունները, ենթարկվել են քննադատության: Քննադատության գլխավոր առանցքն այն է, որ ըստ այս տեսության, գրեթե գոյություն չունի օբյեկտիվ իրականություն, ամեն ինչ չափվում, չափորոշվում է անհատի, խմբի, էլիտայի աչքերով, մտածողությամբ, պատկերացմամբ, համոզմունքով, հավատով. ուստի և չկա ճիշտ ու սխալ, չկան ճիշտ ու սխալ պատասխաններ:

(մանկավարժ եմ, պահպանողական եմ և այլն): Յուրաքանչյուր անհատի մոտ ինքնության բոլոր մակարդակները չեն կարող նույն չափով կարևորվել, ինքնությունների կարևորության աստիճանը փոխվում է միջավայրից միջավայր, իրավիճակից իրավիճակ: Երբ խոսքը գնում է միջազգային հարաբերությունների մակարդակում ինքնության տեղորոշման մասին, ապա պետության ղեկավարը/ները, էլիտան կարող է խիստ կարևորություն տալ լոկ ազգային կամ պետական ինքնությանը, կարող է կարևորություն տալ ազգային/պետական և քաղաքակրթական ինքնությանը հավասարաչափ (հավասարաչափ և գերմանացի եմ և եվրոպացի), կարող է կարևորել նաև համամարդկային ինքնությունը: Կոնստրուկտիվիստները անարխիայի մասին դատողություններ անում են՝ հենց ելնելով ղեկավարի, էլիտայի ինքնության ընկալման, գիտակցման ձևից:

Հանձնարարվող գրականություն

1. Robert Garner, Peter Ferdinand & Stephanie Lawson, Introduction to politics, Oxford University Press, 2009, pp. 372-74
2. Scott Burchill, Andrew Linklater, Richard Devetak, Jack Donnely, Matthew Paterson, Christian Reus-Smith and Jacqui True, “Theories of International Relations”, 3rd edition, Palgrave Macmillan, New York, 2005, pp. 188-212
3. International Relations Theory for the 21st centur, An Introduction, edited by Martin Griffiths, Routledge, London-NY, 2007, pp. 60-74
4. Ole Holsti, Theories of Internationa Relations, Essay, pp. 18-20
5. Cynthia Weber, International Relations Theory: A Critical Introduction, 2nd edition, Routledge, NY-London, 2005, pp. 59-80
6. Alexander Wendt, Social Theory of International Politics, Cambridge University Press, 1999

Դասախոսություն 7

Միջազգային հարաբերությունների տեսությունները

«գործողության մեջ»:

Ծոցի պատերազմը՝ որպես դեպքային ուսումնասիրություն

1990-91 թթ. Պարսից ծոցում ռազմաքաղաքական իրադրության զարգացումները և դրանց գազաթնակետը՝ Ծոցի պատերազմը («Անապատահողմը»), բավականին ուսանելի, ընդունված և հարմար մոդել է միջազգային հարաբերությունների տեսությունները փորձաքննելու, «գործողության մեջ դնելու» (putting theory in action) իմաստով: Ինչպես արդեն տեղյակ ենք նախորդ դասախոսություններից, այդ տեսությունները, կապված այն հարցի հետ, թե ովքեր են միջազգային հարաբերությունների կարևորագույն, սկզբնական դերակատարները, տարբեր նախընտրություններ ունեն միևնույն երևույթն ու գործընթացն ուսումնասիրելու, վերլուծելու տեսանկյունից:

Այսպես, լիբերալները Ծոցի պատերազմի բռնկման հարցի շուրջ դիտարկումներ կատարելիս **նախևառաջ** կկենտրոնանան Մադդամ Հուսեյնի կողմից իրավիճակն աղեկվատ չընկալելու, միջազգային հանրությանը թերագնահատելու վրա: Այսինքն, իրադրության սրումն ու պատերազմի բռնկումն առաջին հերթին կկապեն Մադդամ Հուսեյնի անձնական հատկանիշների՝ պետական քաղաքականության մեջ գործադրման հետ: Քուվեյթի տարածքի զավթումը լիբերալները կվերագրեն Հուսեյնի այն մտայնությանը, որ ագրեսիվ այդ արարքով Հուսեյնը ձգտում էր, տեր կանգնելով Քուվեյթի նավթային ռեսուրսներին, բարելավել 1980-88 թթ. իրաք-իրանյան պատերազմի հետևանքով Իրաքի վատթարացած սոցիալ-տնտեսական աղքատ պայմանները: **Երկրորդ**՝ լիբերալները առանձնհատուկ կընդգծեն միջազգային հանրության կազմակերպվելու, միասնաբար ագրեսորին հակահարվածելու, հավաքական անվտանգու-

թյան գիտակցմամբ ու ոգով առաջնորդվելու հանգամանքը (չէ՞ որ եթե այդ հանրությունն օժտված չլիներ նշված գիտակցմամբ, հասուն դիրքորոշմամբ, ոգով, ապա հակաիրաքյան ռազմական գործողությունները տեղի չէին ունենա): Լիբերալներն այս առնչությամբ կմատնանշեն, հատկապես **ՄԱԿ-ի մանդատի ներքո**, հակաիրաքյան կռալիցիայի ձևավորման հանգամանքը՝ որպես հիմնավորում լիբերալ այն կանխադրույթի, թե միջազգային կազմակերպությունների ամրապնդմանը, նրանց ազդեցության ընդլայնմանը զուգընթաց, նրանք, պետությունների կողքին, դառնում են միջազգային հարաբերությունների սկզբնական դերակատարներ՝ երբեմն կարողանալով ուղղորդել կամ սահմանափակել պետությունների՝ զուտ սեփական շահի վրա հիմնված վարքագծերը:

Ռեալիստներն առաջին հերթին կընդգծեն ոչ թե անհատի հատկանիշների հանգամանքը, այլ միջազգային հարաբերությունների անարխիկ բնույթի (միջազգային ասպարեզում լեգիտիմ իշխանական կառույցի բացակայություն)՝ պետություններին հատուկ վարքագիծ պարտադրելու հանգամանքը: Այսպես, միջազգային անարխիկ համակարգը պարտադրեց, որ Իրաքը, առաջնորդվելով ինքնօգնության սկզբունքով, իր անվտանգության հարցի լուծումը տեսնի Քուվեյթի տարածքի, մասնավորապես, նրա նավթային ռեսուրսների բռնագավթման մեջ (հատկապես կապված այն հանգամանքի հետ, որ Քուվեյթը հրաժարվում էր Իրաքին այդքան անհրաժեշտ նավթը կանոնավոր կերպով մատակարարել): ԱՄՆ-ի պատասխանը (որպես կռալիցիան կազմակերպող, առաջնորդող ու ռազմական գործողություններում ամենամեծ ներդրումն ունեցող պետություն), ըստ ռեալիստների, դարձյալ պայմանավորված էր միջազգային անարխիկ համակարգի պարտադրանքի հետևանքով սեփական շահերով առաջնորդվելու ռացիոնալ մտայնությամբ: Միացյալ Նահանգների շահը պահանջում էր վերահսկել Մերձավոր Արևելքի, մասնավորապես Քուվեյթի, նավթի արդյունահանման ու արտահանման գործընթացը՝ թույլ չտալով, որ այդ վերահսկողությունը հայտնվի Իրաքի

պես ԱՄՆ-ին հակադրվող պետության ձեռքին: Քուվեյթի զավթման նկատմամբ թողտվությունը կնշանակեր հիանալի նախադեպ Իրաքի համար՝ նավթառատ այլ տարածքներ հետագայում զավթելու առումով, ինչը միանգամայն ԱՄՆ-ի շահերին հակասող նշանակություն ուներ: Հետևապես, ԱՄՆ-ն ջանում էր այլ պետություններին համոզել (պետություններ, որոնք դարձան կոալիցիայի անդամ), որ իրենց շահերից ևս բխում է Իրաքին հարվածելը: Ինչպես տեսնում ենք, այս փոքրիկ պատմության վերաբերյալ դատողություններ անելիս ռեալիստական վերլուծության բազան հիմնվում է «անարխիկ համակարգ», «ազգային շահ», «ազգային անվտանգություն» տերմինների վրա:

Ռադիկալները ռեալիստների նման վերլուծության ֆոկուսում կպահեն միջազգային համակարգը, սակայն նրանք կոնֆլիկտի առաջացումը կպատճառաբանեն ոչ թե այդ համակարգի անարխիկ բնույթով, որին նրանք չեն հավատում, այլ ընդհակառակը, կոնֆլիկտի պատճառը կփնտրեն համակարգի խիստ հիերարխիկ, շահագործողական բնույթի ու կառուցվածքի մեջ: Ըստ ռադիկալների՝ այդ կառուցվածքը ժամանակին գոյություն ունեցած միջազգային հարաբերությունների գաղութային համակարգի ժառանգությունն է: Միջազգային հիերարխիկ-ստրատիֆիկացիոն համակարգի բաղկացուցիչ մասերից է նաև Մերձավոր Արևելքը՝ իր տարածաշրջանային ու արտաքին դերակատարներով հանդերձ (տարածաշրջանային դերակատարներ – Իրաք, Իրան, Սաուդյան Արաբիա և այլն, արտաքին դերակատարներ – ԽՍՀՄ, ԱՄՆ, տնտեսապես ու ռազմաքաղաքականապես այլ հզոր պետություններ (Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) և այլն): Քանզի ռադիկալիզմն ընդունում է, որ միջազգային հարաբերություններում սկզբնական դերակատար հանդիսանում է բիզնես էլիտան (և՛ պետության մասշտաբով, և՛ միջազգային մասշտաբով), և որ պետությունների միջազգային վարքագծի հիմքում այդ բիզնես էլիտայի տնտեսական շահն է (վարքագիծը պայմանավորված է տնտեսական շահերով), ուստի Ծոցի պատերազմը,

ըստ նրանց, հետևանքն էր Արևմուտքի բիզնես էլիտայի կողմից իր տնտեսական (նավթային) շահերն առաջ մղելուն և պաշտպանելուն ուղղված գործունեության: Եթե նախկինում բուրժուական/բիզնես իմպերիալիզմն իրականացվում էր պետությունների կողմից, պետական միջոցներով, ապա այժմ իմպերիալիզմն իրականացվում է բազմազգ կորպորացիաների միջոցով. վերջիններս են ստիպում իրենց պետություններին՝ իրենց տնտեսական շահերին համահունչ քաղաքականություն իրականացնել: Այսպիսով, նավթի արդյունահանմամբ ու արտահանմամբ զբաղվող միջազգային կորպորացիաները, որոնց շահերին խիստ հակասում էր Իրաքի կողմից նավթառատ Քուվեյթի բռնազավթումն ու Քուվեյթի նավթի միանձնյա տնօրինումը, ստիպեցին իրենց համապատասխան պետություններին ռազմական գործողությունների միջոցով վերադարձնել իրենց քուվեյթյան նավթը:

Կոնստրուկտիվիզմը Ծոցի պատերազմը մեկնաբանում է որպես կոնֆլիկտ երկու տարաբնույթ ինքնություններ ունեցող, ինքնություններով օժտված էլիտաների միջև (ավելին՝ նույնիսկ որպես կոնֆլիկտ հենց ինքնությունների միջև): Էլիտաների այդ ինքնություններն են. մի կողմից պանարաբիզմը (կամ արաբական աշխարհը), երբ էլիտայի համար ինքնության տեղորոշման ամենակարևոր շրջանակը համարվում է արաբ ազգը, դրան պատկանելը, ուստի և արաբների համախմբումը գերադասվում է պետական ինքնիշխանությունից, ինքը պանարաբիզմն է ենթադրում, որ արաբական բոլոր պետությունները (Իրաք, Քուվեյթ, Սիրիա, Եգիպտոս, Սաուդյան Արաբիա և այլն) ստիպված են հրաժարվել պետական ինքնիշխանությունից հանուն համաարաբական մի հզոր միավորման), մյուս կողմից պետական ինքնիշխանության կամ պետական նացիոնալիզմի ինքնությունը (երբ էլիտայի համար ամենակարևորը սեփական պետության ինքնիշխանության պահպանումն է, ամենևին էլ կարևորություն չի տրվում նրան, որ նույն ազգից բազմաթիվ պետություններ կան և որ կարելի է, ի հաշիվ ինքնիշխանության,

համախմբման միջոցով լուծել համաարաբական կարևորության, մասշտաբի խնդիրներ): Այսպիսով, պանարաբիզմի ինքնությունն ունեցող էլիտաները գտնում են, որ պանարաբիզմի գաղափարի իրականացմամբ է կարելի արդյունավետորեն լուծել անվտանգության ու բարեկեցության հետ կապված խնդիրները, մինչդեռ պետական ինքնիշխանության ինքնությամբ օժտված էլիտաների համար նույն խնդրի լուծման կարևորագույն նախապայմանը պետական ինքնիշխանության պահպանումն ու ամրապնդումն է, անթույլատրելի է համարվում այլ պետության կողմից, թեկուզ և ազգակից, քո պետության ներքին գործերին միջամտելը: Հատկանշական է, որ այս երկու ինքնությունների հակադրությունը մինչ օրս էլ բնորոշ է արաբական աշխարհին:

Ինչ վերաբերում է Ծոցի պատերազմին, ապա, ըստ կոնստրուկտիվիստների, Սադդամ Հուսեյնի ու նրա խոհակիցների սխալը նրանում էր, որ նրանք, օրինակ, Մաուդյան Արաբիային ընկալել էին իբրև պանարաբիզմի ինքնություն ունեցող պետություն (ըստ այդմ էլ ակնկալել էին, որ Մաուդյան Արաբիան ըմբռնումով կմոտենա Իրաքի կողմից Քուվեյթի նվաճման փաստին, երբեք թույլ չի տա, որ ԱՄՆ-ը իր տարածքում գորքեր տեղակայի Իրաքի դեմ պատերազմելու համար), մինչդեռ իրականում Մաուդյան Արաբիայի էլիտան փաստորեն ավելի շատ կրում էր պետական ինքնություն: Սադդամ Հուսեյնի կարծիքով՝ ինքը միավորում էր արաբական աշխարհի մի մասը և նա չէր էլ ակնկալում նման հուժկու դիմակայություն հենց արաբական երկրի կողմից: Եթե նա հստակ պատկերացում ունենար Մաուդյան Արաբիայի էլիտայի իրական ինքնության մասին, միգուցե չդիմեր էլ Քուվեյթի նվաճման քայլին: Այսպիսով, ըստ կոնստրուկտիվիզմի, Ծոցի պատերազմի բռնկման գործում մեծ դեր է խաղացել ինքնությունների կոնֆլիկտի հանգամանքը:

Դասախոսություն 8

Միջազգային համակարգը (միջազգային հարաբերությունների համակարգը)

Համակարգը փոխկապակցված տարրերի կայուն ամբողջություն է: Փոխկապակցվածության հանգամանքը տարրերի այդ ամբողջությունը վերածում է ամբողջականության: Համակարգի բոլոր տարրերը փոխկապակցված և փոխդասավորված են: Յուրաքանչյուրն ունի իր ուրույն կարգավիճակն ու դերը համակարգում և գտնվում է համակարգի հիերարխիկ կառուցվածքում: Շրջակա միջավայրի հետ փոխազդող համակարգերը կոչվում են «բաց» համակարգեր: Այն պատճառով, որ համակարգի մասերը մշտապես փոխկապակցված են, համակարգի մի մասի հետ կատարվող փոփոխությունը փոփոխություն է առաջացնում մյուսների մոտ ևս: Միջազգային հարաբերությունների գիտության բնագավառում 1950-ական թթ. քաղաքական ռեալիզմի դիրքերի ամրապնդումը գիտնականներին դրդեց միջազգային քաղաքականությունը դիտարկել որպես համակարգ: Ընդ որում, համակարգի տարրեր սկսեցին դիտարկվել պետությունները:

Միջազգային համակարգը՝ ըստ լիբերալների

Լիբերալները միջազգային համակարգի՝ որպես առանձին ուժի դերին ու նշանակությանն այնքան կարևորություն չեն տալիս, որքան տալիս են ռեալիստները: Միջազգային համակարգի երևույթի և հասկացության վերաբերյալ լիբերալների մոտ առկա են հայեցակարգային 3 մոտեցումներ, մեկնաբանություններ:

Ըստ 1-ին հայեցակարգի՝ միջազգային համակարգը դիտարկվում է ոչ որպես կառուցվածք, այլ որպես գործընթաց, այսինքն միջազգային համակարգն իրենից ներկայացնում է տարբեր տարրերի միջև բազմաբնույթ փոխազդեցությունների ամբողջություն:

Այս գործընթացում ներգրավված դերակատարների շրջանակն ընդգրկում է ինչպես պետություններին, այնպես էլ միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին, բազմազգ կորպորացիաներին, ներպետական մասշտաբի դերակատարներին (բյուրոկրատիաներ, պառլամենտներ և այլն): *Ռոբերտ Կոհենը և Ջոզեֆ Նայր* միջազգային համակարգը բնութագրում են որպես փոխկախված, փոխկապակցված համակարգ, որի տարրերը խիստ զգայուն են միմյանց հանդեպ և խոցելի միմյանց գործողություններից: Դերակատարները հիմնականում խուսափում են ռազմական ուժի օգտագործումից:

2-րդ հայեցակարգի համաձայն, որը բխում է միջազգային հարաբերությունների անգլիական դպրոցի համոզմունքներից, միջազգային համակարգը բնորոշվում է որպես «*միջազգային հասարակություն*»: Ըստ 2-րդ հայեցակարգի (*Հեղյի Բուլ և Ադամ Ուոտսոն*), եթե միջազգային համակարգն անկախ քաղաքական հանրությունների համախումբ է, ապա միջազգային հասարակությունն ավելին է քան այդ համախումբը: Միջազգային հասարակությունում բոլոր դերակատարները ենթարկվում են համընդհանուր կանոնների, գործում են համընդհանուր ինստիտուտների ենթադաստության ներքո և ճանաչում, ընդունում են համընդհանուր (փոխադարձ) շահերը: Միջազգային հասարակության անդամները միասնական ինքնություն ունեն, նրանք միմյանց համար յուրային են. առանց նման ինքնության հասարակությունը գոյություն ունենալ չի կարող: Նման համակարգը հիմնված է նորմատիվային հիմքերի վրա:

Միջազգային համակարգի մասին 3-րդ հայեցակարգը բխում է նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմի սկզբունքներից: Նեոլիբերալ ինստիտուցիոնալիստները թեն համարում են, որ միջազգային համակարգն անարխիկ է, որում յուրաքանչյուր պետություն գործում է ըստ իր սեփական շահերի, սակայն ի տարբերություն շատ ռեալիստների, նրանք տարբեր դերակատարների միջև առկա փոխհարաբերությունները համարում են դրական արդյունքով հեռանկար

ունեցող փոխհարաբերություններ: Նրանք համարում են, որ այդ փոխհարաբերությունների արդյունքում ստեղծվող ինստիտուտները շրջանցում են պետությունների սեփական, եսասիրական շահերի շրջանակը: Այդ ինստիտուտները ստեղծված են պետությունների վարքագիծը վերահսկելու, չափավորեցնելու համար: Լիբերալները ողջունում են միջազգային համակարգում տեղի ունեցող փոփոխությունները: Ընդ որում, փոփոխությունները տարաբնույթ են, և տարբեր պատճառներ են թաքնված դրանց ետևում: Այսպես օրինակ, միջազգային համակարգի փոփոխության պատճառներից մեկը տեխնոլոգիական զարգացումն է. այս գործընթացը չի ենթարկվում դերակատարների կամքին, հսկողությանը: Հաղորդակցման, տրանսպորտի ոլորտներում առկա էվոլյուցիոն տեղաշարժերի հետևանքով մեծանում է համակարգի բաղադրամասերի միջև փոխկախվածությունը: Միջազգային համակարգի փոփոխությունները կարող են հանդիսանալ միջազգային օրակարգի փոփոխության հետևանք: Եթե ռեալիստները համարում են, որ անվտանգության հարցն է միջազգային օրակարգի կարևորագույն խնդիրը և այն անփոփոխելի է, ապա լիբերալ մտածողության համաձայն, օրինակ՝ 20-րդ դարավերջին օրակարգի կարևորագույն հարց հանդիսանում էին տնտեսական հիմնախնդիրները, իսկ 21-րդ դարում՝ մարդու իրավունքներին և շրջակա միջավայրին առնչվող խնդիրները:

Միջազգային համակարգը՝ ըստ ռեալիստների

Միջազգային համակարգի էության, դրա բնութագրիչների վերաբերյալ ռեալիստների տեսակետները բավականին հստակ են և հիմնված են հարուստ գիտական ավանդույթների վրա: Բոլոր ռեալիստները միջազգային համակարգը բնորոշում են որպես անարխիկ: Չկա ոչ մի իշխանություն, որը վեր է կանգնած պետությունից. պետությունն ինքնիշխան է: Աշխարհակարգի նման անարխիկ կառուցվածքն է ուղղորդում պետությունների լիդերներին արտաքին քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնելու հարցում,

այսինքն՝ այդ լիդերները որոշում կայացնելիս **անպայմանորեն** հաշվի են առնում համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները: Ռեալիստների շրջանում տարբերվող, հակասական տեսակետներ գոյություն ունեն *պետություն-միջազգային համակարգ* փոխհարաբերությունների, մասնավորապես միջազգային համակարգում պետության ինքնավարության աստիճանի (միջազգային համակարգից պետության կախվածության աստիճանի) վերաբերյալ: Դասական ռեալիստները համակարգն ածանցում են պետություններից, այսինքն, համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները պայմանավորում են պետությունների գործելակերպով, մինչդեռ նեոռեալիստները, ընդհակառակը, պետությունների վարքագիծն են ածանցում համակարգի կառուցվածքից, այսինքն, գտնում են, որ պետությունների գործելակերպը թելադրվում է համակարգի կողմից:

Համակարգի բևեռայնությունը

Միջազգային համակարգի բևեռայնության հիմնահարցը առանձնակի ուսումնասիրության առարկա է ռեալիստների համար, քանզի բևեռայնության երևույթն իրավիճակ է, երբ մեկ կամ մեկից ավելի դերակատարների կողմից ներհամակարգային հարաբերություններում առկա է գերիշխանություն մյուս դերակատարների հանդեպ: Ըստ բևեռայնության հայտանիշի՝ համակարգերը լինում են միաբևեռ, երկբևեռ և բազմաբևեռ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո միջազգային հարաբերությունների տեսաբանների մտահոգության առարկա դարձավ այն հարցը, որ աշխարհակարգը դառնում է միաբևեռ և որ ԱՄՆ-ին հակակշիռ ուժ չկա: 1950-60-ական թվականները ընդգծված երկբևեռ աշխարհակարգի ժամանակաշրջան էր: Մի բևեռը գլխավորվում էր ԱՄՆ-ի կողմից, որում ընդգրկված էին ՆԱՏՕ-ի անդամ պետություններն ու Ճապոնիան, իսկ ԽՍՀՄ-ի կողմից գլխավորվող մյուս բևեռում ընդգրկված էին Չինաստանն ու Վարշավյան պակտի երկրները: 1970-ականների կեսերից երկբևեռայնությունն սկսեց երերալ, քանզի

արևմտյան բևեռում Ֆրանսիան, արևելյան բևեռում Չինաստանը սկսեցին ինքնուրույն քաղաքականությամբ հանդես գալ:

Եթե միջազգային համակարգում երկուսից ավելի ազդեցիկ դերակատարներ են հանդես գալիս, ապա համակարգը կոչվում է բազմաբևեռ: Բազմաբևեռ համակարգը հաճախ անվանում են ուժերի հավասարակշռության համակարգ (Balance of power system): Ուժերի հավասարակշռության *դասական մոդելի* համակարգը ենթադրում է առաջին՝ մասնակիցները բացառապես պետություններն են, երկրորդ՝ առնվազն 5 մասնակից, 5 բևեռ պետք է լինի: 19-րդ դարի ուժային հավասարակշռության համակարգը (Անգլիա, Ֆրանսիա, Ավստրիա, Ռուսաստան, Պրուսիա) բազմաբևեռության դասական օրինակ է: Այստեղ համակարգը կառուցվում էր հետևյալ տրամաբանությամբ. 2 բևեռ հակակշռում էին մյուս երկու բևեռին, իսկ 5-րդը (սովորաբար Անգլիան էր) հանդիսանում էր արբիտր, *հավասարակշռող բևեռ* (balancer):

Ուժային հավասարակշռության համակարգում մասնակիցներն ընդունում են համակարգի կառուցվածքի կայունությունն ապահովող, համակարգաստեղծ նորմերը և առաջնորդվում են դրանցով: Այդ նորմերն են.

- Հեգեմոնիայի (գերիշխանության) ձգտող ցանկացած բևեռի մյուս բևեռների կողմից անպայմանորեն պիտի հակահարված տրվի:
- Պետություններն ավելացնում են իրենց հզորությունը՝ տարածքներ ձեռք բերելով, բնակչության շատանալով և տնտեսապես զարգանալով:
- Կոնֆլիկտային իրավիճակներում բանակցությունների միջոցով հարցը լուծելը նախընտրելի է ռազմական մեթոդներով հարցը լուծելուց:
- Այսուհանդերձ, հզորությունն ավելացնելու նպատակով պատերազմելն ավելի լավ է, քան ոչինչ չձեռնարկելն ու արդյունքում հզորություն չավելացնելը:

- Այլ պետությունները դիտվում են որպես դաշնակիցներ կամ հակառակորդներ:
- Պետություններն առաջնորդվում են իրենց սեփական շահերով, որոնք բնորոշվում են իշխանության հաստատման հրամայականով, այսինքն, պետության շահը գերիշխանություն ձեռք բերելն է այլ պետությունների հանդեպ:

Եթե բազմաբևեռ համակարգի որևէ դերակատար չհետևի այս կանոններին, ապա ուժային հավասարակշռության համակարգը կարող է ապակայունանալ:

Եթե համակարգի կարևոր դերակատարների թիվը նվազի, հասնի նվազագույնի՝ դառնա 3, համակարգի կայունությունը կորվի սպառնալիքի տակ, քանզի նրանցից երկուսի միջև կռալիցիայի պարագայում երրորդ դերակատարը հայտնվում է միայնակի և թույլի վիճակում:

Այլ են երկբևեռ համակարգին բնորոշ դերակատարների վարքագծի նորմերը.

- Յուրաքանչյուր բևեռ (լինի դա պետություն թե դաշինք) ձրգտում է տապալել, բևեռի կարգավիճակից զրկել իր հակառակորդին:
- Երկբևեռ համակարգի պայմաններում դաշինքները հակված են ավելի հարատև լինել, դաշինքները հիմնված են հարաբերականորեն երկարատև, անփոփոխ շահերի վրա:
- Կոշտ երկբևեռ համակարգում միջազգային կազմակերպությունները որպես միջազգային քաղաքականության սուբյեկտ կա՛մ չեն ձևավորվում, կա՛մ էլ անարդյունավետ են գործում (օրինակ՝ ՄԱԿ-ը Սառը պատերազմի ժամանակ): Թույլ (մեղմ) երկբևեռ համակարգի պայմաններում միջազգային կազմակերպությունները կարող են զարգանալ և ստանձնել 2 դաշինքների միջև միջնորդի դերը:

Ռեալիստների քննարկման կիզակետում մշտապես առկա է եղել այն հարցը, թե բևեռայնության ո՞ր ձևի դեպքում են պատերազմներն առավել հավանական կամ անհավանական: Քեննեթ

Ուուլցը պնդում է, որ երկարաժամկետ հեռանկարում երկբևեռ համակարգն ամենակայունն է: Ըստ նրա՝ կողմերն ի վիճակի են նվազագույնի հասցնել միմյանց բռնությունն առաջ բերող վարքագծերը: Երկբևեռությունը ենթադրում է, որ 2 բևեռները շատ ավելի հզոր են մյուսներից (բոլորին միասին վերցրած): Ուժերի այս դիսպարիտետը (բևեռ-ոչ բևեռ հարաբերություններում) հնարավորություն է տալիս իրենց ուշադրությունը գլխավորապես կենտրոնացնել մեկը մյուսի վրա, հակազդել մյուսի գործողություններին, կանխամտածել իր պատասխան քայլերը՝ հաշվի առնելով երկբևեռության համատեղ անցյալն ու իրենց փոխհարաբերությունների ներկա բնույթը: Յուրաքանչյուրը ձգտում է պահպանել նման ուժային հավասարակշռությունը, որպեսզի պահպանի ինքն իրեն: Ջարգացնելով Ուուլցի դրույթները՝ իր հայտնի «Դարձ դեպի ապագա. անկայուն Եվրոպան Մառը պատերազմից հետո» (“Back to the Future: Instability in Europe after the Cold War”) հոդվածում Ջոն Միրշայմերը նշել է, որ երկբևեռության փլուզմամբ աշխարհը զրկվելու է այդ համակարգի արդյունքը հանդիսացող կայունությունից և կանխատեսելիությունից: Կոնֆլիկտները, պատերազմները կաճեն թվաքանակով ու մասշտաբայնությամբ:

Տեսականորեն համակարգի կայունության կարգավորիչ մեխանիզմն ավելի հեշտ կգործի բազմաբևեռ (ուժային հավասարակշռության) համակարգի պայմաններում. Առնվազն այն պատճառով, որ այստեղ առկա է հավասարակշռությունն ապահովելու գործառնություն ստանձնած դերակատարը (the balancer), ինչպես օրինակ Անգլիան 19-րդ դարում: Բազմաբևեռ համակարգում երկու դերակատարների խիստ մերձեցումը, օրինակ, կարելի է չեզոքացնել մյուս 2-ի կամ 3-ի մերձեցմամբ:

Միաբևեռ համակարգի կողմնակիցներն էլ գտնում են, որ միաբևեռ համակարգը կայունության տեսանկյունից ամենաարդյունավետն է: Կայունությունը հարատև է, եթե մեկ սուբյեկտ հեգեմոն է, վերահսկում է մյուս բոլորին: Փոլ Քենեդին, օրինակ, 19-րդ դարը

համարելով Անգլիայի հեգեմոնիայի, իսկ 2-րդ աշխարհամարտին հաջորդած ժամանակաշրջանը ԱՄՆ-ի հեգեմոնիայի ժամանակաշրջան, ասում է, որ այս երկու ժամանակաշրջաններում էլ աշխարհը առավել երկարատև խաղաղություն է վայելել:

Կոհեյնը գտնում է, որ հեգեմոնն ամեն ջանք ներդնում է միաբնեռայնությունը երկարատև դարձնելու համար, իսկ եթե այդ բնեռը կորցնում է իշխանությունը մյուսի հանդեպ, ապա համակարգը հայտնվում է վտանգի առջև:

Ստրատիֆիկացիան (խտրականությունը)

Միջազգային համակարգի կառուցվածքը, ըստ ռեալիստների, բնութագրվում է ինչպես բնեռայնությամբ, այնպես էլ ստրատիֆիկացիայով: Ստրատիֆիկացիայի անվան տակ հասկացվում է պետությունների հնարավորությունների տարբերությունները (տարբեր հնարավորությունները)՝ տիրապետելու կենսական կարևորություն ունեցող այն ռեսուրսներին, որոնք կարող են օգտագործվել իշխանության համար պայքարում: Ստրատիֆիկացիայի հանգամանքին մեծ ուշադրություն են դարձնում նաև ռադիկալները, սակայն այս հանգամանքը ռեալիստական մտածողության մեջ ևս արմատավորված է:

Պատմության մեջ եղած միջազգային տարբեր համակարգերի բնորոշ է եղել ստրատիֆիկացիայի տարբեր աստիճաններ, տարբեր վիճակներ: Ներկայիս միջազգային համակարգին բնորոշ է ստրատիֆիկացիայի բարձր աստիճան: Մեծ ութնյակի երկրները (ԱՄՆ, Ճապոնիա, Չինաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Բրիտանիա և Ռուսաստան) տիրապետում են ավելի շատ ռեսուրսների, քան աշխարհի մնացած մոտ 2 հարյուր երկրները միասին վերցրած: Ռեսուրսների տիրապետելու հանգամանքի հայտանիշով էլ այժմ պետությունների մի մասը դասվում է «ունևորների» (haves), մյուս մասը՝ «չունևորների» (have-nots) դասին: Ունևորներին հաճախ տրվում է Հյուսիս, չունևորներին՝ Հարավ ընդհանրական բնորոշումները (ելնելով այն հանգամանքից, որ հարուստ, բարձր կենսամակարդակ

ունեցող պետությունները հիմնականում տեղակայված են երկրագնդի հյուսիսային հատվածներում, ավելի աղքատները՝ հարավային): Այս դասակարգումը կարևորվում է միջազգային քաղաքատնտեսության դիսցիպլինում, որին կանդրադառնանք դասախոսությունների մյուս ժողովածուում:

Ռեսուրսների տիրապետման հարցում խտրականության հանգամանքը կարևորվում է միջազգային համակարգի կայունության, ինքնակարգավորման տեսանկյունից: Եթե առկա է մեկ կամ մի քանի համեմատաբար ունակ, հզոր պետության կողմից ստրատիֆիկացիայի վիճակը փոխելու ռեալ և լուրջ հնարավորություն, ապա կարող ենք մտածել միջազգային համակարգի հնարավոր վերափոխման մասին. Գերմանիայի՝ գաղութատեր դառնալու, այսինքն՝ ռեսուրսների տիրապետման առումով համաշխարհային խտրական վիճակը փոփոխելու ձգտումն ու քայլերն ի վերջո խաթարեցին համակարգի կայունությունը:

Միջազգային համակարգի վերափոխումների պատճառները՝ ըստ ռեալիստների

Ըստ ռեալիստների՝ 3 տիպի գործոններ կարող են պայմանավորել համակարգի վերափոխումը. 1. դերակատարների փոփոխություն, ինչը նշանակում է նրանց ուժերի հարաբերակցության փոփոխություն, 2. համակարգաստեղծ կամ համակարգի գոյության հիմքում ընկած նորմերի փոփոխություն, 3. համակարգի վերափոխում՝ պայմանավորված արտաքին գործոնի ազդեցությամբ:

Այսպես, համակարգը կարող է վերափոխվել՝ պայմանավորված կա՛մ համակարգի գլխավոր դերակատարների թվի աճով, կա՛մ նվազմամբ, կա՛մ այդ դերակատարների միջև ուժերի հարաբերակցության փոփոխությամբ (ինչը տեղի է ունենում, երբ համակարգի 1 կամ ավելի դերակատարի/ների հզորությունն ավելանում կամ պակասում է): Նման կարգի վերափոխումները, որպես կանոն, տեղի են ունենում պատերազմների արդյունքում: Այսպես օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի շրջանում և դրանից

հետո խիստ նվազեց Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հզորությունը, թեև այդ պետությունները պատերազմում հաղթող էին: Պատերազմը վերջ դրեց Գերմանիայի և Ճապոնիայի ինչպես իմպերիալիստական նկրտումներին, այնպես էլ նրանց երբեմնի ազգային հզորությանը: ԱՄՆ-ը և Խորհրդային Միությունը, որոնք նախկինում չէին հանդիսանում միջազգային համակարգի այնքան հզոր դերակատարներ, ինչպես օրինակ՝ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան էին, պատերազմից հետո դարձան համակարգի գերակշիռ ուժերը: Միջազգային համակարգի բևեռայնության ձևը փոխվեց. բազմաբևեռ համակարգը վերածվեց երկբևեռի:

Նեոռեալիզմի խոշոր ներկայացուցիչ Ռոբերտ Գիլփինը իր «Պատերազմը և փոփոխությունները համաշխարհային քաղաքականության մեջ» աշխատությունում փաստարկում է, որ միջազգային համակարգը կարող է վերափոխվել պետությունների՝ իրենց ազգային շահերի իրացմանն ուղղված նպատակասլաց քաղաքականություն վարելու արդյունքում:

Համակարգի սոցիալական նորմերի փոփոխությունը կարող է ֆունդամենտալ փոփոխություններ առաջ բերել համակարգում: Ասվածը չի նշանակում, որ ցանկացած նորմի փոփոխություն կարող է փոխակերպել համակարգը, ասվածը վերաբերում է որոշ նորմերի: Այսպես, միջուկային զենքի ներմուծումը ֆունդամենտալ կերպով վերափոխեց դերակատարների միջև հարաբերությունների կանոնները: Միջուկային զենքի զսպող էֆեկտը բացառեց միջազգային խոշոր դերակատարների միջև պատերազմների բռնկումը, ինչն էլ ավելի ամրապնդեց, կարծրացրեց միջազգային համակարգի երկբևեռ կառուցվածքը: Մեկ այլ օրինակ՝ միջազգային հարաբերությունների Վիեննայի համակարգի վերափոխումը 19-րդ դարի կեսերին, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված էր նաև դերակատարների կողմից համակարգի գաղափարաբանական գլխավոր նորմի՝ «Լեգիտիմիզմի» սկզբունքի վերանայման հետ: Վերափոխման արդյունքում համակարգը կորցրեց իր ճկունությունը, բևեռա-

ցումը սկսեց խորանալ դերակատարների միջև, ինչն արտահայտվեց հակամարտ ռազմաքաղաքական կարծր դաշինքների ձևավորմամբ:

Արտաքին միջավայրային պայմանները նույնպես ունակ են լուրջ վերափոխումների ենթարկել միջազգային համակարգը: Տեխնոլոգիաների զարգացումը, տրանսպորտային-կոմունիկացիոն ցանցի ընդլայնումն ու զարգացումը, արբանյակային համակարգերի ներդրումը և շատ այլ նմանատիպ արտաքին միջավայրային բնույթի գործոններ պայմանավորեցին մինչև 2-րդ աշխարհամարտը գոյություն ունեցող «եվրոցենտրիկ» համակարգի (երբ Եվրոպան հանդիսանում էր համակարգի կենտրոն, առանցք, միջուկ) վերափոխումը իսկապես միջազգային համակարգի (երբ ընդլայնվեցին համակարգի աշխարհագրական սահմանները, երբ Եվրոպան սկսեց դիտարկվել որպես ենթահամակարգ, այնպես ինչպես Մերձավոր Արևելքը, Հարավային Ասիան և այլ տարածաշրջաններ):

Միջազգային համակարգը՝ ըստ ռադիկալների

Ռադիկալների պատկերացումները միջազգային համակարգի վերաբերյալ արմատապես տարբերվում են ռեալիստների պատկերացումներից: Եթե ռեալիստները կարևորում են համակարգի կայունությունը, ապա ռադիկալները կարևորում են փոփոխությունը և ձգտում դրան. եթե ռեալիստների համար կարևոր հարցը համակարգի կայունությունն ինչպե՞ս պահպանելն է, ապա ռադիկալներին հուզում է «համակարգը վերափոխելն ինչու՞ է այդքան դժվար» հարցը:

Ռադիկալները միջազգային համակարգն առաջին հերթին բնութագրում են որպես ստրատիֆիկացված համակարգ: Արդյո՞ք միջազգային դերակատարների շրջանում ռեսուրսներն ու դրանց հասանելիության հնարավորությունները հավասարաչափ են բաշխված. ըստ նրանց՝ միանշանակ ոչ: Արդյոք համաշխարհային ռեսուրսների գերակշիռ մասը կապիտալիստական տերությունների մի խմբի ձեռքի՞ն է, իսկ երկրների մնացած մեծ մասի հնարավորու-

թյունները սահմանափակված են խիստ քիչ ռեսուրսների տիրապետմամբ. անվերապահորեն՝ այո: Այս տեսանկյունից կարևորագույն հարցերից մեկն էլ այն է, թե ո՞րն է պետությունների մեջ առկա այս մեծ խտրականության պատճառը:

Մարքսիստների, ինչպես նաև այլ ռադիկալների գնահատմամբ միջազգային համակարգի այս ստրատիֆիկացված բնույթը բխում է կապիտալիզմից, կապիտալիստական տնտեսավարումից, կապիտալիստական հասարակարգից: Կապիտալիզմն ինքն է ծնում գերտերությունների կողմից թույլ, աղքատ պետությունների հանդեպ գերիշխանության պահպանման և ամրապնդման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք միջազգային ինստիտուտներն են, որոնց նորմերը (օրենքները, կանոնները) ստեղծվում, թելադրվում են հզոր, տնտեսապես բարգավաճ տերությունների կողմից՝ կապիտալիստական գործընթացներն ուժեղացնելու համար, այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք բազմազգ կորպորացիաներն են, որոնց գլխամասերը գտնվում են նույն այդ կապիտալիստական տերությունների տարածքում, բայց որոնց գործունեությունը գերազանցապես ծավալվում է կախվածության մեջ գտնվող, թույլ երկրներում: Կապիտալիստական միջազգային շահագործողական գործառույթ են իրականացնում նաև թույլ երկրների բուրժուական վերնախավերը, ովքեր հաճախ տիրապետում են այդ երկրների քաղաքական իշխանությանը և այդպիսով իրենց երկրները, հանուն սեփական տնտեսական շահի, դնում են հզորներից մշտական կախվածության մեջ:

Ռադիկալները միջազգային տնտեսական հարաբերությունների ձևերի արմատական վերափոխումներ են պահանջում: Նրանց կարծիքով՝ միջազգային համակարգում տեղի ունեցող գործընթացներն իրենցից կատաղի պայքար են ներկայացնում ուժեղների և թույլերի միջև: 1970 թ. տնտեսապես խիստ թույլ, աղքատ երկրները (under-dogs) հանդես եկան «Նոր միջազգային տնտեսական կարգ» ստեղծելու պահանջով, ինչը ներառում էր գերտերությունների կողմից թույլ երկրների պարտքերի չեղյալ հայտարարում, բազմազգ

կորպորացիաների նկատմամբ միջազգային վերահսկողության սահմանում, միջազգային շուկայում առաջնահերթ ապրանքների գների սահմանման ձևերի վերանայում և այլն: Նույն ժամանակահատվածում համեմատաբար ավելի բարվոք վիճակում գտնվող երկրները՝ «զարգացողները», հանդես էին գալիս առավել ռեֆորմիստական կեցվածքով՝ պահանջելով պարտքերի վերաֆինանսավորում, այլ ոչ ներում, բազմազգ կորպորացիաների նկատմամբ ոչ պարտադիր, այլ կամավորության սկզբունքով վերահսկողության իրականացում և այլն:

Այսպիսով՝ ռադիկալները աշխարհի երկրների միջև գոյություն ունեցող տնտեսական մեծ անհամաչափությունը բացատրում են միջազգային համակարգի կառուցվածքի բնույթով: Այդ կառուցվածքն է կարգավորում, ուղղորդում, սահմանափակում միջազգային հարաբերություններում տեղի ունեցող բոլոր գործընթացները: Եթե ռեալիստների համար միջազգային համակարգի կառուցվածքի այդ պարտադրանքը դրական նշանակություն ունի, քանի որ միտված է ստատուս քվոյի պահպանմանը և հետևապես ցնցումների կանխմանը, ապա ռադիկալների համար կառուցվածքի պարտադրանքը խիստ բացասական նշանակություն ունի, քանի որ արգելակում է համակարգում հնարավոր վերափոխումները և հետևապես տնտեսական զարգացումները: Ըստ Իմմանուել Վալլերշտայնի՝ միջազգային համակարգի կառուցվածքն ինքը՝ կապիտալիզմն է, որը 16-րդ դարից սկսած, միջազգային համակարգի ամենաէական բնութագրիչն է: Միջազգային կապիտալիստական հարաբերություններն են ուղղորդում, սահմանում և սահմանափակում պետությունների վարքագիծը:

Ռադիկալների Աշխարհ-համակարգ տեսության ներկայացուցիչները հնարավոր են համարում միջազգային համակարգի անցընցում վերափոխումը. դա, ըստ նրանց, տեղի է ունենում, երբ որոշ պետություններ փոխում են իրենց կարգավիճակը պերիֆերիայից դեպի սեմիպերիֆերիա, սեմիպերիֆերիայից դեպի կենտրոն: Ժա-

մանակին Նիդերլանդներին Անգլիան գրկեց կապիտալիստական համակարգի ուժային կենտրոնի կարգավիճակից և ինքը գրավեց նրա տեղը: Անգլիային էլ նույն դերում փոխարինեց ԱՄՆ-ը: Այստեղ, իհարկե, խոսքը քանակական բնույթի վերափոխման մասին է: Իսկ այն հարցին, թե կարող է կապիտալիստական համակարգը ամբողջովին որակական վերափոխման ենթարկվել (նույնկերպ, ինչպես ֆեոդալական համակարգը փոխարինվեց կապիտալիստականով), ռադիկալները հաճախ հակասական պատասխաններ են տալիս: Վալլերշտայնը, օրինակ, խիստ հոռետես է այս հարցում՝ մատնանշելով այն հանգամանքը, որ կապիտալիստական համակարգում փոփոխությունները չափազանց դանդաղ են տեղի ունենում, ինչը չի կարող ապահովել ողջ համակարգի ամբողջական տրանսֆորմացիա (փոխակերպում):

Հանձնարարվող գրականություն

1. Morton Kaplan, System and Process in International Politics, NY, Krieger, 1976
2. Robert Keohane and Joseph Nye, Power and Interdependence, 3rd edition, NY, Longman, 2001
3. Robert Keohane, Power and Governance in a partially globalized World, Routledge, London-NY, 2004, pp. 16-88
4. Hedley Bull and Adam Watson, eds., The Expansion of International Society, Oxford University Press, 1984
5. Kenneth Waltz, International Structure, National Force and the Balance of World Power, in Kenneth Waltz, Realism and International Politics, Routledge, NY-London, 2008, pp.137-151
6. John Mearsheimer, Back to the Future, : Instability In Europe after the Cold War, International Security, 15:1, Summer 1990,
7. Paul Kennedy, The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000, NY, Random House, 1987
8. Robert Gilpin, War and Change in World Politics, Cambridge University Press, 1981

Դասախոսություն 9

Միջազգային հարաբերությունների վերլուծության միավորային (պետական) մակարդակը

Ինչպես գիտենք, միջազգային հարաբերությունների վերլուծության պետական մակարդակում վերլուծության, ընդհանրացումների ու հետազոտությունների ելակետը պետության ատրիբուտիկան է, այսինքն, միջազգային հարաբերություններում տեղի ունեցող զարգացումները բացատրվում են՝ ելնելով պետության տարբեր հատկանիշներից (ինչպիսի քաղաքական համակարգ ունի, ներպետական ո՞ր դերակատարներն են առավել ազդեցիկ արտաքին քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնելու հարցում, ի՞նչպես է ձևակերպվում պետության շահը և այլն:) Ի տարբերություն համակարգակենտրոն վերլուծաբանների (system-level analysts – վերլուծաբաններ, որոնք միջազգային հարաբերությունների տարբեր սուբյեկտների մեկնաբանման ելակետ ընդունում են գերազանցապես միջազգային համակարգի կառուցվածքային առանձնահատկությունը), որոնք պնդում են, որ համակարգն է ստիպում/դրդում պետություններին դրսևորել այս կամ այն վարքագիծը, պետականակենտրոն վերլուծաբանները (state-level analysts) գտնում են, որ պետությունը միջազգային արենայում վարքագիծ դրսևորելու հարցում բավականին ինքնուրույն է: Իհարկե, պետականակենտրոն վերլուծաբանները անպայմանորեն հաշվի են նստում համակարգային մակարդակի իրողությունների, համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների հետ, բայց և ընդունում են այն կանխավարկածը, որ «նույնիսկ ամենաթույլ պետությունը չի կարող միջազգային համակարգի «խամաճիկը» հանդիսանալ»:

Այսպիսով, պետական մակարդակի վերլուծությունը կենտրոնանում է այն հարցերի վրա, թե ի՞նչ են անում պետությունները և թե ինչու՞ և ինչպե՞ս են նրանք որոշում դա անել: Ի՞նչ են անում պետու-

թյունները հարցին պատասխանելու համար կիրառվում է իրադարձությունների փաստացի վերլուծության ձևը (event analysis), որի էությունը է հետևյալում է. պետության կողմից կատարված մի քանի գործողություններ համադրելով, կշռադատելով դրանց հետևանքները, կատարվում է ընդհանրական եզրակացություն, թե ինչ քաղաքականություն է վարում պետությունն այս հարցում (ինչ է անում): Պետական մակարդակի վերլուծության երկրորդ թիրախն է «ինչն է և ինչպե՞ս են որոշում անել» հարցը: Իսկ այստեղ կիրառվում է որոշումների կայացման վերլուծության մոդելը (decision-making analysis), որի էությունը որոշումների կայացման դրդապատճառների և կայացման գործընթացի վրա ազդող գործոնների համալիրի բացահայտումն է:

Պետականության չափանիշները

Որևէ սոցիալական կառույց, համակարգ որպես պետություն բնորոշվելու համար չորս հիմնական չափանիշներ պետք է բավարարի. 1. Պետությունը պետք է տարածքային հիմք, աշխարհագրորեն հաստատված սահմաններ ունենա: 2. Իր տարածքում որոշակի բնակչություն պետք է բնակվի: 3. Պետք է ունենա իշխանություն, որին ենթարկվելու է բնակչությունը: 4. Պետությունը պետք է մյուս պետությունների կողմից դե յուրե ճանաչված լինի*:

Իհարկե, պետականության չափանիշները կարող են և բացարձակ չլինել. օրինակ՝ պետության սահմանները կարող են միջազգայնորեն ճանաչված չլինել, պետության իշխանությունը կարող է անհրաժեշտ չափով լեգիտիմություն չունենալ, բնակչությունը անհնազանդություն հայտնի իր պետական իշխանությանը, շատ պետություններ կան, որ դիվանագիտական ճանաչում կա՛մ ոչ մեկի

* Ի տարբերություն *դե ֆակտո* ճանաչման, *դե յուրե* ճանաչումն իրենից ենթադրում է դիվանագիտական հարաբերությունների հաստատում ճանաչող և ճանաչվող պետությունների միջև: Այսպես օրինակ՝ Թուրքիան չայաստանին մինչ օրս դե յուրե չի ճանաչել, նրանց միջև դիվանագիտական հարաբերություններ չկան:

կողմից ձեռք չեն բերել, կա՛մ շատ քիչ պետությունների կողմից են ձեռք բերել:

Պետության հայեցակարգային մոտեցումները

Սոցիալական գիտությունների տարբեր ուղղություններ տարբեր կերպ են մեկնաբանում պետության ֆենոմենը, տարբեր կերպ են իմաստավորում և արժևորում պետության ատրիբուտները, պետականության չափանիշները: Վերը նշված 4 չափանիշները իրավական բնույթ ունեն, մինչդեռ շատ տարբեր պարադիգմաներ պետությանը վերագրում են ոչ իրավական բնույթի շատ չափանիշներ, այսինքն՝ պնդում են, որ պետություն բնորոշվելու համար քաղաքական այսինչ կառույցը պետք է բավարարի այսինչ չափանիշները ևս (վերոնշյալներից բացի): Այսպիսով, երևան են գալիս պետության հայեցակարգային տարբեր մոտեցումներ, որոնցից 3-ը կներկայացնենք ստորև:

Պետության լիբերալ հայեցակարգային մոտեցումը

Ըստ լիբերալների՝ պետությունը թեև ինքնիշխան քաղաքական միավոր է, բայց ինքնուրույն, ավտոնոմ դերակատար չի: Պետության գործառույթը (ֆունկցիան) քաղաքական խաղի հիմնական կանոնների պահպանումն է, ինչը հնարավորություն է տալիս, որ ներպետական տարբեր դերակատարներ, խմբեր իրենց շահերի իրացմանն ուղղված գործունեության ընթացքում արդար և արդյունավետ մրցակցության պայմաններում գտնվեն: Ազգային շահը չի կարող բնորոշվել որպես միակ և համընդհանուր: Ազգային շահերը բազմաթիվ են: Այդ շահերը հաճախ մրցակցում են պլյուրալիստական** միջավայրում: Պետության ազգային շահերը փոփոխվում են՝ արտացոլելով ներպետական դերակատարների միջև ուժային, դիրքային հարաբերակցությունները կամ դրանց փոփոխությունները:

** Պլյուրալիզմ նշանակում է բազմակարծություն:

Պետության ռեալիստական հայեցակարգային մոտեցումը: Ռեալիստների կողմից պետության՝ որպես միասեռ օրգանիզմի, դերը միջազգային քաղաքական գործընթացներում խիստ արժևորելու պատճառով ընդունված է համարել, որ միջազգային հարաբերությունների բազում հիմնախնդիրների դիտարկման, դրանց մեկնաբանման հարցում ռեալիստները հանդես են բերում պետականակենտրոն մոտեցումներ: Նրանք պնդում են, որ պետությունը ինքնավար, ավտոնոմ դերակատար է, և որ նրա ազգային շահերից բխող նպատակասլաց գործունեությունը կարող է խոչընդոտվել կամ մոդիֆիկացվել միայն միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգի կառուցվածքի պատճառով: Պետությունն օժտված է ինքնիշխանությամբ. իր սահմանների ներսում տեղի ունեցող բազմաբնույթ պրոցեսները, ծագող բազմաթիվ խնդիրները միայն պետության ենթադատությանն են պատկանում: Պետության իրավասության շրջանակներում են գտնվում անվտանգության, տնտեսության, կառավարման ոլորտի բազում հիմնախնդիրները: Միջազգային ասպարեզում պետության հետապնդած նպատակների ամբողջությունը հանգում է մի տրամաբանական վերջնակետի. դա պետության ազգային շահն է, որը բնորոշվում է որպես իշխանություն, հզորություն:

Պետության ռադիկալ հայեցակարգային մոտեցումները: Ռադիկալները առաջ են քաշում պետության երկու հայեցակարգային տեսակետ, երկու դեպքում էլ ընդգծելով պետության ձևավորման և գործառնության հարցում կապիտալիզմի և կապիտալիստական դասակարգի դերը: Ըստ առաջին տեսակետի՝ պետությունը բուրժուազիայի գործակալն է, նրա ձեռքի գործիքը: 2-րդ տեսակետը պետությունը դիտարկում է որպես կապիտալիստական համակարգի կառուցվածքային տարր: Պետությունը էքսպանսիոնիստական քաղաքականություն է վարում ոչ թե բուրժուազիայի թելադրանքով, այլ այն պատճառով, որ համաշխարհային կապիտալիստական համակարգի տրամաբանությունն է մղում պետությունը դիմել էքսպան-

սիայի (պետությունը հայտնվում է մրցակցության մեջ մյուս պետությունների հետ մեկտեղ՝ «բարիքները վայելելու հարցում», և եթե նա չվարի նման քաղաքականություն, չի օգտվի այդ բարիքներից, կթուլանա պետական մեքենան՝ իրենից բխող բոլոր հետևանքներով): Երկու տեսակետներն էլ չեն ընդունում ազգային շահի գաղափարը. տնտեսական շահերն են թելադրում պետության վարքագիծը: Ինքնիշխանությունը, ըստ ռադիկալների, ձևական է, քանզի պետությունը ենթարկվում է կա՛մ բուրժուազիային (1-ին տեսակետ), կա՛մ էլ կապիտալիստական համակարգի պարտադրանքին (2-րդ տեսակետ):

Լիբերալ, ռեալիստական և ռադիկալ հայեցակետերի հակադրությունը: Այս հակադրությունը կարելի է բավականին հեշտությամբ բացահայտել, եթե վերլուծության մեկնակետ վերցնենք, օրինակ, նավթը:

Այսպես, լիբերալ տեսանկյունից պետության վարքագիծը պայմանավորված է ներպետական դերակատարների շահերի պայքարով ու համաձայնեցմամբ: Սպառողները (դերակատար Ա) ձգտում են նավթի գները հնարավորինս ցածր պահել: Նավթը որպես հիմնական վառելիք օգտագործող արդյունաբերական ձեռնարկությունների տերերը (դերակատար Բ) կրկին ձգտում են հնարավորինս ցածր գնով գնել նավթը, սակայն նրանց ավելի շատ հետաքրքրում է ոչ թե նավթի գինը, այլ նավթի մատակարարումների կայունությունը, որպեսզի ձեռնարկություններն անխափան աշխատեն: Իսկ նավթ արտադրող կամ նավթ ներմուծող ընկերությունները (դերակատար Գ) ձգտում են նավթի գները բարձրացնել: Լիբերալները գտնում են, որ պետությունն ինքը ոչ մի շահագրգռություն չպետք է ունենա նավթի գների հարցում. պետության ֆունկցիան պետք է լինի բոլոր դերակատարների, շահերի բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների տրամադրումը, խաղի հստակ կանոնների պահպանումը:

Ռեալիստական հայեցակետի համաձայն՝ պետությունը նավթային քաղաքականությունը ծառայեցնում է իր ազգային շահերին: Պետությունը ձգտում է կայունության՝ նավթի և այլ լայն սպառողական ապրանքների գների ու մատակարարումների հարցում: Օրինակ՝ ԱՄՆ-ը ձգտում է երաշխավորել նավթի անվտանգ և ապահով մատակարարումը կայուն, ընդունելի գներով: Սակայն հնարավոր է նաև, որ պետությունը նպաստի նավթի գների բարձրացման գործում, եթե ազգային շահը պահանջի, որ իր նավթ արդյունահանող ձեռնարկությունները կապիտալ կուտակեն և հզորանան:

Ռադիկալ մոտեցման համաձայն՝ նավթի (ինչպես և այլ լայն սպառողական ապրանքների) քաղաքականությունը բխում է կապիտալիստական դասակարգի շահերից և արտացոլում է համաշխարհային կապիտալիստական համակարգի տրամաբանությունը: Նավթի գնի և մատակարարումների վերաբերյալ բանակցությունները ռադիկալիզմը համարում է շահագործողական, թույլ պետությունները կամ խմբերը զիջում են իրենց դիրքերն ուժեղներին: Ռադիկալ մտքի համաձայն՝ նավթով հարուստ, բայց թույլ և աղքատ երկրները (Նիգերիա, Մեքսիկա և այլն) մշտապես գործում են միջազգային նավթային ընկերությունների (որոնք սերտաճած են համաշխարհային կապիտալիստական համակարգի հետ) ու հզոր, հարուստ պետությունների թելադրանքով:

Պետության հզորության/իշխանության տարրերը

Իշխանությունը պետության ամենաբնութագրական հատկանիշներից մեկն է: Այսպիսով, մենք գործ ենք ունենում իշխանության արտաքին չափման հետ (power), երբ դիտարկում ենք պետության հարաբերություններն այլ պետությունների հետ և իշխանության ներքին չափման հետ (authority, power), երբ դիտարկված օբյեկտ հանդիսանում է պետական իշխանության հարաբերությունները քաղաքական համակարգի այլ սուբյեկտների, ներպետական ակտորների հետ: «Հզորություն» եզրը օգտագործում ենք ավելի շատ

իշխանության արտաքին չափման պարագայում, «իշխանություն» և «հզորություն» հասկացությունները գրեթե նույնացնելով: Այսինքն՝ նկատի ենք ունենում այն դրույթը, որ արտաքին միջավայրում պետության իշխանության հաստատման սահմանագիծը ուղիղ համեմատական է նրա հզորության հետ. որքան հզոր է պետությունը, այնքան մյուս պետությունների հետ ունեցած իշխանական հարաբերությունները (power relationship) նրա շահերին են ծառայում:

Հզորությունը հստակորեն գնահատելը, չափելը գրեթե անհնար է, սակայն կան որոշ չափորոշիչներ, որոնց կիրառմամբ հնարավոր է չափել պետության համեմատական/հարաբերական հզորությունը: Խոսքը գնում է պետության հզորության տարրերի մասին: Այդ տարրերը տարբեր կերպ կարելի է դասակարգել՝ բնական-սոցիալական, հաշվելի-անհաշվելի և այլն:

Պետության բնական հզորության տարրերը մեծ նշանակություն ունեն արտաքին միջավայրում պետության իշխանական հարաբերությունների իրականացման արդյունավետության տեսանկյունից: Բնական տարրերի շարքում առանձնակի նշանակություն է տրվում երեքին՝ տարածք և աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ, բնակչություն:

Տարածք և աշխարհագրական դիրք. Տարածքի մեծությունն ինքնին հզորության չափանիշ է. մեծ տարածք ունենալ, ենթադրում է ունենալ նաև շատ բնական ռեսուրսներ, բազմազան ռելյեֆ. վերջինս, մեծ տարածության հետ միասին հուսալի պատվար է թշնամիների ներխուժումից պաշտպանվելու, կամ, առնվազն, որոշ ժամանակ շահելու առումով: Ի թիվս այլ պատճառների (խստաշունչ կլիմա, ռուսների բազմաքանակություն և այլն)՝ Ռուսաստանի՝ մեծ տարածք ունենալու հանգամանքը ազդեցիկ գործոն էր Նապոլեոնի 1812թ. արշավանքի ձախողման գործում: Այսուհանդերձ, ամեն մի լայնատարած պետություն չէ, որին կարելի է բնութագրել իբրև հզոր (մասնավորապես հին աշխարհի և միջին դարերի սակավակյաց կայսրությունները՝ Աքեմենյան Պարսկաստանը, Մակեդոնացու պե-

տությունը, Հոների պետությունը, Մելջուկյան պետությունը և այլն): Մեծ տարածքը, առանց անհրաժեշտ զարգացած ենթակառուցների, հզորության տարր հազիվ թե հանդիսանա: Մեծ տարածքն իրենից ենթադրում է նաև երկարաձիգ սահմաններ, իսկ սահմանների երկարությունն ուղիղ համեմատական է պետության խոցելիությանը. ուրեմն երկար սահմաններ ունենալու պարագայում պետությունը պետք է ավելի շատ ռեսուրսներ ներդնի սահմանների անխախտելիությունն ապահովելու համար: Տարածական չափորոշիչների մեջ կարևոր նշանակություն ունի մայրաքաղաքի տեղակայման հարցը. որքան մայրաքաղաքն ու այլ մարդաշատ քաղաքներ գտնվեն պետության խորքում, այնքան պետությունը հեռու կմնա դեկապոտացիայի վտանգից (թարգմանաբար՝ գլխատում, տվյալ դեպքում նկատի ունենք մայրաքաղաքի գրավումը կամ նրան ուժեղ հարվածներ հասցնելը): Որոշ տեսաբանների կարծիքով Ղազախստանի իշխանությունների կողմից երկրի մայրաքաղաքը Ալմա-Աթայից Աստանա տեղափոխելը, ի թիվս այլ պատճառների, բացատրվում է նաև նշված նկատառումով:

Միջազգային հարաբերություններում աշխարհագրական գործոնների դերը խիստ արժևորվում է քաղաքագիտության դիսցիպլիններից մեկի՝ աշխարհաքաղաքականության (գեոպոլիտիկա) կողմից: 1890-ական թթ. վերջերին աշխարհաքաղաքականության հիմնադիրներից մեկը՝ Ալֆրեդ Մեհենն իր աշխատության մեջ (*The influence of Seapower upon History 1660-1783*) չափազանց կարևորելով ծովային տարածքը վերահսկելու հանգամանքը, փաստարկում էր, որ այն պետությունը, որ կվերահսկի օվկիանոսի ափերը, կտիրի աշխարհին: 20-րդ դ. սկզբին բրիտանացի աշխարհագետ սրբ Հալֆորդ Մաքհինդերը, հակադրվելով Մեհենի այս տեսությանը, փաստարկում էր, որ աշխարհի հզորագույնը կլինի այն պետությունը, որը կվերահսկի եվրասիական «Հարթլենդը»: «Ով տիրում է Արևելյան Եվրոպային, վերահսկում է եվրասիական Հարթլենդը, ով տիրում է Հարթլենդին, վերահսկում է Համաշխարհային կղզին

(Եվրոպա, Ասիա և Աֆրիկա), ով տիրում է Համաշխարհային կղզուն, վերահսկում է ողջ աշխարհը»: Չարգացնելով Մաքինդերի գաղափարները՝ գերմանացի աշխարհագետ և ստրատեգ Կարլ Հաուսհոֆերը պնդում էր, որ Առաջին աշխարհամարտում պարտված Գերմանիան հզոր պետություն կդառնա, եթե տիրի եվրասիական Հարթլենդին: Հատկանշական է, որ նացիստական Գերմանիայի նվաճողական քաղաքականության գիտատեսական հիմքում մեծ չափով դրված էին Հաուսհոֆերի գաղափարները:

Բնական ռեսուրսները, լինեն վերականգնվող կամ ոչ, պետության հզորության խիստ կարևոր չափանիշ են: ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Ղազախստանը, Իրանը և այլ պետություններ, ի թիվս այլ պատճառների, նաև իրենց բնական ռեսուրսների շնորհիվ են հզոր պետություններ: Բնական ռեսուրսների մեջ բնականաբար մեծ նշանակություն ունեն էներգակիրները (նավթ, գազ, ուրան և այլն): Էներգակիրների տիրապետելը այն հաղթաթուղթն է, հզորության այն կարևոր տարրն է, որի շնորհիվ պետությունը կարողանում է արտաքին միջավայրի իշխանական հարաբերություններում հաղթողի դիրքերից հանդես գալ: Եվ որքան աճում են էներգակիրների գները, այնքան աճում է պետությունների հզորությունը (այդուհանդերձ, նավթային խաղի տեսություններից մեկի համաձայն, նավթի գների բարձրացումը պետությանը ներքուստ ավելի ավտորիտար է դարձնում, արտաքուստ ավելի կոշտ, ինչը վերջին հաշվով նպաստում է պետության թուլացմանը): Այսօր Քուվեյթի, Միացյալ Արաբական Էմիրությունների պես տարածքով փոքրիկ պետությունները միջազգային թատերաբեմում մեծ հեղինակություն ունեն: Էներգակիրներից բացի, կարևորվում են նաև այլ մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոները, խմելու ջրի պաշարները, ռոռզելի հողերի մասշտաբը, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը և այլն: Բնական ռեսուրսների առատությունը նույնպես կարող է հանդիսանալ պետության խոցելի կողմերից մեկը. Քուվեյթի՝ նավթառատ երկիր հանդիսանալու հանգա-

մանքը Իրաքին դրդեց 1990 թ. օգոստոսին զավթել Քուվեյթը: Կոնգոյում թանկարժեք քարերի առատությունն այստեղ մշտապես արյունալի բախումների պատճառ է: Այսպիսով, բնական ռեսուրսների առատությունը նպաստում է հզորության աճին այն դեպքում, երբ այդ ռեսուրսները շահագործվում են ռացիոնալ կերպով, ճիշտ մենեջմենթի միջոցով: Մյուս կողմից, բնական ռեսուրսների սակավությունը չի ենթադրում, որ պետությունը պարտադիր պետք է հզոր չլինի. Ճապոնիայի օրինակն այս առումով միանգամայն հատկանշական է:

Բնակչություն: Շատ բնակչությունը հզորության չափանիշ է (մարդաշատ բանակ, մարդաշատ սպառողական շուկա, արտադրական ներուժ, տարբեր ոլորտներում պրոֆեսիոնալների ընտրության լայն հնարավորություն և այլն): Գերմանիայի միավորման առաքելությունն իրականացրած կանցլեր Օտտո Բիսմարկը Ռուսաստանի դեմ պատերազմելու վտանգավոր կողմերից մեկը համարում էր այդ երկրի խիստ մարդաշատ լինելը: Սակայն պետք է կրկին նշենք, որ հզոր կոչվելու համար մեծաքանակ բնակչություն ունեցող պետությունը մի քանի չափանիշներ պետք է բավարարի. բնակչության կրթվածության մակարդակ, եկամուտների բաշխվածության տարբերություն, սոցիալական ծառայությունների որակ և այլն:

Պետության՝ վերը նշված բնական հզորության տարրերի կարեւորությունը մեծապես պայմանավորվում է հզորության մյուս տիպի (ոչ բնական) չափելի և ոչ չափելի տարրերի առկայությամբ: Այսպես, *արդյունաբերական զարգացվածությունը* համարվում է ազգային հզորության կարևորագույն չափելի տարրերից մեկը: Արդյունաբերական զարգացման բարձր մակարդակի պայմաններում պետության տարածքի մեծության կամ բնակչության շատ լինելու կարևորությունը կարող է նվազել: Օրինակ՝ արդյունաբերապես զարգացած պետությունը կարող է շատ լավ կազմակերպել իր պաշտպանական գործը փոքր տարածքի և սակավաթիվ բնակչության պայմաններում: Ազգային հզորության ոչ չափելի տարրերից է *հստատեղ*

րականացնող աշակերտության հանգամանքը: Որքան հասարակությունն աջակցի իր իշխանություններին (այսինքն՝ որքան իշխանությունները լեգիտիմ լինեն իրենց երկրի ներսում) արտաքին քաղաքական այս կամ այն խնդրի կապակցությամբ, այնքան պետությունը միջազգային թատերաբեմում ավելի վստահ հանդես կգա: Հասարակության միաբանությունը, աջակցությունը խիստ կարևորվում է հատկապես ճգնաժամային իրավիճակների, պատերազմների ժամանակ: Հայության նվիրվածությունն ու հանրային աջակցությունը հիրավի ամենակարևոր նախապայմանը հանդիսացավ Արցախի գոյամարտում մեր ազգի հաղթանակը կերտելու գործում: Բարայելի իշխանությունները նույնպես իրենց հասարակության ջերմ աջակցությունն ունեին իրենց թիկունքում, երբ Մերձավոր Արևելքում մղած բոլոր պատերազմներում հաղթող դուրս եկան: Մինչդեռ Վիետնամի դեմ պատերազմում ԱՄՆ-ի կրած անհաջողության պատճառներից մեկն այն էր, որ պատերազմը չէր վայելում ամերիկյան հասարակության աջակցությունը:

Պետության հզորության ոչ չափելի տարրերից է նաև *ազգային իմիջքը*: Ազգային իմիջ կերտելու հարցում հաջողություն են ունենում հատկապես այն երկրները, որոնք ավելի շատ են ներգրավված համաշխարհային և միջազգային տնտեսական, գիտամշակութային համագործակցության և ինտեգրացիոն գործընթացների մեջ: Օրինակ՝ Շվեյցարիան միջազգային հանրության կողմից ընկալվում է որպես հուսալի ֆինանսաբանկային կենտրոն, Ճապոնիան՝ որպես տեխնոլոգիապես խիստ զարգացած երկիր, Կանադան, Շվեյցարիան, Սկանդինավյան երկրները՝ որպես բարեկեցության սիմվոլներ և որպես հումանիտար օգնություն ցուցաբերող երկրներ: Թուրքիան, որի բնակչության ճնշող մեծամասնությունը դավանում է իսլամը, մշտապես փորձել է միջազգային հանրության աչքին ստեղծել աշխարհիկ, արևմտյան տիպի, ժողովրդավար պետության իմիջ, որը Թուրքիային մեծամասամբ հաջողվել է: Մինչդեռ Իրանը ֆունդամենտալ իսլամիստ հասարակությունների աչքին ունի «արևմտյան

քաղաքակրթության, ԱՄՆ-ի Ճնշումներին դիմակայող» պետության իմիջ:

Պետության հզորության գործադրումը

Պետության հզորության գործադրում ասելով հասկանում ենք պետության հզորության տարրերի այնպիսի կիրառում, որը նպատակաուղղված է արտաքին իշխանական հարաբերությունները ի շահ տվյալ պետության ուղղորդմանը: Այնքան ժամանակ, քանի դեռ չի գործադրվում պետության հզորությունը, այն անվանում ենք պոտենցիալ հզորություն, իսկ գործադրման պրոցեսում գտնվող հզորությունն անվանում ենք արդյունավետ/էֆեկտիվ հզորություն: Պետությունները ձեռնարկում են բազմաթիվ միջոցներ՝ իրենց հզորության պոտենցիալն իրացնելու համար: Պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների այդ համալիրը (statecraft) պարունակում է 3 հիմնական միջոցներ՝ դիվանագիտություն, տնտեսական միջոցներ, ուժային միջոցներ: Հատկանշական է, որ այդ միջոցները կարող են ձեռք առնվել ինչպես հաջորդական, այնպես էլ միաժամանակյա սկզբունքով: Այն պետությունը, որը գործադրում է իր հզորությունը այլ պետության հանդեպ, պայմանականորեն կոչենք սուբյեկտ պետություն: Այն պետությունը, որի դերը ուղղված է սուբյեկտ պետության հզորությունը, կոչենք թիրախ պետություն:

Դիվանագիտություն

Դիվանագիտությունը խաղաղ միջոցների ամբողջություն է (բանակցություններ, սակարկություններ, հայտարարություններ, հնարքներ և այլն)՝ ուղղված թիրախ պետության վարքագծի ուղղորդմանը, փոփոխմանը կամ վերահսկմանը: Պետության հզորությունը դիվանագիտությամբ գործադրելու ձևեր կարող են հանդես գալ հետևյալները.

- Ցույց տալ թիրախ պետությանը, որ խիստ դժգոհ է այսինչ հարցում նրա վարած քաղաքականությունից:

- Հավաստել, որ իրենց միջև հարաբերությունները կբարելավվեն, եթե թիրախ պետությունը վերանայի իր քաղաքականությունը:
- Ձգուշացնել, սպառնալ, թե ինչ վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ թիրախ պետության կողմից նույն քաղաքականության շարունակումը:
- Իր դիրքորոշման աջակիցներ գտնել (կա՛մ որևէ միջազգային կազմակերպության շրջանակներում, կա՛մ այլ պետությունների հետ երկկողմ հարաբերություններում)՝ թիրախ պետության վրա ճնշում գործադրելու նպատակով:
- Ձիջել, տալ թիրախ պետությանը այն, ինչ նրան անհրաժեշտ է (դիվանագիտական ճանաչում, քաղաքական, դիվանագիտական աջակցություն)՝ վերջինիս կողմից սուբյեկտ պետությանը ցանկալի վարքագիծ դրսևորելու պայմանով:
- Դադարեցնել քաղաքական, դիվանագիտական աջակցությունը, խզել դիվանագիտական կապերը, երբ թիրախը շարունակի իր համար անցանկալի վարքագիծ դրսևորելը:

Բանակցությունները հանդիսանում են դիվանագիտության իրականացման ամենատարածված և արդյունավետ միջոցներից մեկը: Սակարկությունը (bargaining) բանակցության մի ձև է, որի գործելակերպն է համարժեք ռեսուրսների, արժեքների առաջարկումն ու ընդունումը: Կան բանակցությունների այլ ձևեր, որտեղ սակարկություն տեղի չի ունենում: Դրանցից են օրինակ՝ ուժի դիրքերից բանակցությունները (Նապոլեոն Բոնապարտը հաճախ էր օգտագործում այս մեթոդը):

Բանակցություններին ու սակարկություններին բնորոշ կարևոր հատկանիշներից մեկը երկմակարդակ բնույթն է: Լիբերալ ընկալմամբ երկմակարդակ բնույթի էությունը նրանում է, որ բանակցություններն ու սակարկությունները կատարվում են ինչպես թիրախ պետության հետ, այնպես էլ ներպետական ակտորների (քաղաքական ուժեր, հասարակություն, պառլամենտ և այլն) հետ: Այսպիսով,

բանակցողը ստիպված է լինում կա՛մ բանակցությունների արդյունքը համաձայնեցնել վստահորդների հետ, կա՛մ նրանց դիրքորոշումը հաշվի առնելով՝ փոխել բանակցային ռազմավարությունը կամ մարտավարությունը և այդպես շարունակ: Ռեալիստական ընկալմամբ «երկմակարդակ խաղի» էությունը նրանում է, որ բանակցությունների ու սակարկությունների արդյունքները համաձայնեցվում են միջազգային համակարգի առաջադրած խաղի կանոններին: Այսպիսով, եթե լիբերալները բանակցային գործընթացի երկրորդ մակարդակը համարում են բանակցող-վստահորդներ (ներպետական դերակատարներ) հարաբերությունները, ապա ռեալիստներն ավելի շատ կարևորություն են տալիս պետություն-միջազգային համակարգ հարաբերություններին:

Բանակցություններին բնորոշ մյուս կարևոր հատկանիշը բանակցային մշակույթն/կուլտուրան է: Բանակցային մշակույթը բանակցային ավանդույթների, սովորույթների ամբողջություն է, որը բնորոշ է տվյալ սոցիալական հանրությանը (կրոնական համայնք, դասակարգ, ազգ, քաղաքակրթություն և այլն): Բանակցային մշակույթային տարբերությունները կամ ընդհանրությունները, ըստ լիբերալ մոտեցման, կարևոր ազդեցություն են թողնում բանակցությունների արդյունքների վրա:

Տնտեսական միջոցներ

Եթե դիվանագիտությունը հզորության գործադրման վերբալ (խոսքային, երբ խոսքն է հզորության գործադրման/ցուցադրման գործիքը, միջոցը) տարբերակ է, ապա տնտեսական միջոցները հզորության գործադրման ավելի շոշափելի, գործնական տարբերակ են: Այսպիսով, սուբյեկտ պետությունը թիրախ պետության վարքագծի ուղղորդման, փոփոխման, դադարեցման կամ վերահսկման նպատակով կարող է նրա հանդեպ տնտեսական սանկցիաներ կիրառել: Տնտեսական պոզիտիվ սանկցիաներն այն միջոցներն են, որոնք թիրախ պետության համար տնտեսական օգուտ են նախա-

տեսում՝ վերջինիս կողմից իր վարքագիծը վերանայելու պայմանով կամ դեպքում (պոզիտիվ սանկցիաների գործադրումը հաճախ անվանվում «քաղաքաբլիթի քաղաքականություն»): Տնտեսական նեգատիվ սանկցիաները նախատեսում են տնտեսական սահմանափակումներ, վնասներ կամ պատիժներ՝ թիրախ պետության կողմից իր քաղաքականության չվերանայման պարագայում (նեգատիվ սանկցիաների գործադրումը հաճախ անվանվում է «մահակի քաղաքականություն»):

Բնականաբար տնտեսական սանկցիաներ կարող է գործադրել համեմատաբար հզոր պետությունը: Միայն տնտեսապես զարգացած երկրները կարող են, օրինակ, դրամաշնորհներ տրամադրել, ներդրումներ իրականացնել, արտոնություններ տալ, արդյունավետորեն բոյկոտել և այլն՝ այս ամենը ծառայեցնելով քաղաքական նպատակների: Ռադիկալները հաճախ են մատնանշում այս հանգամանքը՝ ցույց տալու համար միջազգային կապիտալիստական համակարգի գերակա, գերիշխող կարգավիճակը: Լիբերալները գտնում են, որ զարգացող երկրներն էլ են որոշակի իրավիճակներում տիրապետում տնտեսական լծակների (թեև ռադիկալները մերժում են այս տեսակետը): Օրինակ՝ այն զարգացող երկիրը, որը տիրապետում է դժվարամատչելի, թանկարժեք և խիստ կարևոր հումքային կամ այլ ռեսուրսի, կկարողանա օգտագործել այդ որպես հզորության տարր և գործադրել այն ի նպաստ իր շահերին: Արդարության դեմ չմեղանչելու համար, սակայն պետք է նշենք, որ նման ռեսուրսների տեսականին կա՛մ քիչ է, կա՛մ իրավիճակներն են հազվադեպ դասավորվում ի նպաստ զարգացողների: Այսպես, այդ սակավատեսակ ռեսուրսների թվում կարելի է առանձնացնել նավթը: Նավթ արտահանող երկրների կազմակերպության (OPEC-Organization of Petroleum Exporting Countries) անդամ արաբական երկրները 1973 թ. կարողացան նավթային սանկցիաներ կիրառել ԱՄՆ-ի և Նիդերլանդների նկատմամբ, որոնք բացահայտ աջակցում էին Իսրայելին արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ:

Թույլ երկրները թեև չեն կարող նման սանկցիաներ կիրառել, սակայն կարող են առավել քիչ հարկադրական բնույթի միջոցներով ազդել թիրախ պետությունների արտաքին քաղաքական որոշումների ընդունման գործընթացների վրա: Ազդեցության նման միջոցների օրինակներից են՝ որոշում ընդունողների դիրքորոշումների փոփոխություն միջնորդության, անձնական կապերի, համակրանքի, համոզման միջոցով, լոբբիստական գործունեություն իրականացնելով և այլն: Բնականաբար ազդեցության նման արսենալի տիրապետում են (և ավելի լավ են տիրապետում) հզոր պետությունները: Լիբերալ տեսաբանները շեշտադրում են հզորության գործադրման դիվանագիտական, տնտեսական, առավել քիչ հարկադրողական միջոցների վրա, քանզի նրանք հզորությունը համարում են բազմաչափ կատեգորիա (ի տարբերություն ռեալիստների, որոնք հզորության առավել ռազմակենտրոն ընկալում ունեն): Ռեալիստները, ընդհակառակը, գտնում են, որ ուժի գործադրմանը պետք է դիմել հաճախակի և կանոնավոր կերպով:

Ուժի գործադրումը

Ուժը կամ ուժի գործադրման սպառնալիքը պետական միջոցների համալիրի մյուս կարևորագույն տարրն է՝ առանցքային դեր զբաղեցնելով ռեալիստական մտածողությունում: Երբ ուժը կամ սպառնալիքը գործադրվում է թիրախ պետությանը ստիպելու համար այսինչ քայլը կատարել կամ հրաժարվել, ետ կանգնել իր կողմից արդեն իսկ վարվող քաղաքականությունից, այս գործելակերպը կոչվում է հարկադրանք (compellence): Իսկ երբ ուժը կամ սպառնալիքը գործադրվում է թիրախ պետությանը ետ պահելու, հրաժարվելու իր կողմից պլանավորված, բայց դեռ չիրագործված քայլից, քաղաքականությունից, ապա նման գործելակերպը կոչվում է զսպում (deterrence):

Այսպես, հարկադրանքի ռազմավարության կիրառմամբ պետությունը ձգտում է թիրախ պետությանը ստիպել հրաժարվել, ետ

կանգնել իր կողմից վարվող քաղաքականությունից: ԱՄՆ-ը, ՄԱԿ-ը և բազմազգ կոալիցիայի անդամները փորձում էին ստիպել Սադդամ Հուսեյնին հրաժարվել Քուվեյթի հանդեպ ցուցաբերվող ագրեսիայի քաղաքականությունից՝ ուժի գործադրման սպառնալիքներ հնչեցնելով: Սկզբում ՄԱԿ-ը դատապարտում էր Սադդամի վարչակազմին և կոչ անում էտ կանգնել ագրեսիվ քաղաքականությունից: Այնուհետև, Իրաքի դեմ սկսեցին տնտեսական պատժամիջոցներ կիրառվել: Վերջապես իրականացվեց ԱՄՆ-ի և կոալիցիոն ռազմական ուժերի արագ մոբիլիզացիա ու տեղակայում, և Իրաքի վարչակազմի համար զորքերը Քուվեյթից դուրս բերման վերջնաժամկետ սահմանվեց: Ինչպես գիտենք, այս պարագայում ուժի կիրառման սպառնալիքը չօգնեց, և դաշնակիցները սպառնալիքից անցան կոնկրետ ռազմական գործողությունների:

Զսպման (դետերենտ) ռազմավարության կիրառմամբ սուբյեկտ պետությունը թիրախ պետությանը ստիպում է չիրականացնել, ետ կանգնել պլանավորված, բայց տակավին չձեռնարկված քայլից՝ խստագույնս պատժելու սպառնալիքով: Եթե թիրախ երկիրը, հաշվի առնելով խստագույնս պատժվելու հանգամանքը, չի ձեռնարկում իր կողմից ծրագրավորված քայլը, նշանակում է, որ դետերենտ ռազմավարությունը հաջողվում է, և այս դեպքում խուսափում են կոնֆլիկտից: Դետերենտ ռազմավարությունները ի ցույց են դրել իրենց արդյունավետությունը հատկապես միջուկային զենքերի ստեղծումից հետո: Քանզի միջուկային զենքը ունի կործանարար ուժ, ուստի միջուկային պետությունը լավագույնս կարող է կիրառել զսպման ռազմավարություն:

Ե՛վ հարկադրանքի, և՛ զսպման ռազմավարությունները արդյունավետ կիրառելու համար պետությունները պետք է մի քանի չափանիշներ բավարարեն: Նրանք պետք է ունենան իրենց կողմից գործադրվող ուժի սպառնալիքին ադեկվատ (համաչափ, համահունչ) ռազմական ուժ: Նրանք պետք է նաև սպառնալիքից կոնկրետ քայլերի անցնելու ունակ լինեն, այնքան, որ թիրախ պետություն-

ները հստակ գիտակցեն նրանց ունակությունը: Յուրաքանչյուր մարտավարության իրականացումը պետք է զուգորդվի համապատասխան ռազմական մարտակարգով: Այսպես, հարկադրանքի ռազմավարություն կիրառելիս պետությունը պետք է ուշադրությունը սևեռի առաջնահարվածի մարտակարգ զարգացնելու վրա (First-strike capability): Զսպման ռազմավարության պարագայում առաջնահերթ համարվում է պատասխան հարվածի մարտակարգն ու կարողությունը (Second-strike capability):

Հարկադրանքի ու զսպման ռազմավարությունները, այնուամենայնիվ, կարող են ձախողվել: Այս դեպքում ռազմական գործողությունները դառնում են գրեթե անխուսափելի: Բայց նույնիսկ պատերազմի սկսման դեպքում էլ պետությունները կանգնում են ուժի գործադրման միջոցների, ձևերի ընտրության առաջ: Նրանք պետք է ընտրություն կատարեն զինատեսակների հարցում (միջուկային^օ, թե^օ կոնվենցիոնալ/սովորական սպառազինություններ, ստրատեգիակա^օ, թե տակտիկական զենքեր), նշանակետերի տեսակների հարցում (քաղաքացիակա^օ, թե^օ ռազմական օբյեկտներ), հարվածի աշխարհագրական ընդգրկման/լուկուսի հարցում (քաղա^օք, երկիր^օ, տարածաշրջա^օ):

Արտաքին քաղաքական որոշումների ընդունման մոդելները

Արտաքին քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վերաբերյալ ռեալիստները, լիբերալները և ռադիկալները տարբեր մոտեցումներ, ընկալումներ ունեն:

Ռեալիստալ (ստատիստ) պետականակենտրոն մոդելը

Ռեալիստները գտնում են, որ արտաքին քաղաքական որոշումների ընդունումը ռացիոնալ գործելակերպի վրա հիմնված գործընթաց է, երբ պետության կողմից ընտրվում է արտաքին քաղաքականության այնպիսի ուղեգիծ, որը առավելագույնս է արտացոլում պետության ռազմավարական նպատակներն ու խնդիրները: Պետու-

թյունը ռեալիստների կողմից դիտվում է որպես ունիտար դերակատար, որն ունակ է հստակ ձևակերպել իր նպատակները՝ իր շահերին համահունչ կերպով, նպատակներին հասնելու տարբերակները և ունակ է սահմանել այն ալգորիթմը, որի միջոցով որոշում է թե որ տարբերակով առաջնորդվելը լավագույնս կնպաստի սահմանված նպատակին հասնելուն: Արտաքին քաղաքականության որոշումների ընդունման գործընթացը հիշեցնում է ուղղաձիգ հաջորդականության տեսք: Ուղղաձիգ հաջորդականությունը արտահայտվում է հետևյալ կերպ՝ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. 1. հստակորեն ձևակերպում է հիմնախնդիրը/պրոբլեմը, 2. սահմանում է նպատակները, 3. սահմանում է քաղաքական այլընտրանքները (նպատակներին հասնելու տարբերակները), 4. վերլուծում, վերհանում է այդ տարբերակների իրականացման համար պահանջվող ջանքերը, ներդրվելիք ռեսուրսները և ակնկալվող արդյունքները, 5. ընտրում է օպտիմալ տարբերակը, այսինքն այն տարբերակը, որն ապահովում է հնարավորինս առավելագույն արդյունք հնարավորինս նվազագույն ռեսուրսների գնով: Ներկայացված այս 5 քայլերի միջև առկա են տրամաբանական, պատճառահետևանքային կապեր, այդ պատճառով էլ համարվում է, որ արտաքին քաղաքական որոշումների ընդունման գործընթացը հիմնված է ռացիոնալ գործելակերպի վրա և որ այդ գործընթացն ունի ուղղաձիգ վեկտորի տեսք: Քանի որ որոշման կայացնողը պետությունն է, պետական իշխանությունը, որը այդ որոշումը կայացնելիս հիմնականում ինքնուրույն է, ուստի ըստ ռեալիստների, արտաքին քաղաքական որոշումների ընդունման մոդելը ռացիոնալ և պետականակենտրոն է: Որպես դեպքային ուսումնասիրություն՝ դիտենք 1996 թ. տեղի ունեցած միջադեպը, երբ Չինաստանը իրականացնում էր հրթիռային փորձարկումներ. ընդ որում հրթիռները նշանակետին հարվածում էին՝ թռնելով Թայվանի օդային տարածքի վրայով: Նման իրավիճակում Թայվանի կողմից համապատասխան արտաքին քաղաքական որոշման ընդունման գործընթացի մեկնաբանումը ռացիոնալ մոտեցմամբ

կունենա հետևյալ տեսքը (համարները համապատասխանում են վերոնշյալ համարներին).

1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ: Չինաստանի կողմից Թայվանի օդային տարածքի վրայով հրթիռների փորձարկումը սպառնալիք է Թայվանի ազգային անվտանգությանը (և դա այն պայմաններում, երբ Թայվանը նախապատրաստվում էր իր առաջին ժողովրդավարական ընտրություններին):

2. ՆՊԱՏԱԿԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ: Թայվանի, ինչպես նաև նրա դաշնակից ԱՄՆ-ի նպատակն էր Չինաստանի կողմից հրթիռային փորձարկումների անհապաղ դադարեցումը:

3. ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ: Նպատակին հասնելու համար Թայվանի ղեկավարությունն առաջադրել էր մի քանի տարբերակներ. ա. ոչինչ չձեռնարկել, բ. սպասել մինչև ընտրությունների ավարտը՝ հուսալով, որ Չինաստանը ընտրությունների ավարտից հետո կդադարեցնի այդ փորձարկումները (Թայվանին տիրանալու հույսը կորցնելով) գ. իրականացնել դիվանագիտական դեմարշ (եռանդուն բողոք), դ. հիմնախնդիրը տեղափոխել ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ, ե. ուժ կամ ուժով սպառնալիք գործադրել Չինաստանի վրա՝ հարվածելով նրա հրթիռներին, գ. Չինաստանի վրա գործադրել տնտեսական սանկցիաներ:

4. ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Թայվանի իշխանությունները կշռադատում, վերլուծում են նշված տարբերակների գինն ու արդյունավետությունը. այսպես օրինակ՝ չինական հրթիռներին հարվածելով միգուցե հիմնախնդիրը լուծվեր, բայց նման տարբերակն ամենայն հավանականությամբ կհանգեցներ Թայվանի կործանմանը:

5. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ: Թայվանը ընտրում է ԱՄՆ-ի աջակցությամբ դիվանագիտական բողոքի տարբերակը՝ ցույց տալով, որ ԱՄՆ-ը սատարում է Թայվանի ինքնիշխանությանը: Եթե Թայվանը ոչինչ չձեռնարկեր, դա կնշանակեր, որ ընդունելի է համարում Չինաստանի կողմից իրականացվող հրթիռային փորձարկում-

ները: Չինաստանի հանդեպ ռազմական գործողությունների ձեռնարկումը Թայվանի համար կարող էր ունենալ կործանարար հետևանքներ:

Բյուրոկրատիկ/կազմակերպակենտրոն մոդելը

Արտաքին քաղաքական որոշումների ընդունման գործընթացն այս մոդելով մեկնաբանելու պարագայում ընդունված է համարել, որ որոշումները կայացվում են ներպետական կազմակերպությունների (պետական կառույցների) և բյուրոկրատիաների կողմից որպես նրանց շահերի, տեսակետների արտահայտություն: Արտաքին քաղաքական որոշումների ընդունումը ստանդարտ արարողակարգային գործընթաց է, երբ որոշումներն ընդունվում են ստանդարտ ձևերով՝ հիմնվելով նախադեպերի վրա. նման պարագայում քաղաքականության մեջ խոշոր փոփոխությունների հավանականությունը խիստ քիչ է: Որոշման կայացումը հանդիսանում է բյուրոկրատական տարբեր կառույցների (օրինակ՝ տարբեր նախարարություններ), խմբերի, անհատների միջև շահերի և տեսակետների պայքարի արդյունք: Փաստորեն, որոշման ընդունումը կախված է կազմակերպության/բյուրոկրատիայի սուբյեկտների հզորության աստիճանից, ով ավելի հզոր է, նրա տեսակետն էլ գերակայում է, կամ նրա շահն էլ իրացվում է: Հարկավոր է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ այս մոդելը ենթադրում է որոշման կայացում գուտ պետական կառույցների միջև փոխհարաբերությունների արդյունքում:

Արտաքին առևտուրը քաղաքականության այն ոլորտն է, որտեղ քաղաքական որոշման ընդունման բյուրոկրատիկ/կազմակերպային մոդելն առավել կիրառելի, առավել տեսանելի է: Այսպես, երկար ժամանակ Հարավային Կորեան պրոտեկցիոնիստական քաղաքականություն էր վարում գյուղատնտեսական որոշ մթերքների ոլորտում. թույլ չտալով արտասահմանյան ծխախոտի, բրնձի և մսի մուտքը կորեական շուկա՝ այդպիսով խթանում էր հայրենական

արտադրությունը: 1980-ականներին ԱՄՆ-ը սկսեց մեծացնել քաղաքական ճնշումը Հարավային Կորեայի վրա, որպեսզի վերջինս ազատականացնի իր գյուղմթերքների շուկան: Հարավային Կորեայի գյուղատնտեսության և ձկնաբուծության նախարարությունները խիստ դեմ էին արտահայտվում այդ շուկայի ազատականացմանը՝ համարելով, որ այդ հանգամանքը կորեացի գյուղատնտեսներին, ֆերմերներին խիստ կվնասի: Բայց Առևտրի և արդյունաբերության, ինչպես և Ֆինանսների նախարարությունները ահազանգում էին, որ Հարավային Կորեայի կողմից նման փակ շուկայի քաղաքականությունը շարունակելու դեպքում ԱՄՆ-ն կարող է փակել ամերիկյան շուկան կորեական արդյունաբերական արտադրանքի առջև, ինչը կաթվածահար կաներ իրենց երկրի տնտեսությունը: Ի վերջո, Հարավային Կորեայի գյուղնախարարությունը որոշ չափով տեղի տվեց, ինչի արդյունքում ազատականացավ ծխախոտի շուկան: Բայց օրինակ՝ բրնձի շուկան շատ դանդաղ սկսեց ազատականանալ, քանզի բրինձ արտադրողները կազմակերպված պայքար մղեցին ազատականացման գործընթացի դեմ՝ գործելով միասնաբար և միավորված լինելով տարբեր շահերի խմբերի մեջ:

Արտաքին քաղաքական որոշումների ընդունումը բյուրոկրատիկ/կազմակերպային մոդելով տեղի է ունենում առավելապես ոչ ճգնաժամային իրավիճակների պարագայում, երբ, օրինակ, օրակարգում դրված չէ պետության անվտանգության հարցը: Ոչ ճգնաժամային իրավիճակներում ժամանակի խիստ սղության, վերջնաժամկետների խնդիր չկա, ուստի որոշման կայացումը տեղի է ունենում պետական կառույցների միջև քննարկումների, մրցակցության, պայքարի արդյունքում, ինչը կարող է տևական գործընթաց լինել: Նրանք կարող են երկար ժամանակ քննարկել, թե ընդունվելիք որոշումը որքանով կարող է հնարավորինս արտահայտել բոլոր շահագրգիռ կողմերի ցանկություններն ու տեսակետները: Մինչդեռ ճգնաժամային իրավիճակներում, երբ պահանջվում է տարբեր հրատապ խնդիրների հնարավորինս շուտափույթ լուծում,

որոշումը սովորաբար չի կայացվում պետական կառույցների տեսակետների մրցակցության արդյունքում. այս պարագայում, ելնելով պահի հրամայականից, կիրառվում է ռացիոնալ/պետականակենտրոն մոդելը:

Պյուրալիստ մոդելը

Արտաքին քաղաքական որոշումների ընդունման պյուրալիստ մոդելն ձևաչափ է, որտեղ այդ որոշումներն ընդունվում են ներպետական, բայց ոչ պետական դերակատարների՝ կազմակերպությունների, շահերի, խմբերի, բազմազգ կորպորացիաների, հասարակական շարժումների, հոսանքների միջև սակարկումների, բանակցությունների, մրցակցության ու համաձայնեցման արդյունքում: Կրկին պետք է նշենք, որ այս կարգի դերակատարների դերը արտաքին քաղաքական որոշումների ընդունման հարցում առավել ընդգծվում, կարևորվում է հատկապես ոչ ճգնաժամային, ոչ հրատապ իրավիճակներում և առավելապես տնտեսական բնույթի խնդիրների դեպքում: Բնականաբար անվիճելի է, որ Ֆրանսիայի գինեգործներին հաջողվում է կանխել հունական կամ իսպանական էժանագին գինու մուտքը Ֆրանսիա՝ քարոզչության տարբեր միջոցներ կիրառելով: Անկասկած ԱՄՆ-ի կաշեգործական արդյունաբերական ձեռնարկությունները բավականին հզոր են բրազիլական արտադրության կոշիկների մուտքն ԱՄՆ սահմանափակելու գործում, չնայած այն բանին, որ ԱՄՆ-ի կառավարության պաշտոնական դիրքորոշումն է խթանել զարգացող երկրների ապրանքների ներմուծումը:

Հասարակական խմբերը տարբեր լծակներ են գործադրում իրենց շահերից բխող որոշումների ընդունման համար: Նրանք ի գործ են մտնում լրատվամիջոցներին, ձևավորել հասարակական կարծիք, լոբբինգ իրականացնել որոշումների ընդունման պատասխանատու պետական գործակալությունների նկատմամբ, ազդեցություն գործել բարձրագույն ատյանների, ներկայացուցչական մարմինների (կառավարություն, պառլամենտ) վրա, կազմակերպել

համանման շահեր հետապնդող հասարակական խմբերի միջև կայուն հաղորդակցություն թեկուզ բազմազգ հենքի վրա (օրինակ՝ կապված տարածաշրջանի էկոմիջավայրն աղտոտող գործարանի գործունեությունն արգելափակելու հետ): Ընդունվող/ընդունվելիք որոշումն արտահայտում է հասարակական տարբեր խմբերի շահերը, ինչը բնորոշ է լիբերալ մտածողությանը:

Թեև ռեալիստներն ընդունում են արտաքին քաղաքական որոշումների կայացման ռացիոնալ մոդելը, և լիբերալներն ընդունում են բյուրոկրատիկ/կազմակերպային և պլյուրալիստ մոդելները, ռադիկալների մեծ մասը հակված չեն պատկերացնելու, որ պետական որոշում կայացնողները կա՛մ ինքնուրույնություն, կա՛մ էլ ընտրության հնարավորություն ունեն որոշումների կայացման հարցում: Ռադիկալ հայեցակետի համաձայն՝ կապիտալիստական պետությունների շահերը պայմանավորված են միջազգային կապիտալիստական համակարգի կառուցվածքով, և նրանց որոշումները թելադրվում են տիրապետող դասակարգի տնտեսական հրամայականներով: Քանի որ այդ տիրապետող դասակարգին հակակշռող լուրջ ուժ գրեթե չի լինում, ապա որոշումների ընդունման պլյուրալիստ մոդելի մասին խոսել, ըստ ռադիկալների, անիմաստ է:

Հանձնարարվող գրականություն

1. Chris Brown with Kirsten Ainley, *Understanding International Relations*, 3rd edition, Palgrave Macmillan, 2005, pp. 63-79
2. John Hobson, *The State and International Relations*, Cambridge University Press, 2003
3. Fred Chernoff, *Theory and Metatheory in International Relations: Concepts and Contending Accounts*, Palgrave Macmillan, 2007, pp. 8-77
4. Ole Holsti, *Theories of International Relations*, Essay, pp. 20-32

Դասախոսություն 10
Միջազգային հարաբերությունների վերլուծության
ինդիվիդուալ մակարդակը

Արտաքին քաղաքական գործընթացում դերակատարություն
հանդես բերող պետական անձինք - լիդերներ (էլիտաներ)

Այն հարցին, թե արդյոք անձի/ինդիվիդուալ գործոնը կարող է լուրջ դեր խաղալ արտաքին քաղաքականության մեջ, կարելի է պատասխանել, օրինակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երբ փոխվում են պետությունների լիդերները, ապա այդ պետություններից ակնկալվում են արտաքին քաղաքականության փոփոխություններ ևս: Այսպես, 1965 թ. Ռումինիայի կոմունիստական կուսակցության ղեկավար դարձավ Նիկոլայ Չաուշեսկուն: Նրա կառավարման 22 տարիների ընթացքում Ռումինիայի արտաքին քաղաքականության մեջ էական փոփոխություններ տեղի ունեցան: Գնալով նվազեց Ռումինիայի կախվածությունը ԽՍՀՄ-ից: Չնայած ԽՍՀՄ-ի բացահայտ առարկություններին՝ Ռումինիան պահպանեց դիվանագիտական հարաբերություններն Իսրայելի հետ 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո: Նույն թվականին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հետ՝ այդ հարցում առաջ անցնելով ԽՍՀՄ-ից: Չաուշեսկուն խստորեն դատապարտեց Վարշավյան պակտի կազմակերպության միացյալ զինուժի 1968 թ. ներխուժումը Չեխոսլովակիա և սերտացրեց Ռումինիայի հարաբերությունները մյուս «այլախոհ» երկրի՝ Հարավսլավիայի հետ: ԽՍՀՄ վերջին առաջնորդ Միխայիլ Գորբաչովի օրինակը նույնպես վկայում է, որ արտաքին քաղաքականության մեջ լիդերի դերակատարության հանգամանքը խիստ կարևոր ու զգալի է, որ լիդերը կարող է մեծապես փոխել որևէ պետության արտաքին քաղաքական կուրսը:

Լիդերից բացի, խիստ կարևորվում է նաև էլիտայի դերը արտաքին քաղաքականության բնագավառում: Այս հանգամանքը կարևորվում է հատկապես կոնստրուկտիվիստական մտածողության մեջ: Կոնստրուկտիվիզմի ուղղության ներկայացուցիչ Ռոբերտ Հերմանի կարծիքով գորբաչովյան վերակառուցման, «նոր մտածողության» ձևավորման գործում մեծ դեր խաղաց Գորբաչովի վարչակազմում արևմտյան կողմնորոշում ունեցող, նոր գաղափարներով տոգորված ռեֆորմիստական էլիտան:

Լիդերի և էլիտայի ազդեցության չափումը

Արտաքին քաղաքական գործընթացների վրա լիդերի և էլիտայի ազդեցությունը չափվում է 2 տեսակի չափորոշիչներով՝ անձնային և ոչ անձնային (արտաքին): Երբ լիդերը կամ էլիտան արտաքին քաղաքական գործընթացի վրա ազդեցություն է գործում գլխավորապես անձնային հատկանիշների գործադրման միջոցով, ապա այս դեպքում գործ ունենք անձնային չափորոշիչների հետ: Երբ էլիտան այդպիսի ազդեցություն է գործում գլխավորապես ոչ իր անձնային հատկանիշների գործադրման միջոցով (այլ, օրինակ, երբ ազդեցություն գործելու հնարավորություն տալիս է ուժերի փոխդասավորությունը, արտաքին քաղաքական բարենպաստ իրավիճակը, երկրի քաղաքական համակարգի կառուցվածքը և այլն), ապա գործ ունենք ոչ անձնային չափորոշիչների հետ:

Ոչ անձնային չափորոշիչներ: Այդ չափորոշիչներից մեկը համարվում է երկրի *քաղաքական համակարգի անկայունությունը կամ ճգնաժամային վիճակը:* Այսպես, Ջորջ Վաշինգտոնը ԱՄՆ-ում, Մոհանդաս Գանդին Հնդկաստանում, Վ. Լենինը Խորհրդային Ռուսաստանում լրջագույն ազդեցություն ունեին ներքին և արտաքին քաղաքական գործընթացների վրա գերազանցապես այն պատճառով, որ այդ երկրների քաղաքական համակարգերն ու կառավարման կառույցները նոր էին ձևավորվում: Ադոլֆ Հիտլերի, Ֆրանկլին Ռուզվելտի, Միխայիլ Գորբաչովի այդչափ մեծ ազդեցությունը բա-

ցատրվում էր նախ և առաջ այն հանգամանքով, որ իրենց երկրները գտնվում էին քաղաքական և տնտեսական ճգնաժամի ճիրաններում: Մյուս չափորոշիչը հանդիսանում է *լիդերի գործունեության վրա ինստիտուցիոնալ սահմանափակումների բացակայությունը կամ սակավությունը*, ինչը նշանակում է իրավիճակ, երբ քաղաքական համակարգի ինստիտուտները (քաղաքացիական հասարակություն, պառլամենտ, քաղաքական ուժեր և այլն) ունակ չեն վերահսկել լիդերի վարքագիծը: Նման իրավիճակ առկա է դիկտատուրայի պայմաններում (Օլիվեր Կրոմվել, Նապոլեոն Բոնապարտ), երբ բացակայում է քաղաքական ընդդիմությունը կամ հասարակական վերահսկողությունը, ինչի պարագայում լիդերն ուրվագծում և իրականացնում է արտաքին քաղաքական ուղեգիծը լիարժեք ինքնուրույն: Մյուս կողմից *լիդերի կամ էլիտայի չափազանց մեծ ծավալի լեգիտիմությունը* նույնպես կարող է հանդիսանալ արտաքին քաղաքական գործընթացի վրա նրանց մեծ ազդեցության չափորոշիչ. այս պարագայում ևս լիդերը, հաշվի առնելով հասարակության կողմից իր հանդեպ վստահության բարձր մակարդակը, կարող է երբեմն հաշվի չնստել քաղաքական այլ ակտորների առարկությունների հետ: Այսպես օրինակ՝ թեև ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռիչարդ Նիքսոնի հանրապետական վարչակազմն ու ԱՄՆ կոնգրեսը խիստ հակակոմունիստական ուղղվածություն ունեին և դեմ էին կոմունիստական պետությունների հետ ԱՄՆ-ի հարաբերությունների զարգացմանը, այդուհանդերձ Նիքսոնը 1972 թ. իր արտաքին քաղաքական հարցերով խորհրդական շենրի Քիսսինջերին գաղտնի գործուղեց Չինաստան՝ վարչապետ Չոու Էն Լայի հետ հանդիպումներ ունենալու համար: Նիքսոնը նաև ԽՍՀՄ-ի հետ լարված հարաբերությունները թուլացնելու ուղեգիծ էր որդեգրել: Լիդերի դերն արտաքին քաղաքական գործընթացում ընդգծվում է նաև *արտակարգ, ճգնաժամային իրավիճակների* պարագայում, երբ այդ իրավիճակներին արձագանքելու համար պահանջվում են ոչ ստանդարտ, կանոնակարգով չնախատեսված միջոցներ: Որպես օրինակ կարելի

է քերել 1962 թ. կարիքյան ճգնաժամը (կապված այն բանի հետ, որ ԽՍՀՄ-ի կողմից Կուբայում միջին հեռահարության հրթիռային համակարգերի տեղադրման փաստը ԱՄՆ հետախուզության կողմից բացահայտվելուց հետո խորհրդաամերիկյան հարաբերությունները հասան լարվածության գագաթնակետին՝ սպառնալով վերածվել կործանիչ պատերազմի), երբ հիմնականում պրեզիդենտ Ջոն Քենեդու վճռական գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ շտկել ստեղծված իրավիճակը:

Անձնային չափոփոշիչներ: Արտաքին քաղաքական որոշումների ընդունման հարցում խիստ կարևորվում է նաև լիդերի անձնական բնութագրիչները՝ հակումները, աշխարհայացքը, զգացմունքայնության աստիճանը և այլն: Հաճախ է պատահում, որ երկու պետություններում առկա համանման քաղաքական, սոցիալ-տնտեսական կացությունների պարագայում մի պետության լիդերը մյուսի համեմատ ազդեցության մեծ չափաբաժին ունենա իր երկրի արտաքին և ներքին քաղաքական գործընթացների, որոշումների կայացման վրա: Քաղաքական հոգեբան Մարգրեթ Հերմանն առանձնացրել է մարդկային անհատականության մի շարք գծեր, որոնք ազդում են լիդերի կողմից արտաքին քաղաքական որոշումների ընդունման վրա: Քանզի Հերմանը հնարավորություն չի ունեցել պետությունների լիդերների հետ հոգեբանական թեստեր անցկացնել, նա 1959-68 թթ. միջև ընկած ժամանակահատվածում հավաքել է 38 երկրների 80 լիդերների տված հարցազրույցներ, ելույթներ և մամուլի ասուլիսներ, որոնց համադրումից ու վերլուծությունից նա առանձնացրել է անհատականության հետևյալ բնորոշիչ գծերը. ազգայնականություն (նացիոնալիզմ – ազգի հանդեպ ուժեղ զգացմունքային կապվածություն, ազգային արժանապատվության բարձր մակարդակ), վերահսկողական ընկալունակություն (հավատ իրավիճակը վերահսկելու հարցում սեփական կարողությունների հանդեպ), ուժի ձգտում (ձգտում հասնելու ազդեցության այլոց հանդեպ), բարեկամներ ձեռք քերելու հակվածություն, պլյուրալիստական հա-

կումներ (հակում կամ կարողություն այլոց հետ քննարկելու ինչ-ինչ հարցեր, ռազմավարություն, տակտիկա), ինքնավստահություն (սեփական անձի դերի կարևորում, պատրաստակամություն ընդունելու ցանկացած անակնկալ մարտահրավեր): Կախված նրանից, թե նշված ինդիվիդուալ գծերը որքան են արտահայտված, ընդգծված, ուժեղ կամ թույլ մարդկանց մոտ, Հերմանն առանձնացրել է լիդերի անհատականության 2 տիպ: Առաջինն անկախ լիդերն է, որին բնորոշ են. ազգայնականության բարձր մակարդակ, վերահսկողական բարձր ընկալունակություն, ուժի ձգտման մեծ հակվածություն, պլյուրալիստական հակումների բացակայություն կամ ցածր մակարդակ, ուրիշների հանդեպ անվստահության բարձր մակարդակ: Երկրորդ տիպը գործակցող լիդերն է, որին էլ բնորոշ են. ազգայնականության ցածր մակարդակ, վերահսկողական ցածր ընկալունակություն, բարեկամներ ձեռք բերելու բարձր հակվածություն, պլյուրալիստական բարձր հակվածություն, ուրիշների հանդեպ անվստահության ցածր մակարդակ:

Մարդկային էությունը/բնույթը և միջազգային հարաբերությունները

Առաջին հարցը, որ ծագում է այս երկու երևույթների փոխկապակցվածության առնչությամբ, հարցն է այն մասին, թե մարդկային էության հատկանիշներն ինչպես են անդրադառնում արտաքին քաղաքականության վրա: Այդ հարցին լույս սփռելու համար առաջին քայլը, որ պետք է անենք, դա հասկանալն է այն, որ լիարժեք ռացիոնալ որոշումներ ընդունելու համար մարդկային էությունը իստ սահմանափակ հնարավորություններ ունի. այսինքն՝ մարդն ունակ չէ ընդունել անհրաժեշտ քանակի ինֆորմացիա, մշակել այդ ինֆորմացիան և արդյունքում կայացնել օպտիմալ (նվազագույն ռեսուրսների ներդրմամբ առավելագույն օգուտ ապահովող) որոշում: Այս փաստարկն ավելի է ամրապնդվում նաև երբ հաշվի ենք առնում այն, որ մարդու կողմից որոշման կայացման գործընթացում երբեմն

նրա հույզերն ու զգացմունքներն են (և ոչ բանականությունը) որոշիչ դեր խաղում: Ստորև կվորձենք դիտարկել մարդկային էության այն հատկանիշները, որոնք ազդեցություն են գործում արտաքին քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա՝ սահմանափակելով այդ որոշումների կայացման ռացիոնալ գործելակերպը: Խոսքը գնում է որոշումների ընդունման կոգնիտիվ (իմացական/ճանաչողական), հոգեբանական և կենսաբանական գործոնների մասին:

Որոշումների կայացման կոգնիտիվ բնույթը/գործոնները: Որոշումների կայացման կոգնիտիվ բնույթը/գործոնները ասելով նկատի ենք ունենում հանգամանք, երբ որոշումներն ընդունվում են առկա ինֆորմացիայի սահմանափակության պայմաններում, այսինքն, երբ որոշումներն ընդունվում են՝ հիմնվելով միայն այն ինֆորմացիայի վրա, որը հասանելի է մարդուն, որոշում կայացնողին: Բնականաբար որքան շատ ինֆորմացիայի մշակման պայմաններում կայացվի արտաքին քաղաքական որոշումը, այնքան այդ որոշումը շատ ռացիոնալիզմով օժտված կլինի: Եվ քանի որ գործնականում անհնար է, որ մարդը կարողանա տիրապետել տվյալ ոլորտում առկա ամբողջ տեղեկատվությանը, ուստի նա ստիպված է որոշում կայացնել իր իմացածի, տիրապետածի չափով: Հետևապես որոշումների կայացման կոգնիտիվ գործոնները հաճախ անվանվում են «սահմանափակ ռացիոնալության գործոններ»: Ընդ որում, գոյություն ունեն ռացիոնալիզմը սահմանափակող արտաքին և ներքին գործոններ: Արտաքին գործոնները վերաբերում են տեղեկատվության անհասանելիությանը կամ սխալ տեղեկատվությանը (այսինքն՝ որոշումների ռացիոնալությունը սահմանափակվում է, երբ մարդուն հասանելի չէ անհրաժեշտ տեղեկատվություն, կամ երբ մատուցվող տեղեկատվությունը սխալ է), ներքին գործոններն առնչվում են տեղեկատվության ընդունման և մշակման գործում մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունների սահմանափակությանը (այսինքն որոշումների ռացիոնալությունը սահմանափակվում է, երբ մարդը (որոշում կայացնողը) չի կարողանում ընդունել, ընկալել կամ մշակել անհրա-

Ժեշտ քանակի ինֆորմացիա, բայց այդ ինֆորմացիան նրան հասանելի է):

Արտաքին քաղաքական որոշումները ևս կայացվում են սահմանափակ ռացիոնալության պայմաններում: Կոզնիտիվ սահմանափակումների պայմաններում որոշում ընդունելու համար որոշում կայացնողը կիրառում է մի շարք հնարներ: Դրանցից են.

- **Կոզնիտիվ դիսոնանսի հաղթահարման հնարը**

Կոզնիտիվ դիսոնանսը որոշում կայացնողի այնպիսի զգացում, հոգեվիճակ է, երբ մարդը մի կողմից հետապնդում է կարևոր մի նպատակ և մյուս կողմից գիտակցում է, որ չի կարողանում գտնել իր համար խիստ ցանկալի այդ նպատակին տանող ոչ ռիսկային, մատչելի ուղին, կամ էլ գիտակցում է, որ այդ նպատակին հասնելու իրեն հայտնի ուղին/ները ռիսկային, դժվարամատչելի է/են: Ի վերջո, ընտրություն կատարելով նպատակին հասնելու այդ ռիսկային, դժվարամատչելի միջոցների մեջ, լիդերը իր որոշման կայացման կոզնիտիվ դիսոնանսը հաղթահարում է որոշ հնարների միջոցով. սկսում է ամեն փաստարկ օգտագործել իր որոշումն արդարացնելու համար, տարբեր պատճառաբանություններով դիմակայում է իր խորհրդատուների կամ ենթակաների կարծիքներին, անտեսում է նրանց զգուշացումները, մի խոսքով անում է ամեն ինչ իր որոշման՝ տվյալ պահին միակ ճիշտը լինելու հարցում ինքն իրեն և մյուսներին համոզելու համար¹⁴:

- **Որոշման առարկա հանդիսացող հարցերի նշանակության նվազեցման հնարը**

Առավել կարևոր նշանակություն ունեցող հարցերի շուրջ որոշում ընդունելը տեղեկատվության սահմանափակության պայմաններում խիստ ռիսկային և պատասխանատու քայլ է: Ուստի մեծ բարդություններից ապահովագրվելու համար լիդերը որոշումներ է

¹⁴ Կոզնիտիվ դիսոնանսի վառ օրինակ է Եզոպոսի հայտնի առակն այն մասին, որ երբ աղվեսը տեսնում է, որ չի գտնում խաղողին հասնելու միջոցը, թողնում է խաղողն ուտելու միտքը և իր որոշումն արդարացնում խաղողի խակ լինելով:

կայացնում այդ կարևոր նշանակության խնդրին առնչվող առավել երկրորդական նշանակության հարցերի շուրջ: Օրինակ, երբ պետության լիդերը կանգնած է ռազմական գործողություններ սկսելու կամ չսկսելու երկրնտրանքի առաջ, նա բավարարվում է լրացուցիչ սպառնալիքներ տեղալով, կամ դիվանագիտական պայքար սկսելով ագրեսոր պետության դեմ:

- **Էվրիստիկ հնարների կիրառումը**

Էվրիստիկան խնդրալուծման այնպիսի գործելակերպ է, որը հիմնված է համանման խնդիրների լուծման հետ կապված պատմական փորձի, անձնական փորձառության, գոյություն ունեցող սովորությանին նորմերի և այլնի վրա: Որևիցե հարցի շուրջ որոշում ընդունելիս լիդերը, մանրամասն տեղեկատվություն հավաքելուց, վերլուծելուց խուսափելու նպատակով (նամանավանդ, երբ ինֆորմացիայի հավաքագրումն ու մշակումը երկարատև է, իսկ որոշում կայացնողը քիչ ժամանակ ունի), կիրառում է որոշման կայացման էվրիստիկ գործելակերպը: Այսպես, 1938 թ. Մյունխենյան գործարքի ձախողումը (երբ Հիտլերին խաղաղեցնելու նպատակով Չեխիային պատկանող Սուդետական մարզը տրվեց Գերմանիային) աչքի առջև ունենալով՝ միջազգային հանրությունը թույլ չտվեց, որ 1990 թ. Իրաքի կողմից Քուվեյթի գավթումն անպատիժ մնա:

Հոգեբանական գործոնները: Միջազգային հարաբերություններում (արտաքին քաղաքականության մեջ) մարդկային էության հատկանիշների դրսևորումները որոշ տեսություններ բացատրում են հոգեբանական գործոններով: Տեսական նման մոտեցումներից է ֆրոյստրացիայի¹⁵ ագրեսիայի տեսությունը, ըստ որի, ֆրոյստրացիոն իրավիճակներում գտնվող հասարակությունները դառնում են ագրեսիվ, ագրեսիվությունը դրսևորվում է հասարակական մակարդակում, ողջ հասարակության կտրվածքով: Գերմանական հասա-

¹⁵ Ֆրոյստրացիա նշանակում է գայրույթ, հուսախաբություն: Այն մարդու էմոցիոնալ արձագանքն է նրա կամքի իրականացմանը խոչընդոտող, սահմանափակող հանգամանքների դեմ:

րակության ֆրուստրացված վիճակը այդ հասարակությանը հեշտությամբ դարձրեց ազրեսիվ, նպաստեց նացիզմի ծավալմանը և հիտլերականների իշխանության գալուն: Առաջին աշխարհամարտի վերջին շրջանում, երբ Գերմանիան հաղթել էր Ռուսաստանին (պարտադրելով նրան Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը), և երբ գերմանական զորքերը տակավին գտնվում էին Ֆրանսիայում, գերմանական հասարակության համար անակնկալ կերպով իրենց պետությունը ենթարկվեց կապիտուլյացիայի: Այնուհետև դաշնակիցները Գերմանիայի վրա դրեցին բազմամիլիարդանոց ռազմատուգանքի (ռեպարացիա) բեռը, երկիրը սկսեց տնտեսական վայրէջք ապրել, ինֆլյացիան (փողի արժեզրկումը) աճում էր օրավուր և հասնում ահռելի չափերի, ծայր էին առնում գործազրկությունը, սովը: Կայսրության փլատակների վրա դեմոկրատական սկզբունքներով ձևավորված Վայմարյան Հանրապետությունը (իշխանության նստավայրը Վայմար քաղաքն էր) պրեզիդենտ Հինդենբուրգի գլխավորությամբ չէր կարողանում հաղթահարել տնտեսության քայքայումը: Այս ամենը պարարտ հող էր նացիզմի վերելքի համար, երբ ստեղծված կացության մեջ մեղքը բարդվում էր հրեաների, բոլշևիկների վրա, միաժամանակ հասարակությունը սնուցվում էր ռևանշիստական տրամադրություններով. հզորանալ, գրավել ողջ աշխարհը: Իր հայտնի «Մայն կամպֆ» (իմ պայքարը) աշխատությունում Հիտլերը ներկայացնում էր այն երկրնտրանքը, որ կա՛մ Գերմանիան պիտի դառնա հզորագույն գերտերություն, կա՛մ պիտի գոյություն չունենա: Ինչպես հասարակության, այնպես էլ որոշում կայացնողների հոգեբանական նման վիճակի պարագայում էլ մշակվում և իրականացվում էր նացիստական Գերմանիայի արտաքին քաղաքականությունը:

Որոշումների կայացման կենսաբանական գործոնները: Մարդու քաղաքական վարքագիծն ուսումնասիրվում է նաև բիոլոգիական տեսությունների կողմից, այդ տեսությունները մարդու կենսաբանական հատկանիշների դիրքերից են մեկնաբանում մարդու

վարքագծի պատճառները, դրսևորման ձևերը: Մարդու վարքագծի բացահայտման պրոբլեմներից մեկը «բնություն, թե դաստիարակություն» ("nature versus nurture") հակադրությունն է, երբ փորձ է կատարվում մարդու վարքագիծը բացատրել մի կողմից նրա կենսաբանական բնագոյների, հակումների, զգացական դրդապատճառների ("nature"), մյուս կողմից նրա սոցիալական հատկանիշների, բանականության, ինտելեկտի ("nurture") հիման վրա: Կենսաբաղաբանությունը (բիոպոլիտիկա) ուսումնասիրում է մարդու կենսաբանական էության և նրա քաղաքական վարքագծի փոխառնչությունները, այսինքն՝ կենտրոնանում է այն բանի վրա, թե մարդու կենսաբանական էության որ հատկանիշներն ինչպես են ազդում նրա քաղաքական վարքագծի դրսևորման վրա: Այսպես օրինակ, էթոլոգ¹⁶ գիտնականները պետությունների միջև տարածքի համար տեղի ունեցող պատերազմները երբեմն վերագրում են տարածքի համար կռվելու կենդանական բնագոյին: Որոշ լիդերների վարքաբանության ուսումնասիրության արդյունքում էթոլոգները գալիս են եզրակացության, որ լիդերի կողմից իր պետության ներգրավումը հզորության համար պայքարի մեջ ունի իր ենթագիտակցական բացատրությունը. արուի ձգտումը՝ հզորանալու, հզոր երևալու, ինչպես նաև գոտեմարտելու, պայմանավորված է էգին հրապուրելու բնագորով: Տղամարդիկ, ինչպես և կենդանական աշխարհի մյուս արուներկայացուցիչները ավելի ագրեսիվ են, պատերազմելու ավելի են հակված, քան կանայք, ինչպես և էգ կենդանիները: Եվ քանի որ շատ քաղաքագետների հետաքրքրել է այն հարցը, թե որքան շատ կանայք լիդերներ դառնան իրենց պետություններում, արդյո՞ք այնքան չեն մեծանա խաղաղության հնարավորությունները, շատերն էլ դրականորեն են պատասխանում այս հարցադրմանը:

¹⁶ Էթոլոգիան ուսումնասիրում է մարդու և կենդանու համեմատական վարքաբանությունը՝ բնագոյների նույնության վրա շեշտադրում կատարելով՝ էթոլոգիան ցույց է տալիս նաև մարդու և կենդանու վարքագծերի նույնությունները:

Հանձնարարվող գրականություն

1. Chris Brown with Kirsten Ainley, Understanding International Relations, 3rd edition, Palgrave Macmillan, 2005, pp. 207-31
2. Kenneth Waltz, Man, the State and War: a theoretical analysis, Columbia University Press, NY, 2001, pp. 16-79
3. Betty Glad, Personality, Political and Group Process Variables in Foreign Policy Decision Making: Jimmy Carter's Handling of the Iranian Hostage Crisis, International Political Science Review 10 (1989)
4. Margaret Hermann, Explaining Foreign Policy Behavior Using the Personal Characteristics of Political Leaders, International Studies Quarterly, 24:1 (March 1980) pp.7-46
5. Karen Mingst, Essentials of International Relations, 2nd edition, W.W. Norton&Company, NY-London, 2003, pp. 131-51

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 6,25:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ՎՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014